



INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN NAS RA

APPLIED LINGUISTICS ISSUES

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН РА

ВОПРОСЫ ПРИКЛАДНОЙ ЛИНГВИСТИКИ

Yerevan – 2025

Ереван – 2025

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Գ

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 81՝33
ԳՄԴ 81.1
Կ 530

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ Բ.Գ.Թ. Գ. Գրիգորյան

Կ 530 Կիրառական լեզվաբանության հարցեր.- Եր. ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2025.
Պրակ Գ.- 185 էջ:

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատա-
կիցների աշխատանքները, որոնք 2018թ. հրապարակվել են տար-
բեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյու-
թերը վերաբերում են կիրառական լեզվաբանության ուսումնա-
սիրության խնդիրներին: Ներկայացված նյութը կարող է օգտա-
գործվել դպրոցական և բուհական ուսումնական դասընթաց-
ներում, ինչպես նաև հայերենով հետաքրքրված անձանց:

ՀՏԴ 81՝33
ԳՄԴ 81.1

ISBN 978-9939-970-10-3

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակչություն, 2025

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը, որի աշխատանքներն ընթացել են հետազոտական մի քանի ուղղություններով (լեզվաբանական հոդվածների և մենագրությունների մատենագիտության կազմում, կիրառական և համակարգչային լեզվաբանության արդի խնդիրների ուսումնասիրություն, փորձառական հնչյունական հետազոտություններ և այլն), ընդլայնել է իր սահմանները՝ ներառելով նաև երկլեզվյան զուգադրությունների, նյարդալեզվաբանության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական աշխատանքներ:

Կիրառական լեզվաբանության արդի գիտական հարցերի վերաբերյալ գրվել են հոդվածներ՝ շրջուն շարադասության դեպքում խոսակցական լեզվում վաղակատար դերբայի չ-ի անկման, Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի իմաստաբանական վերլուծության, Հովհան Իմաստասեր Օձնեցու երկերում վերլուծական բայերի գործածության, նոր բառերի մեքենական որոնման խնդիրների, «Արևելահայերենի ազգային կորպուսի» կառուցվածքի և ընդգրկման, կորպուսային լեզվաբանության կիրառական ոլորտների, տեքստի էլեկտրոնային սրբագրման և ժամանակակից հայերենի բառակազմության ձևային նկարագրության խնդիրների, գրաբարում բայասեռի կարգի, Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց» երկում ռազմական բառապաշարի վերաբերյալ:

Վիճակագրական լեզվաբանության ոլորում ուսումնասիրվել են *Այո-ոչ* հարցումները Ղուկասի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում:

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը հրապարակում է աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Կիրառական լեզվաբանության հարցեր» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության: Շարքի երրորդ պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Գ.Գրիգորյանի, Օ. Խաչատրյանի, Ֆ. Հակոբյանի, Լ. Հովսեփյանի, Ս. Ղուկասյանի աշխատանքները, որոնք 2018թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում և ժողովածուներում:

Գ.Գրիգորյան

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ ՎԱՂԱԿՍՏԱՐ ԴԵՐԲՍՅԻ Լ-Ի
ԱՆԿՈՒՄԸ ՇՐՋՈՒՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ
(փորձառական հետազոտություն)**

Գրիգորյան Գայանե

Հնչյունների անկումը կամ կորուստը հնչող խոսքում տարածված երևույթ է: Հնչյունի անկումը, ըստ Լեզվաբանական բառարանի սահմանման, «հնչյունափոխական այն երևույթն է, երբ հնչյունական շղթայի մեջ մտնող այլ հնչյունների ազդեցությամբ «...» կամ այլ՝ առայժմ անհայտ պատճառներով... բառերի որոշ հնչյուններ (հնչույթներ) հնչյունաշղթայից դուրս են ընկնում, այլևս չեն արտասանվում, ինչպես՝ գրաբարի բառավերջի յ-ն ձայնավորից հետո (ծառայ>ծառա, սատանայ>սատանա), արդի հայերենում՝ անկողին>անկողնակալ...»: Քանի որ մեզ հետաքրքրում է բառավերջի հնչյունի անկումը, ապա կխոսենք միայն ապոկոպի ((հուն. ἀποκοπή կրճատում, αποκοπή -«уচ্ছেние») մասին, որը շատ տարածված է լեզուներում. անգլերենում և ֆրանսերենում բառավերջի շատ հնչյուններ չեն արտասանվում:

Այսօրվա հնչող խոսակցական լեզվում ևս հանդիպում է հնչյունների անկում, որի օրինակներից մեկը վաղակատարի Լ-ի անկումն է շրջուն շարադասության ժամանակ: Այս երևույթը պարզաբանելու համար թերևս հարցին պետք է մոտենալ 2 տեսանկյունից՝ տարածամանակյա՝ բարբառների ազդեցությամբ պայմանավորված, և համաժամանակյա՝ արտասանության թուլացմամբ, որը պայմանավորված է ինչ-ինչ հանգամանքներով:

Հիմնականում արևմտյան բարբառներում շրջուն շարադասության ժամանակ առկա է վաղակատարի **ր** կամ **լ** վերջավորության անկում:

¹ **Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան**, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1975, էջ 188:

² Նույն տեղում, էջ 287:

Գեղցի Համբոյի տունը կրոնիվ էր ընգէ: (Կարնո բարբառ)
Գեղացի Համբոյ տուն կոնիվ էր հնգէ: (Մարտունու բարբառ)
Գձղցի Համբոյ տուն կոնիվ էր հրնգէ: (Վարդէնիսի բարբառ)
Գեղացի Համբոյի տուն կրոնիվ էր յընգի: (Մշո բարբառ)
Կեղացը Համփրյուն դօնը զըռըէվ էյ յընգի: (Զեյթունի բարբառ)

-Ի՞նչ ես բերե:

-Մաման լավ հաց է թիւե:

(Հմմտ՝ ուղիղ ձևում՝ Քոռացեր/լ եմ):

Հաշվի առնելով բարբառների ազդեցությամբ պայմանավորված լի անկումը՝ այնուամենայնիվ համաժամանակյա կտրվածքով պետք է փաստել, որ երևույթը գոյություն ունի ժամանակակից սերնդի խոսակցական լեզվում (սերունդ, որը չի էլ գիտակցում անկման հիմնական պատճառներից մեկը՝ բարբառային ազդեցությունը), և որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով նույնպես:

Սույն փորձառական հետազոտության նպատակն է պարզել, թե ինչու է խոսակցական լեզվում վաղակատար դերբայի վերջավորության լ-ն շրջուն շարադասության դեպքում անկում ապրել՝ այդուհանդերձ պահպանելով բառի իմաստը: Լեզվական այլ պատճառների հետ միասին պետք է կարևորել նաև հնչյունի ֆիզիկական չափեզրերը, քանի որ վերջին հնչյունի անկումը անպայմանորեն կապված է արտասանության թուլացման հետ, դա էլ ենթադրում է ֆիզիկական չափեզրերի փոփոխություն: Եթե մենք կարողանանք ապացուցել, որ վաղակատարի ներկա և անցյալ ձևերում ուղիղ և շրջուն շարադասության պարագայում լ-երը օրինակափորեն մեծ փոփոխություններ են կրում, ապա կարող ենք ենթադրել, որ պատճառներից մեկը արտասանության թուլացումն է, որը հայտնի փաստ է և ապացուցվում է մեկ անգամ ևս այս իրադրության մեջ: Փորձառական ճանապարհով հետազոտել ենք վաղակատար դերբայի վերջավորության լ-ի ֆիզիկական չափեզրերը՝ ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը,

Ֆորմանտները և սպեկտրը: Այդ նպատակով ընտրել ենք պատմողական և հարցական բնույթի 20 նախադասություններ՝ վաղակատար ներկայի կամ վաղակատար անցյալի հաստատական և ժխտական բայաձևերով, որոնք դարձրել ենք շրջուն: Փորձել ենք պարզաբանել, թե որն է այն հիմնական պատճառը, որի ժամանակ կատարվել է վաղակատարի լ-ի անկումը շրջուն շարադասության ժամանակ: Արդյո՞ք դա կապված է տրամաբանական շեշտի, հարցական դերանվան կամ այլ պատճառի հետ: Փորձարկման նյութն ընտրելիս, այսինքն՝ նախադասությունները կազմելիս հաղորդավարներին³ ներկայացրել ենք շրջուն շարադասությամբ վաղակատար ներկա և անցյալի ճիշտ, այսինքն՝ լ-ով ձևերը, քանի որ առանց լ-ի ձևերում կունենայինք համեմատության 0 (զրո) եզր: Իսկ այս պարագայում կարող ենք համեմատել լ-ի տվյալները ուղիղ և շրջուն շարադասության ժամանակ:

Հաղորդավարները կարդացել են խոսակցական լեզվից վերցված նախադասությունները, որոնք ձայնագրվել են: Այնուհետև դրանք մտցվել են «Պռաստ»⁴ ծրագրի մեջ, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության և համադրության համար: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել են նախադասությունների մեջ լ բաղաձայնի ֆիզիկական չափեզրերի տվյալների հաշվարկներ և մշակումներ: Հնչյունի ֆիզիկական հատկանիշներից ուսումնասիրել ենք ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը, ֆորմանտները և սպեկտրը, քանի որ հնչյունի

³ Բոլոր հինգ հաղորդավարներն ունեն բարձրագույն կրթություն, ծնվել և մեծացել են Երևանում, գերազանցորեն կամ լավ տիրապետում են ժամանակակից գրական արևելահայերենին և ժամանակակից խոսակցական լեզվին (խոսում են ոչ միայն գրական, այլև խոսակցական արևելահայերենով):

⁴ «Պռաստ» (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել) ծրագիրը մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

կորուստը կամ անկումը կապում ենք արտաբերության թուլացման կամ նույնիսկ մինչև զրոյական թուլացման հետ:

Վերլուծվել է ավելի քան 200 [(20 + 20) x 5] միավոր՝ 20 ուղիղ և 20 շրջուն տարբերակներով նախադասությունները՝ 5 հաղորդավարների ընթերցմամբ: Քննել ենք վաղակատարի ներկա և անցյալ ձևերը պատմողական և հարցական նախադասություններում, ինչպես նաև էլ շաղկապի, մակբայի կամ եղանակավորող բառի առկայությամբ դեպքերը. դա թերևս համանման երևույթ է և նույնպես տարածված է խոսակցական լեզվում: Հատկապես ուզում եմ նշել, որ շրջուն շարադասության ժամանակ 1-ի բացակայության բոլոր օրինակները վերցված են կենդանի խոսակցական լեզվից: Օրինակների ուղիղ ձևերը կազմել ենք ինքներս:

Ուսումնասիրությունը կատարելիս նպատակահարմար գտանք դասակարգել 1-ի անկման դեպքերը՝ ելնելով նախադասությունների բնույթներից և հատատական կամ ժխտական տեսակներից: Առանձնացրինք դեպքերի 6 տեսակներ:

1. Վաղակատար ներկա/անցյալ պատմողական (հաստատական):

Վաղակատար ներկայում կամ անցյալում տեղի է ունենում 1-ի անկում, երբ ստորոցայի օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ, այսինքն՝ շրջուն շարադասության ժամանակ: Օրինակ՝


Այդ հարցին անդրադարձել ենք: Այդ հարցին շատ ենք անդրադարձել:

Երկրաշարժը ունեցել է երկու էպիկենտրոն: Երկրաշարժը երկո՛ւ էպիկենտրոն է ունեցել:

Այս պարագայում ակտիվորեն գործում է տրամաբանական շեշտը, որով նախադասության որևէ անդամ հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում՝ իմաստային երանգավորում տալով նախադասությանը: Բերված օրինակում **շատ** բառն իր վրա է կրում տրամաբանական շեշտը, տեղի է ունենում ձայնային էներգիայի կուտակում կամ տեղաբաշխում **շատ** բառի վրա, որը պատճառ է դառնում, որ անկումն ավելի կտրուկ լինի տրամաբանական շեշտի և նախադասության

ավարտի միջև: Ապացուցենք սա թվերի միջոցով՝ համեմատելով ուժգնության, հաճախականության, տևողության, ֆորմանտների և սպեկտրի տվյալները երկու տարբերակներում:

Անդրադարձել բառի Լ-ն շրջուն շարադասությամբ նախադասության մեջ ունի հետևյալ միջինացված պարամետրերը՝ 49.2 դեցիբել, իսկ սովորական շարադասությամբ 55.1 դեցիբել: Լ-ի միջին տևողությունը շրջուն շարադասության ժամանակ 0.03 միլիվայրկյան է, իսկ ոչ շրջունի դեպքում՝ 0.05: Հաճախականության առումով շրջուն շարադասության մեջ Լ-ի արտասանության 90 տոկոս դեպքերում գրանցվել են «անորոշ» կոչվող տվյալներ: Սա խոսում է արտասանության թուլացման մասին՝ մինչև նույնիսկ զրոյականի: Այդ զրոյականի ապացույցն այն է, որ Լ-ի հաճախականության տվյալները նշված են ոչ թե թվերով, այլ «չսահմանված, անորոշ» բառով (անգլերենում նշված է՝ undefined):



Անդրադարձել բառի վերջին «ցել» վանկի հնչապատկերը: Լ հնչյունի հաճախականությունը «undefined», այսինքն «չսահմանված» է: Հնչապատկերի ներքևի գիծն ընդհատվում է Լ-ի արտասանության ժամանակ:

2. Վաղակատար ներկա/անցյալ պատմողական (Ժխտական):

Այս տիպի ժխտական նախադասություններում տրամաբանական շեշտը փոխանցվում է ժխտական բառին: **Չենք** օժանդակ բայը իր ուժգնությամբ մոտ 12.03 դեցիբելով գերազանցում է հաստատական ձևում գտնվող օժանդակ բայի ուժգնությանը: Տարբերությունն այսքան ցայտուն և ակնհայտ է, քանի որ օժանդակ բայերը սովորաբար չեն շեշտվում հաստատական նախադասությունների մեջ:

Այդ հարցին անդրադարձել ենք բազմիցս: Այդ հարցին շատ չենք անդրադարձել:

3. Վաղակատար ներկա/անցյալ՝ հարցական (հաստատական):

Ամենատարածվածը լինելու առումով հատուկ տեսակ են կազմել վաղակատար ներկայի կամ անցյալի հարցական ձևերը, որտեղ գրանցվել են Լ-ի տվյալների առավել մեծ տատանման դեպքեր:

Նրան վաղուց տեսել եմ: Նրան վաղո՞ւց ես տեսել:

4. Վաղակատար ներկա/անցյալ՝ հարցական (ժխտական):

Նրան վաղուց չեմ տեսել: Նրան վաղո՞ւց չես տեսել:

5. Տրամաբանական շեշտ՝ պայմանավորված հարցական բառով:

Որպես առանձին դեպք՝ քննել ենք այն նախադասությունները, որտեղ կան հարցական դերանուններ կամ բառեր, և տրամաբանական շեշտն առավել ուժեղ է արտահայտված, քանի որ այս պարագայում կա երկու գործոն՝ տրամաբանական շեշտ և հարցական հնչերանգ՝ արտահայտված ուժգնությամբ:

Այսօր Աննան եկել է մեր տուն: Ո՞վ ա էսօր եկել մեր տուն: (նախադասությունը վերցված է կենդանի խոսքից):

6. Էլ մակբայ/շաղկապ/եղանակավորող բառ

Խոսակցական լեզվում վաղակատարի Լ-ի անկման երևույթի նմանությամբ տեղի է ունենում նաև **էլ** շաղկապ/մակբայ/եղանակավորող բառի Լ-ի անկումը:

Միբրու՞մ եմ քեզ, բալես: Ես էլ քեզ, մամ ջան:

Նրանք էլ պիտի միանան մեզ:

Արվենն էլ պիտի գա:

Արտաբերության տեսանկյունից նկատելի է, որ շրջուն շարադասության ժամանակ, մանավանդ հարցական բնույթի նախադասություններում լ-ի արտասանությունը շատ թույլ է, հպումը շատ թեթև, որը նկատելի է նաև լսողական մակարդակում: Այսինքն, եթե հաշվի առնենք, որ հնչյունն արտաբերվում է 3 փուլով՝ մուտք, պահք և ելք, ապա այս պարագայում արտաբերվում է միայն լ-ի առաջին փուլը՝ մուտքը:

Այսպիսով, որպես ամփոփում նշենք, որ ըստ մեր դիտարկումների՝ վաղակատարի լ-ի անկումը պայմանավորված է 2 հանգամանքով՝ 1. պատմական՝ խորքային, որը երևույթը բացատրում է բարբառների ազդեցությամբ, և 2. համաժամանակյա մոտեցմամբ, որը կապված է տրամաբանական շեշտի առավել ուժգին արտասանությամբ, որն իր վրա է կրում հնչերանգի հիմնական ծանրությունը:

Григорян Гаяне - Падение звука «L» прошедшего причастия во время инверсии в разговорном языке. - Выпадение или утеря звуков в устной (звучащей) речи распространенное явление. В современной устной разговорной речи также происходят выпадения звуков, одним из примеров которого является выпадение конечного - L в причастии прошедшего времени в инверсионных конструкциях. Для объяснения этого явления вопрос следует рассмотреть двояко: с диахронической точки зрения, как обусловленное влиянием диалектов, и синхронически – ослаблением артикуляции вследствие каких-либо причин.

Grigoryan Gayane – The fall of the sound "L" of the past participle during the inversion in the spoken language. - The omission or loss of sounds is a common phenomenon. In today's spoken language also, we see a fall of sounds like the omission of the final L in perfect constructions during inverted order. To clarify this phenomenon, we must use both approaches simultaneously – diachronic resulted by the influence of dialects and synchronic resulted by pronunciation reduction conditioned by some circumstances.

**ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀՈՄԱՆԻՇՆԵՐ)**

Խաչատրյան Օֆելյա, Սարգսյան Ն.Պ.

Բանալի բառեր' հոմանիշ, նույնանիշ, համանիշ, իմաստային դաշտ, մենիմաստություն, բազմիմաստություն, ոճական երանգավորում, գեղագիտական արժեք, նույնարմատ հոմանիշ, տարարմատ հոմանիշ:

Խորենացու «Հայոց պատմությունը» հարուստ բառապաշար ունի, որը, ըստ ձևաիմաստային խմբերի, դեռևս ուսումնասիրված չէ: Այդ ուսումնասիրությունը կատարելուն մեծապես օգնում են երկի հատկապես հաճախականության բառարանն ու բնագրային համաբարբառը:

Բառապաշարը խմբավորելու, դասակարգելու ելակետերից մեկը բառի հնչյունական կազմի, այսինքն՝ ձևի և արտահայտած իմաստի՝ բովանդակության փոխհարաբերությունն է, որի շնորհիվ այն հնարավոր է ենթարկել ձևաիմաստային դասակարգման: Մ. Խորենացու պատմության բառապաշարից առանձնացրել ենք բառերի ձևաիմաստային խմբերը և ըստ դրանց՝ կազմել հոմանիշների, հականիշների, համանունների և հարանունների շարքեր: Դրանց մեջ զգալի թիվ են կազմում հոմանիշները, որոնք ընդգծում են առարկաների, երևույթների հատկանիշների զանազան նրբերանգներ, երկին հաղորդում ոճական, հուզաարտահայտչական բազմազան երանգներ, նպաստում խուսափելու միօրինակությունից, միևնույն բառերի անտեղի կրկնությունից: Խորենացու երկում առկա հոմանիշների մեծ քանակը կարելի է բացատրել նրանով, որ դեռևս հինգերորդ դարում հայերենն առնչվել է բազմաթիվ այլ լեզուների հետ և ունենալով բառակազմական ներքին լայն հնարավորություններ՝ ստեղծել իր սեփականը:

Հումանիշների առաջացման աղբյուրները տարբեր լեզուներում միանգամայն տարբեր են: Դրանց առաջացումը, հումանշային շարքերի կազմությունը և փոփոխության գործընթացներն ազգային բնույթ ունեն [1]:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» հումանիշների ճոխությունը պայմանավորված է աղբյուրների հարստությամբ և առաջացման ուղիների բազմազանությամբ, այսինքն՝ սեփական բառակազմական միջոցներով, փոխառություններով, բառիմաստի տեղաշարժերով: Հումանիշների մեջ գոյություն ունեցող նրբիմաստային տարբերություններն առաջացել են բառի իմաստաբանական փոփոխությունների հետևանքով, ուստի հումանիշների շարքերի հարստացման հիմնական աղբյուրներից մեկը բառիմաստի փոփոխություններն են: Օրինակ **բարեյարմար- վայելուչ, հրահանգ-հրաման, սուրբ-մաքուր-առաքինի, երևոյթ-յայտնություն-ցնորք** [2] և այլն:

Հայերենագիտության մեջ հումանիշներին առաջին անգամ անդրադառնում են Մտեփանոս Սյունեցին և Անանունը՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության առնչակցությամբ, իսկ հետագայում դրանց մասին գիտական լուրջ ուսումնասիրություն է կատարում անվանի հայագետ Հ. Ա. Այտընյանը [3], որը կարևորում է խոսքաշարի դերը: Ըստ նրա՝ հումանշային շարք կազմող բառերն իրար հետ կապված են իմաստային նույնությամբ կամ նրբերանգային տարբերություններով: Հումանիշները միշտ չեն կարող միմյանց փոխարեն գործածվել: Հ. Ա. Այտընյանը նկատում է, որ ժամանակակից հայերենի հումանիշների առաջացման հիմնական պատճառներից մեկն այն է, որ հումանշային շարքում կողք կողքի հանդիպում են գրաբարից ժառանգված և աշխարհաբարում գործածվող բառեր:

Հետագայում հումանիշներին անդրադառնում է նաև Մտ. Պալասանյանը: Նրա կարծիքով՝ հումանիշների հարստացման աղբյուրներից մեկը ժողովրդախոսակցական բառերի կողքին գրաբարյան բառերի գործածությունն է, երկրորդ աղբյուրը բառի հնչյունական փոփոխություններն են, որոնք առաջացնում են

իմաստի նրբերանգային տարբերություններ:

20-րդ դարի սկզբին հոմանիշների ուսումնասիրությանն անդրադառնում է անվանի հայագետ Մ. Աբեղյանը: Նա իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ ներկայացնում է հոմանիշների առաջացման ուղիները, դրանց ձևաբանական և իմաստաբանական դասակարգումը, զանազանում նույնանիշ և համանիշ տերմինները և նշում նույնանիշների առաջացման ուղիները: Հոմանիշների դասակարգման նրա սկզբունքները գրեթե նույնությամբ տեղ են գտնում հետագա լեզվաբանների կազմած հայոց լեզվի դասագրքերում:

Հ. Պետրոսյանը իր աշխատության մեջ [4] հոմանիշ է կոչում գրությամբ տարբեր, իմաստով մոտ բառերը, որոնք, սակայն, տարբերվում են գործածությամբ, իսկ նույնանիշները իմաստով ճիշտ նույն բառերն են:

Հոմանիշներին է նվիրված նաև Ա. Մուրվալյանի մենագրության [5] բառագիտության բաժինը, որտեղ ներկայացված են հոմանիշների տեսակները, դրանց առաջացումը և ոճական կիրառությունները: Նա առանձնացնում ու դասակարգում է հոմանշային այնպիսի շարքեր, որոնք արտահայտում են իմաստային նրբերանգներ և նաև այնպիսիք, որոնք իմաստային նրբերանգներ չեն արտահայտում, այսինքն՝ գոյություն ունեն բացարձակ և հարաբերական հոմանիշներ:

Արևմտահայ լեզվաբաններից հոմանիշներին անդրադարձել է անվանի լեզվաբան Հ. Գազանձյանը [6], որն առանձնացնում է տարբեր և նույն արմատներից կազմված հոմանիշներ, կարևորում դրանց դերը լեզվի զարգացման գործում:

Հոմանիշներին անդրադարձել են նաև անվանի լեզվաբաններ Գ. Սևակը [7], Է. Աղայանը [8], Պ. Բեդիրյանը [9], հայոց լեզվի դպրոցական դասագրքերի հեղինակներ Ա. Ղարիբյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Բարսեղյանը և այլք:

Նկատելի է, որ ընդհանուր առմամբ հոմանիշները բնութագրելու, սահմանելու, դասակարգելու գործում հակասական կարծիքներ չկան, հոմանիշներ են կոչվում նույն կամ մոտ իմաստ

ունեցող բառերը [10]:

Այսպիսով՝ հոմանիշները հնչյունական կազմով (ձևով) միմյանցից տարբեր, բայց իմաստով մոտ, երբեմն նաև նույն իմաստն ունեցող բառերն են: Տարբերում են հոմանիշների երկու տեսակ՝

1. հոմանիշներ,
2. նույնանիշներ:

Հոմանիշ կոչվում են տարբեր ձև, բայց նույն կամ մերձավոր իմաստ ունեցող բառերը: Օրինակ՝ **հեզ-խոնարհ-համեստ-պարկեշտ-առաքինի, բարութիւն- առաքինութիւն-բարեգործութիւն-բարեկարգութիւն** և այլն [2]:

Հոմանիշներն էլ լինում են երկու տեսակ նույնանիշ և համանիշ:

Նույնանիշ են այն բառերը, որոնց իմաստները լիովին համընկնում են [10]: Օրինակ՝ **երիվար-ձի, ջերմ-տաք-վառ, բնաւ-բոլոր-համօրէն-բովանդակ-ամէն-ամենայն:**

Համանիշ են այն բառերը, որոնց իմաստները շատ մոտ են, բայց լիովին չեն համընկնում: Օրինակ՝ **բարձրայօնութիւն-ամբար-հաւաճութիւն-հպարտութիւն, բեմ-խորան-սեղան** և այլն [2]:

Մովորաբար հոմանիշները դասակարգելիս նկատի է առնվում այն ժամանակահատվածը, լեզվի զարգացման այն փուլը, որի ընթացքում դրանք գործածվել են: Այս տեսակետից տարբերվում են համաժամանակյա և տարժամանակյա հոմանիշներ: Համաժամանակյա հոմանիշները գործածվում են լեզվի զարգացման տվյալ փուլում, բայց քանի որ մեր ուսումնասիրության նյութը վերաբերում է 5-րդ դարի պատմիչ, քերթողահայր Մովսես Խորենացու «Շայոց պատմությանը», որում ներառված են նաև նախագրային շրջանից մեզ հասած ժողովրդական բանահյուսության պատառիկները, ուրեմն այն ունի տարժամանակյա բնույթ և իր մեջ ներառում է թե՛ նախագրային և թե՛ գրային շրջաններին վերաբերող բառեր: Դրանցից շատերը մինչ այսօր պահպանում են իրենց բուն իմաստն ու կայուն տեղը ժամանակակից հայերենում, ինչպես՝ **ամենայն-բոլոր-ողջ, անդունդ-վիհ, ակն-աղբեր, լայն-**

ընդարձակ կայլն [2]:

Հումանիշների ոճական արժեքը բարձր է գնահատվում, երբ հեղինակը խոսքի միևնույն հատվածում միաժամանակ գործածում է հումանիշների երկու և ավելի տարբերակ, օրինակ՝ «Մի թուեցի քեզ դժուար, զի ի ձեռս քո ոչ կարացի տալ զՄամգոն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն **արեգական**, այլ վասն անխոռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և ի մուտս **արեւու**, որ հաւասար է նմա մահու...» [11, էջ 222]: «Քո դժվարը թող չգա, որ ես Մամգունին չկարողացա քո ձեռքը տալ, որովհետև հայրս նրան երդվել էր **արեգակի** լոյսով. այլ որպեսզի դու միամիտ լինես՝ ես նրան իմ աշխարհից հալածեցի **արևմտյան** կողմը, աշխարհի ծայրը, որ նրա համար մահի հավասար է...» [12, էջ 144]: «Յարահետևողք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասէն ընծուիլ, և զլուսին **արեգակամբ** ուռճացեալ, և զբոլոր **արեգակն** յարփայինն երկնէ. հիկէն **արփուոյն** հեղեալ զծագումն յերկաքանչիւր գոտիսն, և զանցնիւր գոտիսն ի ձեռն **արեգական** ընծուի՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի» [11, էջ 344]: «Նրանք, որ շարունակ հետևում են իմաստասիրությանը և քննում են մաթեմատիկական գիտությունները, ասում են, թե աստղերը լոյս են ստանում լուսնից, լուսինը լցվում է **արեգակի** լոյսով, իսկ **արեգակն** արփային երկնքից, այնպես որ **արփին** լոյսը սփռում է երկու գոտիներում, և այս երկու գոտիները լոյս են ստանում **արեգակից** ըստ դասի, ըստ շարժման և ըստ ժամանակի» [12, էջ 227]: Ինչպես երևում է, տեքստի մի փոքր հատվածում պատմիչը գործածել է **արեգակ**, **արև**, **արփի** հումանշային շարքի բոլոր տարբերակները:

Հումանիշները իրարից տարբերվում են նաև մի շարք այլ հատկանիշներով: Այդ տարբերությունները լինում են՝ **իմաստաբանական, գործառական-ոճական, կապակցական**: Իմաստաբանական տարբերություններն ի հայտ են գալիս հումանիշների՝ իրար մերձավոր իմաստների զանազան տարբերակումներով՝ ծավալային, տեսակային, աստիճանական և արտահայտչական [13]:

Ծավալայինը դրսևորվում է դրանց իմաստների ամբողջական կամ մասնակի նույնությամբ (մերձավորությամբ) [13, էջ 351]: Այդպիսի օրինակներ շատ կան Մ. Խորենացու երկում, ինչպես՝ **բասրել-մեղադրել-բամբասել-պարսաւել-եպերել-նախատել-ձաղել, բարկանալ-գայրանալ- ցասնուլ-գայրագնիլ** և այլն:

Բասրել - «Սա բասրելով յիւրոց զօրացն վասն առաւել պղերգութեանն և սաստիկ որկրամոլութեանն... գայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զբիրաւորս Ատրպատական նահանգին» [11, էջ 137]: «Իր զորքերից **պախարակվելով** իր անգործ ծուլության և սաստիկ որովայնամոլության պատճառով... գայրացած հրամայում է զորքեր հանել՝ Ատրպատական նահանգի բյուրավորները...» [12, էջ 88]...

Մեղադրել - «... և **մեղադրեցաք** յոյժ, զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորաց» [12, էջ 335]: «Քեզ շատ **մեղադրեցինք**, որ բոլոր սրտով միտվեցիր հեթանոս թագավորի կողմը» [12, էջ 219]:

Բամբասել - «Մի ոք աստանոր զմեզ անուսումն համարեալ **բամբասիցէ** իբրև զանվարժս ոմանս և զոգէտս» [11, էջ 8]: «Բայց ոչ ոք թող այստեղ մեզ անուսում համարելով **չբամբասէ**, ինչպես մի քանի անվարժ ու տգետ մարդիկ» [12, էջ 6]:

Պարսաւել - «Վասն որոյ մի զմեզ այպանեալ **պարսաւեսցես**» [11, էջ 257]: «Ուստի մեզ չպետք է **մեղադրես ու պարսավես...**» [12, էջ 165]:

Եպերել - «Իսկ Ատոմայ Մոկացոյ **եպերեալ** զնա՝ ասէ. «Գնա՛, զնա՛, աստուածորդիդ Պարսից, թէ այր իցես» [11, էջ 330]: Ատոմ Մոկացին **պարսավանքով** ասաց նրան. «Գնա՛, զնա՛ պարսից աստուածորդի, եթէ տղամարդ ես» [12, էջ 216]:

Նախատել - «Վասն որոյ **նախատեաց** զնոսա արքայ ամօթալի բանիւք և կսկծեցուց անողօք» [11, էջ 286]: «Ուստի թագավորը նրանց (Տիրիթին ու Վարդանին) սաստիկ **նախատեց** ամոթալի վիրավորական խոսքերով» [12, էջ 186]:

Այպանել, յանդիմանել - «... զի էր պճնող առ հանդերձս և ձիասէր. զոր **պարսաւեալ այպանէին** փոխանակարանեալ՝ որք ի

նման է **յանդիմանեալ լինէին**» [11, էջ 295]: «... որ նա զգեստի կողմից պճնասեր էր և ձիասեր, որի պատճառով նրան **պարսավում** և **ծաղրում էին** փոխարինաբար նրանք, որոնց նա **հանդիմանում էր**» [12, էջ 192]:

Չաղել - «Գերմանիկոս կեսար եղեալ՝ **ձաղէ** զառաքեալսն ի Հռովմ զիշխանսն Արշարի և Արգարու, յաղագս պատերազմին նոցա» [11, էջ 144]: «...իսկ Գերմանիկոսը կեսար դառնալով, **անարգում է** Արշավիրի և Արգարի Հռոմ ուղարկած իշխաններին, նրանց պատերազմի պատճառով...» [12, էջ 92]:

Բարկանալ- «Արդ՝ իբրև եհաս ժամադրութիւնն, և չտայ զգանձս փրկանացն Հիւրկանու Ենանոս՝ **բարկանայ** ի վերայ նորա Արշամ և ընկեցեալ ի պատուոյն՝ հրամայէ դնել ի բանտի» [11, էջ 140]: «Արդ երբ որոշված ժամանակամիջոցը լրանում է, և Ենանոսը Յյուրկանոսի փրկանքի գանձը չի տալիս, Արշամը նրա վրա **բարկանալով** պատվից զրկում է և հրամայում է բանտը դնել» [12, էջ 90]:

Ցասնուլ - «...և նախանձ բերելով ընդ ծերունոյն Արգամայ՝ հրապուրեաց զհայր իւր **ցասնուլ** Արգամայ» ([11, էջ 80]: «Նա ծերունի Արգամին նախանձելով՝ պատրանքներով իր հոր **զայրույթը շարժեց** Արգամի դեմ...» [12, էջ 117]:

Չայրանալ - «Սա...**զայրացեալ**՝ հրաման տայր զօր յարուցանել զբիւրաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս» [11, էջ 137] «...**զայրացած** հրամայում է զորքեր հանել Ատրպատական նահանգի բյուրավորները, Կովկաս լեռան բնակիչները...» [12, էջ 88]:

Չայրագնիլ - «Ընդ որ առաւել **զայրագնեալ**՝ սատակէ զամենեսեան» [11, էջ 55]: «Սրա վրա ավելի **զայրանալով** (Շամիրամը) կոտորում է բոլորին» [12, էջ 36]:

Չչարիմ - «Եւ Յակոբու դէմ եղեալ առ արքայ, առաւել ևս **զչարի** Մանաճիհր» [11, էջ 264]: «Հակոբը դիմում է թագավորին, սրա վրա Մանաճիհրն ավելի է **չարանում**, և...» [12, էջ 169]:

Տեսակալին տարբերությունները ցույց են տալիս հոմա-

նիշների ընդհանրությունները՝ առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) վերաբերյալ, այսինքն՝ համանիշային շարքի բոլոր անդամներն էլ ցույց են տալիս նույն առարկան, սակայն դրանցից յուրաքանչյուրը վերաբերում է տվյալ առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) մի տարբեր տեսակին: Օրինակ՝ **բազուկ-գորութիւն-կարողութիւն-իշխանութիւն-բռնութիւն:**

Բազուկ - «Իսկ զօրացն ամենայնի տեսեալ թագաւորն իւրեանց և զգօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր **բազկէ** լեալ ի փախուստ դառնային» [11, էջ 231]: «Իսկ բոլոր գորքերը տեսնելով, թէ ինչպէս իրենց թագավորն ու գորավոր կովոդը միջակտուր եղալ այնպիսի ահավոր **բազուկից**, փախուստի դիմեցին...» [12, էջ 149]:

Զօրութիւն - «...և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս **զօրութիւն** աստուածոցն կենդանացուցին զԱրայ» [11, էջ 50]: «...և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թէ աստվածների **զօրությունը** կենդանացրեց Արային» [12, էջ 33]:

Կարողութիւն - «Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս նոցա յայտնել ըստ **կարողութեան**, թէ» [11, էջ 14]: «Պետք է այստեղ իսկապէս նրանց կարծիքներն ըստ մեր **կարողության** բացատրել, թէ...» [12, էջ 12]:

Իշխանութիւն - «Եւ յայնմ հետէ բարձաւ **իշխանութիւնն** Հայոց ի Միջագետաց» [11, էջ 164]: «Այս ժամանակից սկսած Միջագետքի վրայից վերացավ Հայոց **իշխանությունը**, և...» [12, էջ 105]:

Բռնութիւն - «...**բռնութեամբ** հարկաւորեալ գրէ, զի Փառանձեմ կին նորա եկեցէ ի դուռն» [11, էջ 299]: «**Բռնի** ստիպմունքից հարկադրված՝ գրում է իր Փառանձեմ կնոջը, որ դուռը գա» [12, էջ 194]:

Աստիճանական տարբերությունները բնութագրվում են նրանով, որ հոմանշային շարքի անդամներն ընդհանրապէս նույն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի իմաստն ունեն, բայց յուրաքանչյուրը ցույց է տալիս դրա մի տարբեր աստիճանը,

ուժգնությունը և այլն: Օրինակ՝ **հողմ- մրրիկ-փոթորիկ** հոմանշա-
յին շարքի բառերը արտահայտում են օդի հոսանքի ուժգնության և
արագության տարբեր աստիճանները, այսպես՝

Հողմ - « ... յոր հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ
ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն և մարդկանն անլուր
բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ
արկանէին» [11, էջ 32]: «Աստվածների ցատումից ինչ-որ ահագին և
աստվածային **հողմ** փչելով կործանում է աշտարակը և մարդկանց
յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ,
որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում» [12, էջ 22]:

Բուք, մրրիկ - «Քանզի յաւուրս ձմերայնոյ ճանապարհորդեալ
ի Հայս քոյր Աբգարու Աւգէ՝ պատահէ **բքոյ** ի լերինս Կորդուաց.
ցրուեաց զամենեսեան մրրիկն, մինչ ոչ գիտել ընկեր զընկեր՝ ընդ
որ վարեցաւ» [11, էջ 160-161]: «Աբգարի քույր Ավգեն ձմեռ
ժամանակ դեպի Հայաստան ճանապարհորդելիս **բուքի** է
պատահում Կորդվաց լեռներում. **մրրիկը** բոլորին ցրեց, այնպես որ
ոչ մեկը չգիտեր, թե ընկերն ուր մնաց» [12, էջ 103]:

Փոթորիկ - «Եւ ի դառնալ մանկանցն, Պարսից ընդ հուպ
դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս **փոթորիկ**
յանտառէ տերևաթափ, այնպէս արագ յերիվարացն առեալ
նիզակօք, դի ցուրտ յերկիր ընկենուին» [11, էջ 303]: «Երբ Պարսից
պատանիները հետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում
էին նրանց հետևից և ինչպես **փոթորիկ**, որ անտառը տերևաթափ է
անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վեր էին
զցում ձիերից, դիակները գետնի երեսին փռում...» (12. էջ 197):

Տեսակային տարբերությունները ցույց են տալիս, որ
հոմանշային շարքի բոլոր անդամներն էլ անվանում են նույն
առարկան, բայց դրանցից յուրաքանչյուրը վերաբերում է նույն
առարկայի տարբեր տեսակին կամ խմբին: Օրինակ՝ մարդկանց
կամ մի շարք այլ առարկաների խմբեր՝ **ամբոխ- բազմութիւն-
գունդ-խումբ -վաշտ**:

Բազմութիւն, ամբոխ - «...ի վեր գերեսս ամբարձեալ՝ երեեցաւ
նոցա **բազմութիւն** անկարգ հրոսակի **ամբոխոյն** Բելայ» [11, էջ 35]:

«...գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ **ամբոխի** անկարգ հրոսակը» [12, էջ 25]:

Գունդ - «...նահապետքն և նախարարութեանցն **գունդք** և միանգամայն զօրականացն **վաշտք**, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին» ([11, էջ 190]:

«...նահապետները, նախարարական **գնդերը** և ընդհանրապես զօրականների **վաշտերը**, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի» [12, էջ 124]:

Խումբ - «Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ **զխումբն**, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն. և **զխումբն** պտուտեալ ՚ի փախուստ դարձուցանէր» [11, էջ 304]: «Սպանդարատը հարձակվեց, **խումբը** ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և **խումբը** շուռ տալով փախուստի մատնեց» [12, էջ 198]:

Վաշտ - «Նահապետքն և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն **վաշտք**, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին» [11, էջ 190]: «Նահապետները, նախարարական գնդերը և ընդհանրապես զօրականների **վաշտերը** ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի» [12, էջ 124]:

Աստիճանական տարբերությունները ցույց են տալիս, որ հոմանշային շարքի անդամները ընդհանրապես նույն առարկայի, երևույթի հատկանիշի իմաստն ունեն, բայց դրանցից յուրաքանչյուրը, բացի մեկ ընդհանուր իմաստ արտահայտելուց, արտահայտում է տվյալ երևույթի կամ առարկայի հատկանիշի տարբեր աստիճանը, ուժգնությունը, օրինակ՝ **հեզ-հանդարտ - խոնարհ-համեստ-պարկեշտ-առաքինի** կամ **անօսր-ստուար-հոժ-թանձր-թաւ-խիտ**:

Հեզ- «...ի վեր գերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ... իսկ Բէլ **հեզ** և **հանդարտ** ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրև ի դիտանոցի» [11, էջ 35]: «...գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ ... իսկ ինքը,

Բելը, մեծ ամբոխով **հեզ, հանդարտ** կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա իբրև դիտանոցում» [12, էջ 25]:

Խոնարհ - «...բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի **խոնարհ** քան զբազումս մատուցեալ նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել» [11, էջ 323]: «...բայց նրանց չհաստատել իրենց նախկին հայրենական գահում, այլ շատ նախարարներից **ներքև** դասել, կրտսերագույն նախարարների շարքում» [211]:

Համեստ - նոյնպես էր և սան նորա Խոսրովիդուխտ, կուսան **համեստ** որպես զօրինաւոր որ... [էջ 224]: Նրա պես էր և նրա սանը, Խոսրովիդուխտը, մի օրինավոր **համեստ** կույս [էջ 146]: «Յայնժամ կանգուն կացեալ մեծին Սահակայ, պարկեշտ և նազելի զինքն կազմեալ ի բեմասացութեան ձևի՝ **համեստ** հայեցուածովք, **համեստագոյն** ևս ձայնի սկսաւ ճառել զերախտիս ծառայութեանն» [11, էջ 351]: «Այն ժամանակ ոտքի կանգնեց մեծն Սահակը, պարկեշտ և նազելի դիրք բռնելով, ինչպես բեմասացության ժամանակ, **համեստ** հայացքով և **ավելի համեստ** ձայնով, և սկսեց ճառել իր հպատակության երախտիքները» [12, էջ 231]:

Պարկեշտ - Չայս և որ այլ այսպիսիք բազումք, երբ մերոյ աշխարհիս խարտեաշս այս... Երուանդեանս Տիգրան...**պարկեշտն** ի կերակուրս և յըմպելիս...» [11, էջ 73]: Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ... Երվանդյան Տիգրանը... կերակուրների և ըմպելիքների մեջ **պարկեշտ** [11, էջ 46]:

Առաքինի - «Եւ աստի դարձեալ յաշխարհն Շոփաց Բագարատ՝ վկայ հաստատուն առանց նախանձու լինի առ արքայի վասն Վահանայ քաջութեանցն և **առաքինի** դիպուածոյն» [12, էջ 267]: Այստեղից Շոփաց աշխարհը վերադառնալիս՝ Բագարատն առանց նախանձի հաստատապես վկայում է թագավորին Վահանի քաջագործությունների և այս **առաքինական** դիպվածի մասին: [էջ 171]

Անօսք - «...փոքր էր յանձնէ և **անօսք** ոսկերօք» [11, էջ 262]: ...մարմնով փոքր էր, թույլ ոսկորներով [էջ 169]

Ստուար - «Եւ թողեալ գունդ **ստուար**, ինքն ի Տիսբոն փութայր

հասանել» [12, էջ 321]: Եւ մի **սովար** գունդ Հայաստանում թողնելով՝ ինքն շտապում էր Տիգրան հասնել [էջ 210]

Թանձր- «...և ձեռագործ լիճ կառուցեալ. յորոց օդոցն քաղցրախառնութիւն փշեցեալ, որ ի լճէն բերանք արձակին ի ծովն, և որք ի ծովէքն մօտի ելոյ, որ ելանեն ստեպ ստեպ սղոխք օդոյ, **անօարունք** այն որ ի ծովէն, և **թանձունք** որ ի լճէն...» [11, էջ 345]: ... և շինված է արհեստական լիճ, որի պատճառով բարեխառն օդ է շնչում, թե այնտեղից, ուր լճի ջրերը դեպի ծովն են հոսում, և թե ծովին մոտ տեղերից. այսպէս հաճախակի քամիներ են փչում ծովի կողմից՝ թեթև, և լճի կողմից՝ **թանձր** [էջ 227]:

Հոծ, խիտ - «Արդ՝ թեպէտ և Ագաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ ձիգ և յերկար առնել զպատմութիւն ժամաանակիս այսորիկ ճառելով ի սկզբանէն, և ճշմարիտ ասացուածքով **հոծ և խիտ**» [11, էջ 203]: Արդ՝ թեպէտ Ագաթանգեղոսը համառօտ պատմեց այս անցքերը, բայց ես կամենում եմ երկար ու մանրամասն գրել այս ժամանակի պատմությունը բուն սկզբից, **լի** և **խիտ** ճշմարիտ տեղեկություններով:

Արտահայտչական տարբերությունները ցույց են տալիս, որ հոմանշային շարքի անդամները հաճախ իրարից տարբերվում են իրենց արտահայտած վերաբերմունքով, զգացմունքայնությամբ և գնահատմամբ, ինչպէս

աղաչել-աղերսել-մաղթել-աղօթել-պաղատանս մատուցանել:

Աղաչել - «... գրեցի ես առ քեզ՝ **աղաչել** զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս» [11, էջ 149]:

Աղերսել - «...Յետ այսր ամենայնի ի հիւանդութեան եղեալ Տիգրան **աղերսել** ի սէր զԱրտաշէզ արքայ Պարսից, յաղագս հպարտութեան հօրն՝ հանելով ի նոցանէ զնախագահութիւնն» [11, էջ 132]:

Մաղթել - «...հրամայեն արձակել զգերեալսն, և առ նոյն այր **մաղթել** ապաշխարութեամբ» [11, էջ 264]:

Աղօթել - «...ոչ միայն գովել արժան է քեզ, այլ և ի վերայ քո **աղօթել**՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի» [11, էջ 5]:

Պաղատանս մատուցանել «եպիսկոպոսացն ժողովեալ՝
պտղատանս մատուցանէին, զի մի անփոյթ արասցէ զկորստենէն
իւրոյ վիճակին» [11. էջ 292]:

Այսպիսով համանիշները Մ. Խորենացու երկում ունեն
ոճական բազմազան երանգավորումներ և գեղագիտական մեծ
արժեք, մասնավորապես՝

1. Դրանց շնորհիվ խոսքը դառնում է պատկերավոր,
արտահայտիչ:

2. Հեղինակը խուսափում է անհարկի կրկնություններից,
խոսքի միօրինակություննից:

3. Ընթերցողը հստակ ու բազմակողմանիորեն է ընկալում
մատուցվող նյութը, համարվում են նրա պատկերացումները
իրական աշխարհի, դեպքերի, տարբեր առարկաների ու երևույթ-
ների նկատմամբ:

Հոմանիշները դասակարգվում և խմբավորվում են տարբեր
չափանիշներով և մոտեցումներով.

ա) ըստ իմաստային դաշտի,

բ) ըստ խոսքիմասային պատկանելության,

գ) ըստ մենիմաստության կամ բազմիմաստության,

դ) ըստ կառուցվածքի (անվանողական)

ե) ըստ ձևի և իմաստի (ձևաիմաստային),

զ) ըստ նույն կամ ընդհանուր բաղադրիչի (համաբաղադրիչ),

է) ըստ բարբառային նեղ կամ ընդհանուր գործածության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մուրիապյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում.
Եր., 1971.- էջ 175:

2. Խաչատրյան Օ., Մ.Խորենացու «Հայոց պատմության»
հաճախականության բառարան. - Եր. - 1986:

3. Այտընյան Հ. Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար
կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա. - 1866:

4. Պետրոսյան Հ., Հայոց լեզվի գործնական քերականություն. - Ա մաս. - Եր.,1927:
5. Մուրվալյան Ա. Ա., Հայոց լեզվի բառային կազմը.-Եր., 1955. - էջ 103-110:
6. Գազանճյան Հ., Քերականութիւն արդի հայերէն լեզուի Ա և Բ մաս (հնչաբանութիւն և բառագիտութիւն). -Պոլիս. -1924:
7. Սևակ Գ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց. - Եր.,1955:
8. Աղայան Է.Բ., Լեզվաբանության ներածություն. -Եր., 1967:
9. Բեդիրյան Պ.Ս., Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մասին, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, գիտական աշխատություններ.- Եր.,1956. էջ 120-131:
10. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ. - Եր.,1987:
11. Խորենացի Հայոց պատմութիւն.: Տփղիս, 1913:
12. Խորենացի Հայոց պատմութիւն, աշխարհաբար թարգմանությունը Ստ. Մալխասյանի. - Եր. 1990.-էջ 144:
13. Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ. - Եր.: Լույս, 1980. -էջ 237:

О.М. Хачатрян, Н.П. Саркисян - Семантический анализ лексики «Истории армении» Мовсеса Хоренаци (синонимы) - Синонимы в сочинении М.Хоренаци имеют множество смысловых нюансов и большую эстетическую ценность. Благодаря этому речь становится образной, выразительной. Автор избегает излишних повторений, однообразия речи. Читатель ясно и многосторонне воспринимает материал, восполняет свои представления о реальном мире, событиях, различных предметах и явлениях.

Синонимы классифицируются по различным критериям и подходам: по семантическим полям; лексико-семантической принадлежности; однозначности/многозначности; по структуре

(именные); форме и смыслу (морфолого-семантические); по наличию общего или одинакового компонента; по узкой или широкой диалектной функции.

O. Khachatryan, N. Sargsyan - Semantic analysis of the vocabulary of Movses Khorenaty's "History of Armenia" (synonyms)

Keywords: synonym, identifier, marker, meaning field, multitudinous, multitudinous, stylistic coloring, aesthetic value, identical synonym, diverse synonym

Synonyms in the work of M. Khorenatsy have many semantic nuances and great aesthetic value. Thanks to this, the speech becomes figurative, expressive. The author avoids unnecessary repetitions and monotony of speech. The reader clearly and comprehensively perceives the material, makes up his/her ideas about the real world, events, various objects and phenomena.

The synonyms are classified by different criteria and approaches: by semantic fields, lexical and semantic affiliation, monosemy/polysemy, structure (nouns), form and meaning (morphological and semantic), having a common or identical component; narrow or wide dialectical usage.

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՁՆԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ**

Խաչատրյան Օ.Մ., Սարգսյան Ն.Պ.

Բանալի բառեր. հարադիր բարդություն, բառապաշար, նախդիր, նախադաս, երկանդամ:

Օձնեցին՝ քրիստոնեական հավատքի ջատագովն ու իր ժողովրդի հոգևոր առաջնորդը, ծավալել է եկեղեցական և հասարակական-քաղաքական լայն գործունեություն՝ պայքարելով եկեղեցու միասնականությունը փլուզողների դեմ: Նա ոչ միայն քաղաքական գործիչ է, այլև փիլիսոփա, մեծ մտածող, գրող, որը թողել է բավական հարուստ գրական ժառանգություն, դրանք աստվածաբանական, դավանաբանական ճառեր, քարոզներ են, հայ եկեղեցու բարեկարգությանը նվիրված կանոններ, ներբողներ, շարականներ:

Օձնեցու երկերի ժողովածուն նվիրված է հայոց եկեղեցուն, դրա ամրապնդմանն ու կանոնակարգմանը և եկեղեցու հակառակորդների դեմ պայքարին: Նա գրել է ճառեր, կատարել մի շարք խմբագրական աշխատանքներ: Հովհան Օձնեցու «Իմաստասեր» մականունը ուղղակիորեն վկայում է, որ նա ժամանակակիցների շրջանում հռչակված է եղել իր փիլիսոփայական գիտելիքներով, գիտական պատրաստվածությամբ և հեղինակությամբ մեծ դեր է խաղացել ժամանակի մատենագրության աստվածաբանական և մեկնողական գրականության ստեղծման գործում [1]:

Հայտնի է, որ առանձին հեղինակների լեզվի, հատկապես բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես նպաստում են բնագրային համաբարբառները, որոնցում հավաստի փաստերով արտացոլվում են տվյալ հեղինակի երկի լեզվական միավորները: Վերջիններիս ուսումնասիրության շնորհիվ էլ կարող են բացա-

հայտվել հայերենի զարգացման միտումները, լեզվի քերականական կառուցվածքի տարածամասնակյա յուրահատկությունները:

Համաբարբառային մշակման ենք ենթարկել նաև Հովհան Իմաստասեր Օձնեցու 1833 թ. Վենետիկի Մուրբ Ղազարի տպարանում հրատարակված «Մատենագրութիւնք» ժողովածուն: Այն լայն հնարավորություն է տալիս քննելու լեզվական զանազան երևույթներ և պարզելու տվյալ երկում առկա փաստերն ու իրողությունները:

Համաձայն բառային միավորների խոսքիմասային պատկանելության՝ բարդությունները լինում են անվանական և բայական: Բայական բարդությունները առանձին խումբ են կազմում հարադրական բարդությունների շարքում: Լեզվական նյութը համատարած ընտրանքի սկզբունքով քաղել ենք Հ. Օձնեցու երկերի համաբարբառից: Նրա երկերը հարուստ են բառակազմության և՛ հարադրական, և՛ վերլուծական կառույցներով: Մեր նպատակն է սույն հոդվածի շրջանակներում քննել Օձնեցու երկերի բառապաշարի յուրահատուկ շերտերից մեկը՝ բայական վերլուծական բարդությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն և՛ 7-8-րդ դարերի գրաբարի բառակազմության, և՛ հեղինակի ոճի առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից:

Շնորհիվ այն բանի, որ բայն արտահայտում է գործողության գաղափար, առարկաների հարաբերություններ, այն խոսքին տալիս է շարժունություն, կյանք ու կենդանություն [2]:

Հարադրությունների գիտական ուսումնասիրությամբ զբաղվել է Մ. Աբեղյանը: Նա տվել է հարադրությունների սահմանումը, դրանք տեսակավորել բառակազմական տեսանկյունից: Բայերի, ինչպես նաև վերլուծական բայերի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև այլ հայ անվանի լեզվաբաններ: Նրանք վերլուծական կազմության բայերն անվանում են տարբեր ձևերով՝ հարադրական բայեր, հարադիր բայեր, բայական հարադրություններ, վերլուծական բայեր: Հարադրական կազմություններն առաջացել են ժամանակի ընթացքում շարահյուսական կապակցությունները

բառային միավորների վերածումով: Բայական հարադրությունների մեջ քերականական իմաստ կրողը բայական մասն է: Հարադրությունները բնորոշվում են իրենց հիմնական բաղադրիչների ձևային անկախությամբ, սակայն ունեն բառային իմաստի ամբողջություն, բաղադրիչների բառային իմաստները ներառվում են մի ընդհանուր իմաստի մեջ, որի հիման վրա այս կազմություններն ընկալվում են իբրև բառական առանձին միավորներ՝ բառարանային բառեր: Այսպիսի կազմությունների առանձնահատկությունն այն է, որ հիմնական բաղադրիչներն ունեն իմաստային միասնություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարադիր բարդությունների մեծ մասը բայական է: Դրանք կայուն կապակցություններ են: Բարդության բաղադրիչները պահպանում են իրենց խոսքիմասային պատկանելությունը, քերականական համապատասխան հատկանիշները, բառակազմական տեսանկյունից իրար նկատմամբ համագոր են, բայց շարահյուսական առումով դրանց մեջ գոյություն ունեն գերադաս և ստորադաս անդամների զանազան հարաբերություններ: Հարադրական բարդությունների շարքում բայական հարադրությունները առանձին խումբ են կազմում, որոնց բաղադրիչներից մեկը անպայման բայ է, իսկ մյուսը՝ որևէ այլ խոսքի մաս (պայմանականորեն կոչում ենք անվանական, թեև որոշ դեպքերում հանդես են գալիս որպես այլ սպասարկու խոսքի մասեր): Բայական հարադրությունների կառուցվածքային կաղապարները դասդասելու համար նկատի ենք ունեցել անվանական (ոչ բայական) մասի զանազան արտահայտությունները: Դրանք կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի և ունենալ նաև համապատասխան քերականական ձևավորում: Այդ ձևավորումը անունների դեպքում դրսևորվում է տարբեր թեք հոլովաձևերով և նախդրավոր կազմություններով: Վերլուծական կառույցների բաղադրիչների ձևավորման ու փոխհարաբերությունների ընդհանուր առանձնահատկությունների պահպանման համար անհրաժեշտ է.

1. Բաղադրիչների ինքնուրույն բառային շեշտի պահպանում, երբ բառերը չեն հնչյունափոխվում, օրինակ՝ ի խաչ հանել, ի միտ առնուլ:
2. Բաղադրիչների քերականական ձևավորման դեպքում քերականական իմաստի պահպանում, օրինակ՝ ակն դնել, ակն ունել, աղօթս առնել:
3. Վերլուծական բարդության բաղադրիչների՝ նախդիրների բառային և խոսքիմասային արժեքների պահպանում, օրինակ՝ գվորձ առնուլ, ընդ քիրտն մտանել, ի հող դառնալ, ի ձեռն առնուլ:
4. Բաղադրիչների շարադասության փոփոխություն, օրինակ՝ առնուլ գողորմութիւն //իրաւունս//հաւատալի, առնուլ յանձն//սկիզբն, թողուլ ի բաց:
5. Դարձվածային իմաստի դրսևորում, օրինակ՝ ակն դնել- աչք տնկել, ակն ունել- հուսալ, սպասել, գալ ի խնդիր- իրարու հետ ինկնալ... (ԱԲ, էջ 179):

Բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ Օձնեցու երկերը հարուստ են բառակազմության թե՛ համադրական, թե՛ վերլուծական կառույցներով, և վերլուծական բարդությունների մեծ մասը բայական են, սրանցում հարադրվում են բայը և անունը, հատկապես գոյականը, երբեմն էլ՝ ածականը և այլ խոսքի մասեր: Նրա բառապաշարի ինքնատիպությունը և հեղինակային ոճի անհատականությունը երևում է նաև հարադրավոր բայերի գործածության մեջ: Սույն հոդվածի շրջանակներում ցանկանում ենք բացահայտել բայական հարադրությունները՝ իրենց դրսևորած առանձնահատկություններով: Օձնեցու բայական հարադրություններն ունեն կառուցվածքային տարբեր կաղապարներ: Պետք է ասել, որ հարադրությունների մեջ անվանական հարադիրները մեծ մասամբ հանդես են գալիս ուղիղ ձևով (ուղիղ ձև ենք համարում նաև հայցական հոլովաձևը՝ առանց *զ* նախդրի, որովհետև հայցականի հոլովական իմաստը հարադրավոր բայական կազմություններում մեծ մասամբ մթագնած է): Հարադիրների թեք

հոլովները առհասարակ ձևավորված են լինում տարբեր նախդիրներով: Հայցական հոլովը՝ տարբեր նախդիրներով, լայն կիրառություն ունի, որը կարելի է բացատրել բայերի խնդրառական առանձնահատկությունների արտացոլումով, իսկ մյուս հոլովաձևերը համեմատաբար ավելի քիչ են հանդես գալիս: Ներկայացնենք Օձնեցու երկերի ժողովածուում գործածված բայական հարադրությունների կառուցվածքային կաղապարները՝ ըստ տարբեր հոլովաձևերի և նախդիրների: Բայական հարադրություններից, որպես բնագրային վկայություններ, յուրաքանչյուր կաղապարի համար մեջբերում ենք միայն մեկ-երկու տիպական նախադասությունների օրինակներ՝ ներկայացնելով նաև նույնի աշխարհաբար տարբերակը՝ համաձայն Վ. Համբարձումյանի թարգմանության(Հովհան Իմաստասեր Օձնեցի, աշխարհաբարի փոխադրումը՝ Վ. Համբարձումյանի, 1999 թ.), նշում ենք և՛ բնագրի, և՛ թարգմանության համապատասխան էջերը:

1. Անվանական հարադրի հայցական հոլովաձև:

ա) առանց նախդրի, գոյականի եզակի թվով՝

ԱԿՆ ՈՒՆԵԼ- ... յերեկոյեայ շաբաթուն մինչև ի լուսանալ միաշաբաթուն սպասել և ակն ունել արժանե, գյալիտենականն զգենուլ կենդանություն (էջ 16):...ուստի և ակն ունիմք զօգնություն ընդունել յարարողէն յերկնի և յերկրի (էջ 113)արժե, որ շաբաթ երեկոյից մինչև կիրակի /օրվա/ լուսանալը սպասենք և այք պահենք /որպէսզի/ կրենք հավիտենական կենդանությունը (էջ 42):որտեղից և ակնկալում ենք ընդունելու օգնություն երկնքի և երկրի Աստծուց (էջ 196):

ՍԱՂԿԱՔԱՂ ԱՌՆԵԼ - ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաքառ առնելով ցշնորհաց, լիացուցանել զագահութեանն իւրոյ ինն ջանայր զուսումնասիրութիւն (էջ 2): ...հաճախ /իր/ շնորհներից պայծառագոյնը ծաղկաքաղ առնելով՝ ջանում էր ինձանով լրացնել ուսման ձգտելու իր սերը (էջ 22):

ՀԱՄԱՐԶԱԿՈՒԹԻՒՆ ԱՌՆՈՒԼ - Նախկին թոյլ տալով պղծութեանն յառաջել և յափշտակել զօրինաւորն զայն անկողինս,

և ապա զգիշերայինն իբրև գտուրնջենայինն ի լոյս բերել համարձակութիւն առնուլ (էջ 11): Նախ թույլ տալով, որ պղծությունն առաջ գնա և հափշտակի այն օրինական անկողինը, այնուհետև *համարձակություն ունենալով* զիշերայինն իբրև ցերեկվանը ի լոյս բերի (էջ 35):

Այժմ ներկայացնենք բոլոր օրինակները՝ առանց նախադասությունների.

ակն // ունկն դնել, ակն ունել, բուռն // ոտն հարկանել, զիշերապաշտօն // երթեկութիւնս [3] // ծաղկաքաղ // հաղորդութիւն // համարձակութիւն // յանձն // սկիզբն առնուլ, գիր հանել, բնակել // գոյժ // թոյլ // թոյղ // տեղի տալ, երկիր պագանել, դէպ // երկնապիշ // վահանընկեց լինել, ծունր կրկնել, հրաման // տեղի տալ, յանձն // պար // սկիզբն // վկայութիւն առնուլ, հոգ տանել, մատն եղանիլ:

բ) առանց նախորդի անեզական գոյականի հայցական հոլովով՝

ԱՂՕԹՍ ԱՌՆԵԼ-«Արթուն լերուք, և անդադար աղօթս արարէք, զի ոչ զիտէք, եթէ յորում ժամու տէրն ձեր գայ» ... և ի վերայ բերէ, թէ «Արթուն կացէք և անդադար աղօթս արարէք. զի մի մատնիջիք ի փորձութիւն - «Արթուն կացէք, և անդադար աղթեցէք, որովհետև չգիտէք, թէ տանտերը երբ կգա»... և ավելացնում է, թէ «Արթուն կացէք և աղոթեցէք, որպէսզի փորձության մեջ չընկնէք» (էջ 182):

ԱՆԱՐԳԱՆՍ ԿՐԵԼ-«Անարգանս ինձ կրել առաջի կայր» (էջ 79): Ես պիտի *հանդուրժեի իմ* դէմ եղած *անարգանքը* (էջ 122): Այս բայական հարադրությունը նույնպէս վկայված չէ ԱԲ-ում:

Այսպէս է նաև՝ աղօթս առնել, անարգանս կրել, գիրկս // կարծիս արկանել, երթեկութիւնս առնել, հաղորդութիւնս առնել:

2. Նախորդով՝

ա) անվանական հարադրի եզակի թվով, հայցական հոլովով, բայական հարադրի հետադաս դիրքով՝

ՉՓՈՐՉ ԱՌՆՈՒԼ - «ցփորձ առեալ կարող է և փորձանաւորացն օգնական լինել» (էջ 57): «... *փորձ ձեռք բերելով* կարող է նաև փորձի ենթարկվողներին օգնական դառնալ» (էջ 86):

ԶԱՆՑ ԱՌՆԵԼ - «Ժամանակն ստիպէր առնել այնպէս ... զի մեծութիւն առաջի անկեալ իրաց՝ զփոքումբքն զանց առնել և անտեսել վարդապետէ»: (Էջ 6): «... Ժամանակն էր ստիպում այնպէս անել... որովհետև ուսուցանում է ձեռքի տակ եղած մեծ բաները մանրութիւններով զանց առնել և *անտեսել*» (էջ 28):

բ) անվանական հարադրի հոգնակի թվով, հայցական հոլովով, բայական հարադրի հետադաս դիրքով՝

ԶՄԵՂՍ ԲԱՌՆԱԼ - «Նա զմեղս մեր բառնայ և վասն մեր չարչարի» (էջ 91): «Նա մեր *մեղքերն է վերցնում* և մեզ համար չարչարվում» (էջ 163): ԱԲ-ում **զմեղս բառնայ** բայական հարադիրը արձանագրված չէ:

դ) անվանական հարադրի գործիական հոլովով, բայական հարադրի հետադաս դիրքով՝

ԶՍՏԱԻ ԱՕԾԵԼ - «Ապա զմտաւ ւածեալ թէ և ոչ մի ինչ իրօք գորոգայթս զայս փշրել կարիցեմ Փրկանաւորաց զմեզ» (էջ 21): «Ապա մտածելով, որ ոչ մի բանով էլ չեմ կարող այս որոգայթը փշրել, էթե ոչ նրանով... փրկագործեց մեզ» (էջ 50): որոգայթը:

3. Ի նախդրով, եզակի թվով, անվանական հարադրի նախադաս դիրքով՝

ա) տրական հոլովով՝

ՅԱՆՁԻՆ ՈՒՆԵԼ - «Զի գոր այլոցն բանին հրամայեաց, ինքն արդեամբք յանձին կալաւ կատարել» (էջ 102): « Որովհետև ով ուրիշներին այն խոսքով հրամայեց, ինքը գործով յանձն առավ կատարելու» (էջ 183):

բ) հայցական հոլովով

Ի ԳԼՈՒԻՍ ԲԵՐԵԼ - «...ոչ ինչ արգելու զառաջի արկեալս ի գլուխ բերել մեզ հոգևորական ջանս» (էջ 23): «...ոչ մի հոգևոր ջանք չի արգելում, որպէսզի *գլուխ բերենք* ի գործ դրվածները» (էջ 52):

Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼ - «...քանզի բոլորն ի մասանց բաղկանայ, և զբաղկացեալն ի մասանց քակտէ ապականութիւն, զայլայլութիւնն ի գործ արկանելով» (էջ 77): «...որովհետև ամբողջը

մասերից է բաղկացած, և բաղկացածը մասերի է բաժանում ապականությունը՝ *գործի ղնելով* (որակի) փոփոխությունը» (էջ 118):

Ի ԶԱՐՄԱՑՈՒՄՆ ԳԱԼ - «...ընդ բարձրություն հասակին հիացեալք վասն այլոց այլովիք քաջահաճութեանցն պատահմանց ի գարմացումն եկեալք՝ աստուածս անուանեցին» (էջ 37): «...բարձր հասակով հիանալով խաբվեցին, մյուսներին էլ բարեհաճ պատահումները համար *գարմանալով* աստվածներ անվանեցին» (էջ 130-131):

Ի գլուխ բերել, ի գործ արկանել, ի գարմացումն գալ, ի լոյս բերել, ի խաչ բարձրանալ, ի խաչ ելանել//հանել, ի կիր արկանել, ի հող դառնալ, ի միտ առնուլ:

Վերոնշյալ հարադրական բարդություններում բաղադրիչներն ունեն ինքնուրույն բառային շեշտ և հնչյունափոխված չեն:

4. Ի նախդրով եզակի թվով, հայցական հոլովով՝

ՅԱՌԱՋ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ- «...սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն ի ձիթենեաց լերինն, եղ ծունր» (էջ 102-103): «...ձիթենիների լեռան վրա աշակերտներից փոքր-ինչ *առաջ կանգնելով* ծնրադրեց» (էջ 183):

ՅԱՌԱՋ ԿՈՉԵԼ - «Արդ զմեզ յառաջ կոչէ նա ինքն ընդդեմ յառնել երկակաց ոմանց առ միմեանս մենամարտուցելոց յայլ ազգեացն գնդից ... և ամբարտաւանութեամբ յառաջ կոչողաց զմեզ» (էջ 46): «Արդ նա ինքը մեզ *կոչում է առաջ* ընդդեմ կանգնելու միմյանց դեմ մենամարտող այլազգիների երկու կողմերի գնդերին, նաև մեզ ամբարտավանությամբ մարտահրավեր նետողներին» (էջ 144):

յառաջ բերել//գալ//կոչել//մատուցանել//վարել:

5. Ընդ նախդրով, անվանական հարադրի հայցական հոլովով, եզակի թվով՝

ԸՆԴ ՄԻՏ ԱԾԵԼ - «...գարդարոցն ընդ միտ ածցես զյապաղումն» (էջ 22): «...մտաբերում ես արդարների ուշանալը» (էջ 50): «...ոչ յերկուսնամ՝ նմին ինքեան բազմեցելոյն ի նոսա Քրիստոսի գերկրպագութիւնն մատուցանել, ոչ հայելով յերևելին»

առաւել՝ քան թէ զանտեսանելին ի նմա զանձեալ ընդ միտ ածելով» (էջ 42): «... չեմ երկմտում, թե նրանցում բազմած նույն իրեն Քրիստոսին եմ երկրպագություն մատուցում ոչ առավել երևացողին նայելով, քան որ *մտածում եմ* նրա մեջ դրված անտեսանելիի մասին» (էջ 139):

ԸՆԴ ՔԻՐՏՆ ՄՏԱՆԵԼ - «...որ իբրև զձի ընդ քիրտն մտեալ՝ ոչ կասես յընթացից քոց» (էջ 65): «... և ինչպես քրտինք մտած ձի չես կասեցնում քո ընթացքը» (էջ 100-101):

ընդ միտ ածել, ընդ քիրտն մտանել:

Ունենք մեկ օրինակ, որում բայական բաղադրիչը միջադաս է՝ ընկած ընդ նախորդի և անվանական հարադրի միջև:

ԸՆԴ ԵԼԱՆԵԼ ՍՈՒԻ - «Արդ զիա՞րդ դու մոլորեցար՝ կամ ոչ իսկ ասել դէմ և առանձնաւորութիւն երեք անձնական զօրութեանն և կամ թէ ասել՝ չարաչար ասել ընդ Լիբեացոյն ելանել սուր, փոխանակ երից դիմաց և առանձնաւորութեան մի ասել դէմ և առանձնաւորութիւն»: (էջ 64): «Արդ դու ինչու՞ մոլորոյթյան մեջ ընկար, թե երեքանձնեա այն զորությունը չճանաչելով անձ և ինքնություն, թե ճանաչելով շատ վատ ճանաչեցիր, լիբիացու *դուրս քաշած սրի հետ*, երեք անձ և ինքնության փոխարեն մեկ անձ և ինքնություն ճանաչել» (էջ 99):

7. Առանց նախորդի, ածականական հարադրի նախադաս դիրքով, եզակի թվով

ԱՆԱՐԳ ԼԻՆԵԼ- «զի մի գրկեալք ի սմանէ՝ գրկեսցին յաստուծոյ. կամ անարգ լինել ի Քրիստոսէ, յանարգաց ուրուք ճեռս արկանելով զսա (էջ 116): *...որպեսզի զուրկ մնալով սրանից՝* գրկվեն Աստուծոց կամ *անարգվեն* Քրիստոսից՝ սա գցելով որոշ անարգների *ձեռքը*» (էջ 202):

ԱՆՏԵՍ ԼԻՆԵԼ- «աղաչէ՝ օգնական լինել տկարութեան բնութեանս՝ առ *ի խորտակել* զյարձակում լլկողացն, և ոչ անտես լինել մարդկային բնութեանս ի բարեգթութենէն տեառն» (էջ 82): «...աղաչում է օգնական լինել իմ այս տկար բնությանը խորտակելու չարչարողների հարձակումները *կշանտեսել* իմ մարդկային բնությունը տիրող բարեգթությունից» (էջ 151):

անարգ // անտես // զուգարնակ լինել, անտես մնալ, յայտ // պսակադիր առնել, խորշակահար // խօսակից // հասու // հնազանդ// հուպ // փախստեայ լինել, հաստատուն կալ:

Բայական հարադրի նախադաս դիրքով՝

ա) առանց նախդրի՝

ԱՌՆԵԼ ԻՐԱԻՈՒՆՍ - Իսկ ի մէնջ «Զի՞նչ հայցէ տէր աստուած մեր, բայց առնել իրաւունս և գործել զարդարութիւն» (էջ 41): Իսկ մեզանից «Ի՞նչ է հայցում մեր Տէր Աստվածը, միայն իրավունք առնել և արդարություն գործել» (էջ 137):

ԱՌՆՈՒԼ ՄԿԻԶԲՆ - «...և ոչ աստուածն Բանի Մարիամայ առեալ սկիզբն, որպէս Փոտինոսի թուեցաւ ասել» (էջ 50): «... և Բանն Աստված Մարիամից սկիզբ չի առել, ինչպէս որ Փոտինոսին է թվում ասելու» (էջ 74):

ԿԱԼ ԱՌԱԶԻ - «Արժանի լինիցիք, ասէ, զերծանել ի նեղութեանց անտի՝ որ գալոցն է, և կալ առաջի որդւոյ մարդոյ» (էջ 16): «Արժանի լինէք, - ասում է,- զերծ մնալ այն նեղություններից, որ լինելու է և կանգնելու մարդու Որդու առաջ» (էջ 43):

Առնուլ իրաւունս, առնուլ հաւատալի (ԱԲ-ում չկա), առնուլ սկիզբն, գալ խոստովանութիւն (ԱԲ-ում չկա), դնել գայթակղութիւն, արգելք, որոգայթ, չար. օրինակ (ԱԲ-ում չկա) դնել ծունր-ծունկ չոքիլ, տալ թոյլ, տալ կատարել, տալ ճաշակել, տալ նշան, կալ առաջի:

բ) ի նախդրով

ԿԱԼ Ի ՄՊԱՍՈՒ - «Ելի ի չօրէ և եկի յաշխարհ. վասն այնորիկ անշունչ և լռութեամբ կաննի սպասու բանից տէր ունականաց»: (էջ 106); «Ծնվեցի Հորից և եկա աշխարհ», դրա համար է որ անշունչ լռությամբ մնում են Տիրոջ խոսքին ծառայելուն» (էջ 188):

ՀԱՆԵԼ Ի ԳԼՈՒԽ - «Զի գոր այլոցն բանին հրամայեաց, ինքն արդեամբք յանձին կալաւ կատարել յորժամ ելեալ ի լեառն հաներ զգիշերն ի գլուխ յաղօթս աստուծոյ, առ ի մեր վարդապետութիւն զայն առնելով» (էջ 102): «Որովհետև ով ուրիշներին այն խոսքով հրամայեց, ինքը գործով հանձն առավ կատարելու,

երբ լեռը *բարձրանալով* գիշերն է լուսացնում Աստծուն աղոթելով» (էջ 183):

Կալ ի սպասու //ի վերայ, հանել ի գլուխ//ի խաչ, յառնել ի վերայ, կալ ի զենումն:

**8. Մակբայական հարադրի նախադաս դիրքով՝
ա) առանց նախդրի՝**

ԱՐՏԱՔՍ ԸՆԿԵՆՈՒԼ - «Յորում ժամու ընդ երեկս աւուրն արտաքս րնկեցաւ ի կենաց տեղոյն» (էջ 100): «Որ ժամին երեկոյան արտաքսվեց դրախտից» (էջ 177): Այս բայական հարադրությունն էլ ԱԲ-ում արձանագրված չէ:

ԱՐՏԱՔՍ ՍԱՀՄԱՆԵԼ - «...ամեննին արտաքս սահմանեալ զինքն ի բարձրութենէ խոնարհեցուցանողին, զոչէ քաջալերաբար և ասէ» (էջ 83): «...ամբողջովին *դուրս դնելով* իրեն խոնարհեցնողի բարձրությունից, զորացած հոգով ձայն է տալիս և ասում» (էջ 151): ԱԲ-ում **արտաքս սահմանել** բայական հարադրություն արձանագրված չէ:

ԹԱՓԱՆՑԱՆՑ ԼԻՆԵԼ - «Յայնժամ բոլորովին ես ինքն էի լուսատեսիլ յաստուած այնոյ գափանցանց լինելոյն շուրից» (էջ 2): «Այն ժամանակ ես ինքս ամբողջովին *միջամուխ էի լինում* աստվածային ցուքին» (էջ 21):

ԸՆԴԴԵՄ ԲԵՐԵԼ - «...և անդէն աւետարանական բանիցն ընդդէմ բերեն, թե...» (էջ 103): «... և դարձյալ Ավետարանի խոսքերին *հակառակ բերում են*, թե...» (էջ 184):

ԸՆԴԴԵՄ ՅԱՌՆԵԼ - «Արդ զմեզ յառաջ կոչէ նա ինքն ընդդէմ յառնել երկակաց ոմանց առ միմեանս մենամարտուցելոց յայլազգեացն գնդից» (էջ 46): «Արդ՝ նա ինքն մեզ կոչում է առաջ *ընդդէմ կանգնելու* միմյանց դէմ մենամարտող այլազգիների երկու կողմերի գնդերին» (էջ 144):

Ընդդէմ բերել // գալ//յառնել, ընդ մէջ առնել, ընդ առաջ ելանել // տանել, թափանցանց լինել, արտաքս ընկենուլ // սահմանել յանդիման կրկնել, յանդիման կալ:

/ բնագրում ի բաց, ի վայր, ի վեր, ի վերայ մակբայներով օրինակները

անհամեմատ շատ են

Ի ԲԱՅ ԲԱՌՆԱԼ - «զի թէ և ասենք մի բնություն Բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ և ջաղջախ մտածութեամբ, որպէս թէ միոյն ի միւսմէն ի բաց բարձեալ» (էջ 50): «Որ թէն ասում ենք մարմնացած բանը մի բնություն (ունի), (չենք ասում) այդպիսի խելահեղ և կցկտուր ըմբռնումով ինչպէս որ մեկը մյուսից *գատված*» (էջ 75):

Ի ՎԱՅՐ ԱՆՎԱՆԵԼ - «Եւ մի համառեցիս՝ անհաւատութեան խորհրդովք ի վայր անկեալ (էջ 44): Եվ մի համառի՝ անհավատ մտածումներով *ցած գլորված*» (էջ 142):

Ի ՎԵՐԱՅ ԱՕԵԼ - «Յորմէ ոչ փոփոխեցի նախահարցն հաստատեալ սահմանք. այսինքն ոչ տէրունականն ատուր զապաշխարութեանն ի վերայ ածել զնսիր» (էջ 15): «Որից չպիտի փոփոխվեն նախկին հայրերի կողմից հաստատված սահմանները: Այսինքն՝ տերունական օրվա ապաշխարության ծանրությունը *չավելացնել*» (էջ 41):

Ի ՎԵՐ ԵԼԱՆԵԼ - «...ի փապարաց ձորոց առաջնորդեաց աշտիճանօք ի վեր ելանել ի բարձրագոյն յիմաստն» (էջ 97): «... և ինչպէս ձորերի խորխորատներից առաջնորդեց աստիճաններով *վեր ելնելու* դեպի բարձրագոյն իմաստը» (էջ 173):

Ի բաց բառնալ // գնալ // դնել, երթալ // թողուլ // լուծանել // խափանել // կալ // կորուսանել // կրճատել // հալածել // հանել // մեկնել // մերժել // յուղարկել // ոստուցանել // ջնջել // տանել // փարատել // փոխել, ի վայր անկանել // թողուլ // կործանել // սողոսկել // վտանգել // քարշել, ի վեր ելանել // հայել, ի վերայ ածել // անկանել // բերել // գալ // դնել // ելանել // ընկենուլ // հասանել // հարկանել // վազել:

Ինչպէս երևում է վերոնշյալ բարդություններից, մակբայական հարադիրը ձևավորված է ի /յ/ նախդրով և տարածական իմաստ արտահայտող բառով:

9. Անձնական դերանվան բացառական հոլովով, եզակի թվով

ԶՔԷՆ ԳՈՂԱՆԱՄՔ - «Արժան է ի գիշերին ... ասել զչորեսին

սաղմուսն «Քարոզութիւն», «Զարթուցեալքս». «Աղօթք». «Զքէն գոհանանք» (էջ 28): «Անհրաժեշտ է, որ գիշերը ... նախ թող անգիր ասվեն միասնաբար առաջին չորս սաղմուսները «Քարոզ»-ը, «Զարթուցեալք»-ը, «Աղօթք»-ը, «Զքէն գոհանամք»-ը (էջ 60):

Հարադրավոր բայերի կառուցվածքային քննությունը ցույց է տալիս, որ բայերի հիմնական մասը երկբաղադրիչ է՝ կազմված հարադրից և հարադրյալից, օրինակ՝ հրաման տալ, թոյլ// թոյղ տալ և այլն, որոնցում բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև հեղինակը գործածում է նաև նախադաս բայերով հարադրություններ՝ կապված խոսքի ոճավորման հետ: Վիճակագրական քննությունը պարզում է, որ Օձնեցու մատենագրության ընդհանուր բառերի քանակն է 10044, բառարանային բառերինը՝ 1807, մեկ անգամ գործածված բառերինը՝ 877, վերլուծական բայերինը՝ 181:

Այսպիսով՝ Օձնեցու երկերի բառապաշարը աչքի է ընկնում մեծ հարստությամբ ու բազմազանությամբ, յուրահատուկ բառագործածությամբ: Հեղինակը խուսափում է նույն բառերը կրկնելուց՝ գործածելով զանազան, հաճախ նորաստեղծ բառեր: Հարադրավոր բայերի կիրառությունը երկերին հաղորդում է ոճական բազմազանություն, պատկերավորություն, շարադրանքին հաղորդում է աշխուժություն, կենդանություն, լեզուն դարձնում հարուստ, պատկերավոր: Վերլուծական բայերի շնորհիվ լեզուն հարստանում է. առաջանում են բառարանային նորանոր միավորներ, օրինակ՝ ունել - ակն ունել, առնել - ծաղկաքաղ առնել, լինել - անարգ լինել և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պապյան Մ. Հովհան Բմաստասեր Օձնեցի, Կյանքը և գործունեությունը. – Ե., 1989. – էջ 40:
2. Պողոսյան Պ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ,

գիրք երկրորդ. - Եր.. 1994. - էջ 230:Առաքելյան Վ.Դ., Խաչատրյան Ա.Հ., Էլոյան Ս.Ա. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1,- Եր., 1979, -էջ 272:

3. Մարգարյան Ա.Ս. Հայերենի հարադիր բայերը. - Եր., 1966:

4. Արրահամյան Ա.Ա. Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1 . ին. - Եր., 1962. - էջ 727:

5. Ջահուկյան Գ.Բ. Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոչյան Վ.Ա. Հայոց լեզու, 1 մաս, Ա պրակ.- Եր., 1980. էջ 385:

6. Հովսեփյան Լ.Ս. Գրաբարի բառակազմությունը.- Եր., 1987. - էջ 358:

7. Հովսեփյան Լ.Ս. Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը.- Եր., 2016. - էջ 60:

Օ.Մ. Хачатрян, Н.П. Саргсян - Применение аналитических глаголов в произведениях Одзнеци - Лексический состав произведений Одзнеци богат и разнообразен. Автор избегает употребления одних и тех же слов и словосочетаний, часто использует неологизмы. Аналитические глаголы придают языку Одзнеци стилистическое многообразие, выразительность, делают его богатым, экспрессивным, жизненным.

Аналитические глаголы образуют новые словарные единицы, такие, как անել- ակնանել, առնել-ծաղկաբաղ առնել, լինել-լսնարգ լինել.

Օ. Khachatryan, N. Sargsyan - The use of analytical verbs in Ohan imastaser Odznetsy's works

Keywords: vocabulary, preposition, juxtaposition

The vocabulary of Odznetsy's works is emphasized by its richness and diversity. Odznetsy avoids repeating the same words using different and often newly-created words. The use of juxtapositional verbs give stylish variety, figurativeness, make the language rich, figurative, giving the explosion liveliness and vitality. Due to the analytical verbs the language becomes rich and arise new types of vocabularies.

ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՄԵՔԵՆԱԿԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հակոբյան Ֆրիդա

Արդի հայ բառարանագրության առջև դրված խնդիրներից հարկ է էապես կարևորել ինչպես հայերենի բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրությունը, բառերի իմաստային և հասկացական կողմերի բացահայտումն ու քննությունը, այնպես էլ լեզվի բառապաշարի համակարգչային շտեմարաններ, տվյալների հենքեր ստեղծելու և դրանք նորաբանություններով, նոր բառերով մեքենական եղանակով հարստացնելու հարցերը:

Ինչպես հայտնի է, նորաբանությունները բառային այն միավորներն են, այն նոր բառերը, արտահայտությունները և իմաստները, որոնք լեզվի տվյալ փուլում գիտակցվում են իբրև նոր իրողություններ, դեռևս չեն մտել գործուն բառապաշարի մեջ, չունեն ընդհանուր տարածում, լայն և հաճախական կիրառություն, իսկ առանձին դեպքերում նույնիսկ չեն արձանագրվել տվյալ լեզվի համապատասխան բառարաններում:

Հատկապես վերջին տասնամյակներում հայ լեզվաբանության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նորաբանությունների և նոր բառերի տարբերակման խնդրին, դրանց իմաստային քննությանը, բառակազմակերպական կաղապարների վերլուծությանը: Առավելապես կարևորվել է նաև նորաբանությունների բառարանների ստեղծումը, որը պայմանավորված է հայերենի բառապաշարի արդի վիճակն արտացալող բացատրական բառարանի բացակայությամբ, քանի որ համեմատաբար վերջին շրջանում ստեղծված բացատրական բառարաններից ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» (1969-1980), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (1976),

¹ Տե՛ս **Լ. Եզեկյան**, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2007, էջ 132:

Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղագրական, ուղախոսական, տերմինաբանական բառարանի» (1973) լույսընծայումից անցել է մի քանի տասնամյակ: Այդ ընթացքում լեզվի բառապաշարը կրել է նկատելի փոփոխություններ. մի կողմից՝ դուրս են մնացել բազմաթիվ հնաբանություններ, սակավ գործածական բառեր, մյուս կողմից՝ բառապաշարը համայրվել է հսկայական թվով նորաբանություններով, որոնցից շատերը տարիների ընթացքում լայնորեն գործածվել են և համայրել հայերենի բառապաշարի հարուստ բառազանձը:

Վերոնշյալ բացատրական բառարանները չեն ներառում լեզվում հաճախադեպ կիրառություն ունեցող բոլոր նորակազմությունները, ուստի ժամանակ առ ժամանակ հրատարակվում են նորաբանությունների բառարաններ: Մինչև օրս ստեղծված նորաբանությունների բառարաններից կարող ենք առանձնացնել Ֆ. Խլդաթյանի «Բառարան-տեղեկատուն (նոր բառեր և իմաստներ)» (1982), որն ընդգրկում է 70-80-ական թթ. ժամանակակից հայերենում ստեղծված (մասամբ նաև նախորդ բառարաններից դուրս մնացած) և այդ տարիների պարբերական մամուլում գործածված բառերը: Բառարանից դուրս են մնացել նորագույն գեղարվեստական գրականության մեջ գործածված, սակայն լայն կիրառություն չունեցող հեղինակային նորակազմությունները. լեզվաբանի գլխավոր նպատակը եղել է հաճախակի գործածվող բառերը ներկայացնելը: Հաջորդը Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարան» է, որը պարունակում է վերջին տարիներին մամուլում և գեղարվեստական գրականության մեջ գործածված շուրջ 3000 նոր բառեր ու տերմիններ² :

Նորաբանությունների բառարանների թվում առանձնանում է Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը» (2002): Ունենալով շուրջ 30 տարվա ժամանակահատվածում հայ մամուլի և գեղարվեստական գրականության մեջ գործածված նորաբանությունների հարուստ բառաքանակ՝ լեզվաբանն իր

² Ս. Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002, էջ 7:

բառարանում ընդգրկել է բառագիտական տեսակետից բոլոր տիպի նորաբանությունները՝ նորակազմ բառերը, տերմինները (ինչպես փոխառյալ, այնպես էլ սեփական բառակազմական կաղապարներով կազմված), իմաստային նորաբանությունները (արդեն եղած բառերի նոր ստացած իմաստները), նոր դարձվածքները, կայուն և ազատ բառակապակցությունները, հապավումները (ոչ գուտ տառային), առանձնահատուկ արտահայտությունները, ինչպես նաև անհատական-ոճական նորաբանություններն իրենց դիպվածական և հեղինակային տեսակներով³ :

Վերոնշյալ բառարանների համեմատությամբ իրենց ընդգրկած բառապաշարի ծավալով և բազմազանությամբ, պարբերաբար հրատարակվելու շնորհիվ առավել մեծաթիվ բառաքանակներկայացնելու հնարավորությամբ շահեկանորեն տարբերվում են ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվող «Նոր բառերի» պրակները: Պրակներում ներկայացված են համացանցից, մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից, հետուստատեսությունից, գովազդային հոլովակներից ու ցուցանակներից քաղված մեծաթիվ բառեր, որոնք վկայված չեն եղած բացատրական և նորաբանությունների բառարաններում: Պրակների հեղինակները նպատակ ունեն հավաքված հազարավոր նորակազմություններից, որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, կազմել «Նոր բառերի ընդարձակ բառարան», որում կարտացոլվեն XXI դարասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը⁴:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

⁴ **Ա. Գալստյան, Գ. Հովսեփյան, Ա. Մահակյան, Լ. Մահիկյան**, *Նոր բառեր. Ա պրակ*, Ե., 2015, էջ 4:

Մեծապես կարևորելով այս և հետագա շրջանում նորաբանությունների ու նոր բառերի համակողմանի քննությունն ու համապատասխան բառարանների ստեղծումը, կարծում ենք՝ արդի հայ բառարանագրության առաջնային խնդիրը ոչ թե նորաբանությունների, այլ հայերենի նորագույն բացատրական բառարանի ստեղծումն է: Տրամաբանական չէ քառորդ դար առաջ ստեղծված և լայն գործածություն ունեցող բառերը նորաբանություն համարել միայն այն պատճառով, որ դրանք վկայված չեն կես դար առաջ ստեղծված բացատրական բառարաններում: Նորագույն բացատրական բառարանի նպատակը պետք է լինի բառապաշարի համաժամանակյա վիճակի արտացոլումը, հետևաբար հայերենի հիմնական բառաֆոնդին պատկանող բառերին զուգահեռ վերջին տասնամյակներում ստեղծված հազարավոր բառերը կներկայացվեն ոչ թե որպես նորաբանություն, այլ հայերենի բառապաշարի մաս: Համակարգչային բառարանագրության զարգացման այս շրջանում միայն նորագույն բացատրական տպագիր բառարանն այլևս բավական չէ. ինչպես հայտնի է, համակարգչային տեխնիկան լեզվաբան-բառարանագիրներին առաջարկում է բառապաշարի մշակման և ներկայացման առավել լայն հնարավորություններ: Ուստի պետք է կարևորել բացատրական բառարանի հիման վրա հայերենի բառապաշարի լիակատար համակարգչային շտեմարան ստեղծելու հանգամանքը: Զխոսելով համակարգչային շտեմարանի՝ տպագիր բառարանի համեմատությամբ ունեցած նկատելի տարբերությունների մասին, նշենք միայն, որ այն հնարավոր կլինի շարունակ հարստացնել-համալրել նոր բառերով ու նորաբանություններով՝ առանց ժամանակային որևէ սահմանափակման: Ուստի հարկ կլինի նաև վերանայել նորաբանությունների ավանդական ըմբռնման հարցը, քանի որ նորաբանություն են համարվում բառարաններում դեռևս չընդգրկված բառերը, իսկ շտեմարանում կարելի է դրանք ավելացնել ցանկացած պահի: Ակնհայտ է, որ համակարգչային շտեմարանը կարող է լիովին արտացոլել բառապաշարի արդի վիճակը ցանկացած ժամանակահատվածի հարաբերությամբ՝ ի տարբերություն

տպագիր բառարանի, որի հրատարակումից անցնում են տասնամյակներ, և առաջանում է զգալի անջրպետ տվյալ փուլում լեզվի բառապաշարի և տպագիր բառարանում ներկայացված բառապաշարի միջև: Ավելին՝ շտեմարանն առավել լիակատար կլինի, եթե ներկայացնի ոչ միայն գրական արևելահայերենի, այլև արևմտահայերենի բառապաշարը: Պետք է մեծապես կարևորել արևելահայերեն-արևմտահայերեն առցանց բառարան ստեղծելու հանգամանքը՝ գրական հայերենի այս երկու ճյուղերի մերձեցման ուղիների որոնման համատեքստում:

Պակաս կարևոր չէ նաև նորաբանությունների բառարանները հարստացնելու, տեքստերում գործածված նորակազմությունների որոնման գործընթացն առավելագույն չափով մեքենայացնելու խնդիրը:

Հարկ է նկատել, որ վերջին տասնամյակներում ստեղծված նոր բառերի և նորաբանությունների իրական թիվն անհամեմատ ավելի մեծ է, եթե այն համեմատենք նորաբանությունների բոլոր բառարաններում ընդգրկված բառաքանակի հետ: Ուստի բովանդակային առումով առկա նորաբանությունների բառարանների հիմնական թերությունն այն է, որ դրանցում ներկայացված են լեզվում ստեղծված մեծաթիվ նորաբանությունների միայն փոքր մասը: Ոչ համաչափ են ընտրված նաև այն տպագիր և էլեկտրոնային աղբյուրները, որոնցից քաղվում են նորաբանությունները:

Նորաբանությունների բառարանները չեն արտացոլում նորաբանությունների ստեղծման ընդհանուր պատկերը, հիմնական օրինաչափությունները, քանի որ առանց տեխնիկական որևէ օժանդակության՝ անհնար է առանձնացել տեքստերում գործածված բոլոր նորաբանությունները: Հետևաբար հատկապես հիմա լեզվաբանների կողմից նորաբանությունների որոնման, քարտագրման ավանդական եղանակն այլևս չի կարող համարվել նորաբանությունների բառարանների կազմման հուսալի ճանապարհ:

Եթե նախկինում տեքստի հանրային տարածման միակ եղանակը դրա տպագրությունն էր, այժմ համացանցի ընձեռած լայն հնարավորությունների շնորհիվ նկատելիորեն հեշտացել է

Էլեկտրոնային տեքստերի կազմումը և դրանց հրապարակումը համացանցում: Ասվածի լավագույն ապացույցը հարյուրավոր հալալեզու կայքերի առկայությունն է: Նույնիսկ վերջին շրջանում ստեղծված նորաբանությունների բառարանների հիմքում առավելապես տպագիր աղբյուրներն են, ընդ որում՝ նորաբանությունները քաղված են հիմնականում գեղարվեստական գրականությունից, գրականագիտական, լեզվաբանական ուսումնասիրություններից, ամսագրերից («Անդին», «Աստղիկ», «Արտասահմանյան գրականություն», «Գարուն», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Նորք», «Պատմաբանասիրական հանդես») և լրագրերից («Ագրոլրատու», «Ազգ», «Գրական թերթ», «Երևանի համալսարան» ամսաթերթ, «Իրատես», «Հայաստանի Հանրապետություն», «Հրապարակ»)⁵:

Մինչդեռ համացանցային ամենահայտի և տարածված լրատվական ու մեդիա կայքերը բացակայում են բառարանների օգտագործված գրականության ցանկերից: Կարծում ենք՝ նորաբանությունների որոնումը պետք է սկսել հենց այդ կայքերում եղած էլեկտրոնային տեքստերից, քանի որ դրանցում նույնիսկ օրվա կտրվածքով կարելի է գտնել լայն և հաճախակի կիրառություն ունեցող մեծաթիվ նորաբանություններ՝ ի տարբերություն գեղարվեստական գրականության մեջ սակավ գործածություն ունեցող հեղինակային նորակազմությունների:

Հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում տեղի են ունենում արմատական վերափոխումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են մեծ թվով նորաբանությունների ստեղծմանը: Այնուամենայնիվ, դրանցից նույնիսկ հաճախադեպ գործածվողները բացակայում են նորաբանությունների բառարաններից: Օրինակ՝ *վերջին շրջանում էլեկտրոնային տարբեր համակարգերում լայնորեն օգտագործվում են այնպիսի վճարամիջոցներ, ինչպիսիք են կրիպտոարժույթները: 2013 թվականից բիրթ-*

⁵Տե՛ս նշվ. աշխ., էջ 151-155:

քոյինը դարձավ ամբողջ աշխարհում շրջանառվող ամենատարածված **կրիպտոարժույթը**: Կան **կրիպտոծառայություններ** մատուցող բազմաթիվ ընկերություններ: **Կրիպտոարժույթ** ստանալու ողջ գործընթացը կոչվում է **մայնինգ**, այն մասնագիտացված համակարգիչները, որոնք ապահովում են **բիթքոյինների** ցանցի անվտանգությունը, հաստատում են վճարումները և թողարկում թվային նոր դրամներ, անվանվում են **մայներ**: **Բիթքոյինով** կատարվող գործարքները գրանցելու եւ հաստատելու համար գործածվող թվային տեխնոլոգիան կոչվում է **բլոկչեյն** (բլոկների շղթա): **Մայներ, մայնինգ, բլոկչեյն** օտարաբանությունները հայերեն համարժեքներով փոխարինելու խնդիր կա, իսկ **կրիպտոարժույթ, կրիպտովայրուտա, կրիպտոարժութային, կրիպտոծառայություն, կրիպտոանվտանգություն, կրիպտովիրուս** բառերը, որոնք էլեկտրոնային մամուլում ունեն լայն և հաճախադեպ կիրառություն, նորաբանությունների բառարաններում ընդգրկված չեն: Վերոնշյալ մասնավոր օրինակներն ընդգծում են էլեկտրոնային տեքստերից նորաբանությունների և նոր բառերի որոնումն առավելագույն չափով լիակատար դարձնելու և մեքենայացնելու կարևորությունը: Դրա միակ եղանակը հայերենի *մոնիտորային կորպուսի* ստեղծումն է: Ընդհանուր առմամբ՝ կորպուսները հսկայական նշանակություն ունեն լեզվական փաստերի քննության համար, քանի որ պարունակում են տասնյակ հազարավոր տեքստեր: Այս դեպքում մոնիտորային կորպուսը ոչ միայն հնարավոր կդարձնի կատարել արդի հայերենի լեզվական բոլոր իրողությունների համակողմանի ուսումնասիրություն տեքստային մեծաթիվ օրինակներով, այլև էապես կոյուրացնի բառարանագրական աշխատանքները: Համացանցային զանազան աղբյուրներից մեքենական եղանակով հարստացվող տեքստային հենքի առկայությունը հնարավոր կդարձնի հստակ տեսնել արդի հայերենի բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները, քննել նորաստեղծ բառերը, դրանց իմաստային փոփոխությունները, ճշտել գործածության ոլորտները: Ավելորդ է նշել, թե որքան կմեծանա մոնիտորային կորպուսի կարևորությունը, եթե այն

դառնա զուգադրական կորպուս՝ էլեկտրոնային աղբյուրներից համալրվելով ոչ միայն արևելահայերեն, այլև արևմտահայերեն տեքստերով:

Այսպիսով՝ բառապաշարի համակարգչային շտեմարանի և համացանցային տարբեր աղբյուրներից մեքենական եղանակով ինքնահամալրվող տեքստային հենքի հիման վրա ստեղծված նոր բառերի մեքենական որոնման համակարգի ստեղծումն արմատապես կփոխի բառարանագրական աշխատանքների բնույթը, ընդգրկման ծավալը և զարգացման հեռանկարները:

Frida Hakobyan - The problems of the automatic search of new words. - In the last decades linguists have paid a special attention to the creation of dictionaries of neologisms. It is conditioned by the lack of a dictionary reflecting the current state of the Armenian vocabulary. Nevertheless, the current dictionaries of neologisms do not reflect the general picture of neologisms because without any technical assistance it is impossible to get all neologisms used in texts. As a solution to the problem, it is suggested to create a lexical database and a monitor corpus enriched with a variety of web sources.

Фрида Акопян - Проблемы автоматического поиска новых слов. - В последние десятилетия лингвисты уделяют особое внимание созданию словарей неологизмов. Текущие словари неологизмов не отражают общую картину неологизмов, потому что без какой-либо технической помощи невозможно получить все неологизмы, используемые в текстах. В качестве решения проблемы рекомендуется создать лексическую базу данных и корпус, обогащенный различными веб-источниками.

«ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՄԻ»
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Հակոբյան Ֆրիդա

Հիմնաբառեր՝ կորպուսային լեզվաբանություն, լեզվական կորպուս, տեքստային հենք, ԱՐԵՎԱԿ, Արևելահայերենի ազգային կորպուս, ընդհանրական կորպուս, մոնիտորային կորպուս, պատմական կորպուս

Օրինաչափ է, որ լեզուն իր գոյության ընթացքում շարունակ փոփոխությունների է ենթարկվում, և ժամանակի ընթացքում դրա ուսումնասիրության նոր եղանակներ են ի հայտ գալիս, ավելին՝ երբեմն հենց լեզվի իրացումը խոսքում է միջոց դառնում լեզվական իրողությունների ուսումնասիրության, նկարագրության ու ներկայացման համար: Խոսքային օրինակների միջոցով լեզվական երևույթների քննության եղանակներից մեկը *կորպուսային լեզվաբանությունն* է՝ ժամանակակից լեզվաբանության ամենաարագ զարգացող երիտասարդ ուղղություններից մեկը: Կորպուսային լեզվաբանության բնագավառում ձեռք բերված մեծ հաջողություններն առավելապես պայմանավորված են լեզվաբանության մեջ համակարգչային տեխնիկայի լայն կիրառությամբ և այնպիսի ծրագրերի ստեղծմամբ, որոնց միջոցով համակողմանիորեն ուսումնասիրվում և ներկայացվում է լեզուն:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն *Արևելահայերենի ազգային կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի*¹ ստեղծմամբ: Այն ստեղծվել է տարբեր հաստատություններ ներկայացնող մի խումբ լեզվաբանների և ծրագրավորողների մասնակ-

¹ Տե՛ս www.eanc.net/EANC/search/?interface_language=am.

ցությանը՝ Կորպուս Թեքնոլոջիս (Corpus Technologies), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտ, Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, Երևանի պետական լեզվաբանական համալսարան, Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտ: ԱՐԵՎԱԿ-ի ստեղծումը, ներառյալ գրավոր և բանավոր խոսքի հավաքումը, ֆինանսավորվել է Կորպուս Թեքնոլոջիս (ԿԹ) ընկերության կողմից, որի նպատակն է լեզվաբանական ծրագրային ապահովումը²:

Անշուշտ, սույն հոդվածում մեր նպատակը ոչ թե ԱՐԵՎԱԿ-ը նկարագրել-ներկայացնելն է, այլ կորպուսային լեզվաբանության զարգացման արդի փուլում այն մյուս կորպուսների համեմատությամբ դիտելը՝ առանձնացնելով կիրառության այն ոլորտները, որոնցում, այս կորպուսն օգտագործելով, կարելի է հասնել զգալի հաջողությունների: Կորպուսը որակական զարգացման նոր մակարդակի հասցնելու նպատակով արվում են նաև առաջարկություններ ու դիտողություններ: Նախ տեսնենք, թե լեզվական կորպուսները բնութագրական ինչ հատկանիշներ ունեն, և ԱՐԵՎԱԿ-ը ինչ չափով է համապատասխանում դրանց:

Եթե լեզվական կորպուս ասելով հասկանում ենք տարբեր բնույթի տեքստերի ամբողջական հավաքածու, ապա պայմանականորեն մեկից ավելի ցանկացած տեքստ կարող է կորպուս համարվել: Մակայն կան ընդհանրական մի շարք հատկանիշներ, որոնցով բնութագրվում են կորպուսներն ընդհանրապես: Այդ հատկանիշներից ամենահիմնականն ու թերևս գլխավորն այն է, որ տեքստային հենքում եղած տեքստերի միջոցով պետք է ներկայացվի լեզուն: Հետևաբար, տեքստային հենքը պետք է կազմել այնպես, որ, դրանում եղած տեքստերն ուսումնասիրելով, կարողանանանք քննել լեզվական բոլոր իրողությունները: Հենքում եղած տեքստերը սկզբունքորեն կարելի է երկու եղանակով ուսումնասիրել: Առաջին դեպքում կարող ենք քննել բոլոր տեքստերն

²Տե՛ս <http://www.eanc.net/am/grant/>:

առանձին-առանձին: Միանգամից նկատենք, որ այս սկզբունքը գործնականորեն կիրառելի չէ, որովհետև մեծ ցանկության դեպքում անգամ կարելի է միայն մեռած լեզուների տեքստային բոլոր օրինակները քննել, իսկ կենդանի լեզվում տեքստերն անթիվ են: Նաև որևէ կերպ հնարավոր չէ կազմել տեքստային ամբողջական հենք. մի կողմից՝ կարող են դուրս մնալ լեզվում հազվադեպ գործածվող օրինակները, մյուս կողմից՝ ուշադրությունը բևեռելով միայն սակավ գործածական օրինակների վրա՝ կարող են հենքից դուրս մնալ նույնիսկ հաճախադեպ գործածական լեզվական օրինակները: Մտացվում է այնպես, որ ամեն դեպքում մենք կարող ենք քննել միայն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, իսկ թե ինչ չավով հնարավոր կլինի վեր հանել լեզվական բոլոր իրողությունները դրանց քննությունից, դժվար է ասել: Այնուամենայնիվ, այսօրվա համակարգչային տեխնիկան հնարավորություն է տալիս ստեղծել չափազանց հարուստ տեքստային այնպիսի հենքեր, որոնք ներառում են հազարավոր տեքստեր՝ միլիոնավոր բառերով: Տեքստերի այդ վիթխարի քանակը հնարավորություն է տալիս ավելի մեծ թվով լեզվական երևույթների հետ գործ ունենալ. դրանք համապարփակ և ամբողջական կերպով ներկայացնում են լեզվական իրողությունների հիմնական մասը: Ուստի ավելի կարևոր է ոչ թե տեքստերի քանակական շատությունը, այլ տարաբնույթ լինելն ու լեզվական հնարավորինս մեծ թվով տարբեր օրինակներ ցույց տալը: Հետևաբար, լեզվական կորպուսի առաջին և բնութագրական ամենաօրինական հատկանիշը *ներկայացուցչականությունն է՝* մեծաթիվ օրինակների միջոցով լեզվական երևույթներ ու իրողությունները ցույց տալը³:

³ Տե՛ս **Հակոբյան Ֆ.**, Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ձախուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 2017, էջ 171:

Այս առումով ԱՐԵՎԱԿ-ի տեքստային հենքը բավական հարուստ է. 2009 թ. մարտի դրությամբ ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք: Դրանից բացի՝ ի տարբերություն առավել լայն տարածում գտած այնպիսի կորպուսների, ինչպիսիք են *Ռուսերենի ազգային կորպուսը* կամ *Բրիտանական ազգային կորպուսը*, որոնցում տեքստերը ծավալի հետ կապված որոշակի սահմանափակումներից ելնելով են ընտրված, ԱՐԵՎԱԿ-ը պարունակում է հնարավորինս շատ մասշտիի արևելահայերեն գեղարվեստական, գիտական և բանավոր տեքստեր:

Այնուամենայնիվ, ժանրային հավասարակշռությունը պահպանելու նպատակով որոշ ժանրերի տեքստեր, ինչպիսիք են, օրինակ, մամուլի և օրենսդրական տեքստերը, որոնք հասանելի են համացանցում, ընդգրկված են սահմանափակ քանակով: ԱՐԵՎԱԿ-ի գրավոր խոսքի ենթակորպուսը պարունակում է 836 արձակ և չափածո գեղարվեստական տեքստեր (ներառյալ 206 թարգմանված տեքստեր), 7858 մամուլի համարներ, ինչպես նաև գիտական և պաշտոնական տեքստերի խոշոր հավաքածու⁴:

Ժամանակագրական առումով ԱՐԵՎԱԿ-ում տարբեր ժանրերի տեքստերը հավասարապես բաշխված չեն: 19-րդ դարի տեքստերը հիմնականում ընդգրկում են արձակ և չափածո գեղարվեստական գրականության տեքստեր: Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ նախագծի շրջանակներում ավելացվել են մեծ թվով հին պարբերականների տեքստեր: Քանակական առումով մամուլի ենթակորպուսի հիմնական մասը բեռնվել է համացանցից, այդ իսկ պատճառով մեծ մասամբ ներկայացված է ժամանակակից մամուլի լեզուն: Մամուլի նման բաշխման արդյունքում գեղարվեստական գրականության և մամուլի ժանրերի հարաբերությունը վերջին տասնամյակների համար զգալի տարբերվում է կորպուսի մյուս մասերից: Ոչ գեղարվեստական տեքստերը ևս բաշխված են անհամաչափ: Գիտական տեքստերի հիմնական մասը պատկանում է խորհրդային

⁴ Տե՛ս <http://www.eanc.net/am/composition/>:

Ժամանակաշրջանին (հիմնականում 1960-ականներին և 70-ականներին), մինչդեռ որոշ օրենսդրական տեքստեր բեռնվել են համացանցից և ներկայացնում են վերջին տասնամյակների լեզուն: ԱՐԵՎԱԿ-ի կարևորագույն բաժիններից է արևելահայերեն բանավոր խոսքի ենթակորպուսը (3 մլն. բառանիշ), որն ամբողջովին մշակվել է ԱՐԵՎԱԿ-ի ջանքերով և ներկայացված է սպոնտան երկխոսություններով, պոլիլոգներով, նպատակաուղղված (task-oriented) հարցազրույցներով, հեռուստատեսային թոք-շոուններով, կինոնկարներով և այլ ձայնագրություններով: Կորպուսի վերջին տարբերակում ավելացված էլեկտրոնային հաղորդակցության տեքստերը, որոնք ընդգրկվել են բանավոր խոսքի ենթակորպուսում, իրականում միջանկյալ դիրք են գրավում բանավոր և գրավոր խոսքի միջև⁵:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ԱՐԵՎԱԿ-ը հիմնականում համապատասխանում է կորպուսների ամենաբնութագրական հատկանիշին՝ *ներկայացուցչականությամբ*:

Չնայած հսկայական թվով տեքստային օրինակներ պարունակելուն՝ տեքստային հենքի բնութագրական հատկանիշներից է նաև դրա՝ *սահմանափակ ծավալ* ունենալը, սահմանափակ թվով լեզվական օրինակներ պարունակելն ու ներկայացնելը: ԱՐԵՎԱԿ-ը նույնպես սահմանափակ ծավալ ունի. ինչպես նշեցինք, 2009 թ. մարտի դրությամբ ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք, իսկ ժամանակագրական առումով ներկայացնում է 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2009 թ. ընկած տեքստերը:

Ժամանակակից կորպուսների բնութագրական կարևոր հատկանիշներից մեկը *էլեկտրոնային եղանակով* հասանելի լինելն է: Իհարկե, նախկինում՝ մինչև լեզվաբանության մեջ համակարգչային տեխնիկայի կիրառությունը և համապատասխան ծրագրերի հասանելի լինելը, տեքստային հենքերը տպագիր եղանակով էին օգտագործվում, և դրանցից որոշները մինչև հիմա

⁵ Տե՛ս <http://www.eanc.net/am/composition/>:

Էլ հենց այդպես են օգտագործվում: Ոչ մեծ թվով տեքստային հենքեր հասանելի են թվային տարբեր սարքավորումների միջոցով (խտասկավառակների և ձայնասկավառակների վրա), որոնք հիմնականում պարունակում են խոսակցական տեքստեր (Lancaster/IBM Spoken English Corpus): Նկատենք սակայն, որ օգտագործման դյուրության և հետագա հարստացման տեսանկյունից տպագիր և ձայնային հենքերի համեմատությամբ ավելի նախընտրելի են էլեկտրոնային եղանակով հասանելի տեքստային հենքերը: ԱՐԵՎԱԿ-ը ես հասանելի է էլեկտրոնային եղանակով. դրա ծրագրային ապահովումը մշակվել է *Կորպուս Թեքնոլոջիսի* կողմից, որի առաջնային նպատակներից է կորպուսի որոնման հնարավորությունները գործածողի համար բաց և մատչելի դարձնելը: ԱՐԵՎԱԿ-ի տվյալների բազայի ծրագրային ապահովումը կազմված է հետևյալ չորս հիմնական մասերից՝ քերականական վերլուծիչ, ինդեքսատոր, սպասարկիչ, գործածողի ինտերֆեյս և սպասարկու⁶:

ԱՐԵՎԱԿ-ից կարելի է օգտվել՝ չգրանցվելով կամ համակարգչային որևէ ծրագիր ներբեռնելով:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կարող ենք ասել, որ կորպուսները պետք է ներկայացնեն լեզվական կառուցվածքի նկարագիրը, պարունակեն սահմանափակ թվով տեքստային օրինակներ, հասանելի լինեն էլեկտրոնային եղանակով: Արևելահայերենի ազգային կորպուսը, ինչպես տեսանք, համապատասխանում է լեզվական կորպուսների վերոնշյալ բնութագրումներին:

Կորպուսների ստեղծումը բավական բարդ և աշխատատար գործընթաց է, որը պահանջում է լեզվաբանների և ծրագրավորողների սերտ համագործակցություն: Սակայն դա ինքնանպատակ չէ, քանի որ կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական մեծ նշանակու-

⁶ Տե՛ս <http://www.eanc.net/am/software/>:

թյուն: ԱՐԵՎԱԿ-ը ևս, ինչպես մյուս կորպուսները, կարող է փաստական հարուստ նյութ ապահովել հետազոտողի համար: Այնուամենայնիվ, դրա կիրառական հնարավորություններն առավել ընդլանելու համար անհրաժեշտ է կորպուսում ձևային և բովանդակային զգալի փոփոխություններ կատարել՝ ներկայացվող տեքստերի ժամանակային ընդգրկումից սկսած՝ մինչև ծրագրային ապահովումը:

Նախ՝ ԱՐԵՎԱԿ-ը աստիճանաբար պատմական կորպուս է դառնում, քանզի դրանում ներկայացված են 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2009թ. եղած տեքստերը: Այսինքն՝ անցել է ավելի քան տասը տարի և կորպուսում որևէ նոր տեքստ չի ավելացվել, իսկ այդ տարիների ընթացքում թեպետ ոչ զգալի, այնուամենայնիվ լեզվում նկատելի փոփոխություններ կատարվել են: Ուստի անհրաժեշտ է շարունակել կորպուսը նորանոր տեքստերով հարստացնել՝ հասնելով նրան, որ սա վերածվի այսպես կոչված մոնիտորային կորպուսի. մեքենական եղանակով հարստացվի համացանցային զանազան աղբյուրներից:

Նպատակահարմար է առավել ընդլայնել ներկայացման ժամանակաշրջանը՝ այն դարձնելով *ընդհանրական* կորպուս, որում ներառված կլինեն հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններում ստեղծված տեքստերը՝ ընդգրկելով գրաբարով, միջին հայերենով, հետո նոր միայն արևելահայերենով ու արևմտահայերենով ստեղծված տեքստեր: Հարկ է ուշադրություն դարձնել ոչ թե տեքստերի քանականան շատության, այլ բազմակողմանիության, լեզվական հնարավորինս բազմաբնույթ օրինակներ ներկայացնելու վրա: Ավելացնելով վերոնշյալ բաժինները՝ կարող ենք ամբողջ կորպուսը բաժանել ենթակորպուսների՝ ըստ հայերենի պատմական զարգացման տարբեր շրջաններն ընդգրկող տեքստերի: Ըստ այդմ՝ կունենանք գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի, ինչպես նաև խոսակցական լեզվի ենթակորպուսներ⁷:

⁷ Տե՛ս նշվ. աշխ. էջ 173:

Պետք է ոչ միայն նոր բաժիններ ավելացնել ԱՐԵՎԱԿ-ում, այլև եղածները կատարելագործնել: Օրինակ՝ անհրաժեշտ է զարգացնել կորպուսի պիտավորման համակարգը, որովհետև ներկայումս ԱՐԵՎԱԿ-ում իրականացվում է երեք տեսակի պիտակավորում. ա) մետատեքստային (մատենագիտական), որը կցվում է յուրաքանչյուր տեքստային միավորի, բ) բառային և ձևաբանական, որը կցվում է բառանիշերի ավելի քան 90%-ին, ինչպես նաև անգլերեն թարգմանություններ բառանիշների մոտ 85 %-ի համար, գ) կետադրության, նախադասության սահմանների, ինչպես նաև այլ օժանդակ հատկանիշների պիտակավորում⁸:

Ընդհանրապես, լեզվի կառուցվածքային տարբեր միավորների համար, պայմանավորված լեզվական ուսումնասիրությունների նպատակով, կան պիտակավորման տարբեր տեսակներ, ինչպես՝ հնչունական, բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական): ԱՐԵՎԱԿ-ում, ինչպես տեսանք, կիրառվում են միայն ձևաբանական պիտակներ, որոնք, ըստ հեղինակների, արտահայտում են հայերենի խոսքի մասերի քերականական բոլոր կարգերը, սակայն երբեմն չեն համապատասխանում հայերենի նորմատիվ քերականությանը: Օրինակ՝ առանձին խոսքի մաս է համարվում նախդիրը, առանձնացվում է վեց հոլով. սեռականն ու տրականը համարվում են առանձին հոլովներ, իսկ հայցականը ուղղականից չի առանձնացվում: Ածականի համեմատության աստիճանները համարվում են քերականական կարգ, ընդ որում՝ առանձնացվում է միայն գերադրական աստիճանը, բաղդատականը՝ ոչ: Բայի եղանակներից ներկայացվում են միայն երեքը՝ ըղձական, ենթակայական, հրամայական: Ենթակայական եղանակն առանձնացնելիս հեղինակները հավանաբար նկատի են ունեցել ենթադրականը: Իբրև քերականական կարգ է առանձնացվել գոյականացումը՝ իր գո-

⁸ Տե՛ս <http://www.eanc.net/am/annotation/>:

յականացված, անորոշ դերբայ, հարաբերական գոյական տեսակներով: Այստեղ էլ հավանաբար նկատի են ունեցել այլ խոսքի մասերի գոյականաբար գործածությունը⁹:

Անհրաժեշտ է նաև զարգացնել ԱՐԵՎԱԿ-ի ծրագրային ապահովման համակարգը: Օրինակ՝ ի տարբերություն մյուս կորպուսների, որոնցում եղած տեքստերի զգալի մասը կարելի է ներբեռնել տարբեր ձևաչափերով, ԱՐԵՎԱԿ-ն այսպիսի հնարավորություն չի տալիս. սա զգալիորեն սահմանափակում է դրա օգտագործման հնարավորությունները: Պետք է ստեղծել նաև համակարգչային նոր ծրագրեր՝ այս կորպուսի տեքստերն ուսումնասիրելու համար, քանի որ գործնականորեն հնարավոր չէ պատկերացնել տեքստային հենքերի հետ կապված որևէ բնույթի լեզվական աշխատանք՝ առանց համակարգչային ծրագրերի կիրառության: Շնորհիվ դրանց՝ լեզվական այն աշխատանքները, որոնց կատարման համար նախկինում երկար ժամանակ էր պահանջվում, հիմա կարելի է իրականացնել հաշված վայրկյանների ընթացքում: Թեպետ ընդհանուր առմամբ՝ տարբեր գործառույթներ են կատարում, բայց և ունեն ընդհանուր հատկանիշներ (լեզվական տվյալների որոնման արագություն, ճշտությունը): Օրինակ՝ բոլորի միջոցով էլ կարելի է տեքստային հենքերից բառեր և արտահայտություններ որոնել, որոշել բառերի գործածության հաճախականությունը, որևէ համատեքստում գործածվելը:

ԱՐԵՎԱԿ-ի համար այսպիսի ծրագրեր դեռևս չեն ստեղծվել: Ավելին՝ այս կորպուսի մասին եղած ոչ ամբողջական պատկերացումները թույլ չեն տալիս օգտագործել այն հետազոտական աշխատանք կատարելիս: Հարկ է ընդգծել սակայն, որ, ինչպես տեսանք, ԱՐԵՎԱԿ-ն առավել զարգացնելու, ձևային և

⁹http://www.eanc.net/EANC/search/frame_parts/gramsel.php?interface_language=am&search_language=armenian1&contexts_output_language=armenian1:

բովանդակային լուրջ փոփոխություններ կատարելու, այն հայերենի առավել ամբողջական ու համակողմանի ուսումնասիրությանը լիարժեք ծառայեցնելու խնդիր կա:

Գրականության ցանկ

1. **Հակոբյան Ֆ.**, Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 170-178:

2. www.eanc.net/EANC/search/?interface_language=am

3. <http://www.eanc.net/am/grant/>

4. <http://www.eanc.net/am/composition/>

5. <http://www.eanc.net/am/software/>

6. <http://www.eanc.net/am/annotation/>

7. http://www.eanc.net/EANC/search/frame_parts/grams_el.php?interface_language=am&search_language=armenian1&context_s_output_language=armenian1

Акопян Фрида Арташесовна – Цель статьи представить Восточноармянский национальный корпус (ВАНК) с его наиболее отличительными особенностями и в текущей фазе развития корпусной лингвистики сравнить ее с другими корпусами разделяя прикладные сферы, где использование корпуса может быть весьма успешным. Чтобы сделать EANC более полным, мы делаем предложения и замечания который приведет корпус на качественно новый уровень.

Hakobyan Frida Artashes-The purpose of the article is to present the Eastern Armenian National Corpus (EANC) with its most distinctive features and in the current phase of the development of corpus linguistics to compare it with other corpuses separating the applied areas, where the usage of the corpus can be highly successful. To make the EANC more complete we make suggestions and remarks which will lead the corpus to a qualitatively new level.

ԿՈՐՊՈՒՄԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հակոբյան Ֆրիդա

Կորպուսային լեզվաբանությունը ձևավորվել է քսաներորդ դարի երկրորդ կեսին՝ դառնալով ընդհանուր լեզվաբանության արագ զարգացող երիտասարդ ուղղություններից մեկը: Դրա նպատակն է լեզվական կորպուսների՝ մեծ, ներկայացուցչական, պիտակավորված, առավելապես էլեկտրոնային եղանակով հասանելի տեքստային հենքերի ստեղծումը: Տեքստային կորպուսների փաստական հսկայական նյութը հետազոտողին հնարավորություն է տալիս կատարել լեզվական իրողությունների ամբողջական և առավել լիակատար գիտական ուսումնասիրություն: **Տեքստային հենքերը ստեղծվում են լեզվաբանական հետազոտություններ կատարելու նպատակով և լեզվական փաստերի քննության հարցում կարող են օգտակար լինել լեզվաբանության բոլոր բաժինների համար:** Ըստ այդմ՝ կորպուսային լեզվաբանության կիրառական ոլորտները շատ լայն են, քանի որ լեզվական կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական հսկայական նշանակություն: Դրանց օգնությամբ կարող ենք *բացահայտել լեզվի կրած փոփոխությունները այդ լեզվի պատմական զարգացման ողջ ընթացքում՝ դրան զուգահեռ կատարելով լեզվական փաստերի համաժամանակյա քննություն:* Կորպուսների միջոցով կարող ենք *ուսումնասիրել լեզվի տարբերակային ձևերն ու տարածական տարբերակները:* Դրանք նշանակալից դեր ունեն առհասարակ *լեզվաբանության բոլոր բաժինների համար:* Մեծ է կորպուսների կարևորությունը նաև *միջգիտակարգային հետազոտությունների* բնագավառում:

Կորպուսային լեզվաբանության՝ իբրև լեզվաբանական առանձին ուղղության, ձևավորումից տասնամյակներ առաջ էլ լեզվաբանները փորձառական նյութեր էին հավաքում և դրանց

հիման վրա կատարում լեզվի բառային կազմի ուսումնասիրությունն ու նկարագրությունը: Արդի փուլում կորպուսները շարունակաբար համալրվում-հարստացվում են տեքստերով՝ հնարավոր դարձնելով բառապաշարի իմաստային տեղաշարժերի, ինչպես նաև դրա համաժամանակյա վիճակի առավել ամբողջական և համակողմանի քննությունը: Տեքստային կորպուսները լեզվի բառապաշարի ուսումնասիրության կարևորագույն միջոցներից են: Օրինակ՝ փորձ է արվել պարզել՝ Նոր Զելանդիայում գործածվող անգլերենը բառապաշարային ավելի շատ ընդհանրություններ ունի ամերիկյան, թե՛ բրիտանական անգլերենների հետ: Դրա համար նախ պետք է ճշտել, թե արդյոք այդ լեզվում. ա) գործածվում են բացառապես ամերիկյան կամ բրիտանական անգլերենների բառերը, բ) ամերիկյան և բրիտանական անգլերենների բառերը հավասարաչափ են գործածվում, գ) երկու տարբերակների բառերի հավասարաչափ գործածության դեպքում կա՞ն խոսքաշարեր, որոնցում նախապատվությունը տրվում է մի տարբերակի բառապաշարի գործածությանը:

Ըստ այդմ՝ ընտրվել է հինգ հասկացություն, որոնք բրիտանական և ամերիկյան անգլերեններում արտահայտվում են տարբեր բառերով, ինչպես՝ flashlight (AmE) – torch (BrE), freeway (AmE) – motorway (BrE), sidewalk (AmE) – pavement (BrE), elevator (AmE) – lift (BrE), diaper (AmE) – nappy (BrE): Australian Corpus of English (ACE) կորպուսում այս բառերը փնտրելիս և դրանց գործածության հաճախականության ցանկը կազմելիս երևում է, որ flashlight (AmE) – torch (BrE) զույգից թե՛ բրիտանական, թե՛ ամերիկյան տարբերակները Նոր Զելանդիայում գործածվող անգլերենում գրեթե հավասարապես գործածական են: Freeway (AmE) – motorway (BrE) զույգից բրիտանական տարբերակը չի գործածվում, իսկ ամերիկյան տարբերակի գործածությունը բավական հաճախադեպ է: Sidewalk (AmE) – pavement (BrE) զույգում գերակշռում է բրիտանական տարբերակի գործածությունը: Elevator (AmE) – lift (BrE), diaper (AmE) – nappy (BrE) զույգերից միայն բրիտանական տարբերակներն են գործածվում

է: Վերոնշյալ լեզվական փաստերը վկայում են, որ ընտրված բառագույգերում բրիտանական տարբերակի բառերը երկու անգամ առավել հաճախ են կիրառվում Նոր Զելանդիայում գործածվող անգլերենում: Ինչ խոսք, սրանք մասնավոր օրինակներ են և դեռևս բավական չեն եզրակացնելու համար, թե այդ լեզվում ընդհանրապես առավել գործածական են բրիտանական անգլերենի բառերը:

Տեքստային հենքերը կարող են հաջողությամբ ծառայել ինչպես բառապաշարի քննությանը, այնպես էլ քերականական իրողությունների ուսումնասիրությանը: Օրինակ՝ կորպուսի միջոցով փորձ է արվել պարզել բրիտանական և ամերիկյան անգլերեններում մակբայների գործածությունը ներկա վաղակատար և անցյալ անորոշ ժամանակաձևերի հետ: Ինչպես հայտնի է, ամերիկյան անգլերենում *just, already, yet, ever, before* մակբայների հետ անցյալ անորոշ ժամանակաձև է գործածվում, իսկ բրիտանական անգլերենում՝ միայն ներկա վաղակատար: Վերոնշյալ քերականական կանոնը ստուգելու համար պետք է պարզել, թե արդյոք. ա) բրիտանական անգլերենում այդ մակբայների հետ անցյալ անորոշ ժամանակաձև չի գործածվում, բ) ամերիկյան անգլերենում այդ մակբայների հետ միայն անցյալ անորոշ ժամանակաձև է գործածվում, թե կարող է նաև ներկա վաղակատար գործածվել, գ) էթե ամերիկյան անգլերենում այդ մակբայների հետ անցյալ անորոշ և ներկա վաղակատար ժամանակաձևերը հավասարաչափ են գործածվում, զ) րն առավել հաճախական կիրառություն ունի:

Ընտրվել է բրիտանական անգլերենի FLOB և ամերիկյան անգլերենի Frown կորպուսները: Այսպես՝ FLOB տեքստային հենքում *just* մակբայի գործածության օրինակներից երևում է, որ այն վեց բայի հետ գործածվել է ինը անգամ, ընդ որում՝ բայերը այս մակբայի հետ գործածվելիս ութ անգամ դրվել են ներկա

¹ Տե՛ս **Nesselhauf N.**, *Corpus Linguistics: A Practical Introduction*, 2005:

վաղակատար ժամանակաձևով և միայն մեկ անգամ՝ անցյալ անորոշով: Սրանից եզրակացնում ենք, որ բրիտանական անգլերենում գրեթե միշտ *just* մակբայի հետ գործածվելիս բայը դրվում է ներկա վաղակատար ժամանակաձևով: Ամերիկյան անգլերենի *Frown* կորպուսում հանդիպում ենք *just* մակբայի գործածության հինգ դեպքի, որոնցից չորս անգամ *just* մակբայի հետ գործածվելիս բայը դրվում է անցյալ անորոշ ժամանակաձևով և միայն մեկ անգամ՝ ներկա վաղակատարով: Սրանից էլ եզրակացնում ենք, որ ամերիկյան անգլերենում *just* մակբայի հետ գործածվելիս բայը գրեթե միշտ դրվում է անցյալ անորոշ ժամանակաձևով²:

Ինչպես տեսանք, լեզվական կորպուսների միջոցով կարելի է ուսումնասիրել լեզվի բառապաշարը, քերականական համակարգը: Դրանք կարող են հաջողությամբ օգտագործվել նաև *լեզվաոճական* քննություն կատարելիս՝ նպաստելով ինչպես տարբեր ժանրային պատկանելություն ունեցող տեքստերի, այնպես էլ որևէ հեղինակի լեզվի և ոճի ամբողջական ուսումնասիրությանը:

Վերջին տասնամյակներում մեծապես կարևորվում է տեքստային կորպուսների դերը հատկապես բառարանագրական աշխատանքների դյուրացման, բառարաններ կազմելու և բառահոդվածներ մշակելու գործում: Եթե նախկինում ամբողջական բառահոդվածը կազմվում էր բացառապես բառարանագրի կողմից, հիմա կարելի է մեքենական եղանակով որոշել գլխաբառը, տեսնել տվյալ բառի՝ տարբեր իմաստներով գործածությունը հարյուր հազարավոր տեքստերում, ավելացնել օրինակ-նախադասությունները: Պակաս կարևոր չէ բառերի գործածության համատեքստը ներկայացնելու հնարավորությունը: Եթե տպագիր բառարաններում օրինակ-նախադասությունները սահմանափակ ծավալ ունեն և որոշ դեպքերում բառի իմաստը լավ չի

² St 'u **Nesselhauf N.**, *Corpus Linguistics: A Practical Introduction*, 2005:

հասկացվում, էլեկտրոնային բառարանում կարելի է տեսնել բառի գործածության համատեքստը:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսները բառարանագրության մեջ օգտագործվում են երկու հիմնական եղանակներով: Մի դեպքում բառարանը կազմվում է բացառապես կորպուսներում եղած լեզվական նյութի հիման վրա: Այս առումով հիշատակության է արժանի անգլերենի COBUILD բառարանը: Մյուս դեպքում՝ բառիմաստները բացատրվում և դրանց գործածության օրինակները բերվում են կորպուսում ընդգրկված տեքստերից:

Ավելորդ է նշել, թե որքան մեծ կլինեք լեզվական կորպուսների կիրառության կարևորությունը արդի հայ բառարանագրության մեջ: Օրինակ՝ կորպուսում ընդգրկված էլեկտրոնային տեքստերից մեքենական եղանակով կարելի է կազմել **հաճախականության առցանց բառարան**, ժանրային տարբեր պատկանելությունն ունեցող տեքստերում պարզել բառերի գործածության հաճախականությունը, որոշել, թե լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում իմաստային որ դաշտի բառերն են առավել հաճախ գործածվել:

Ինչպես նշեցինք, տեքստային հենքերի միջոցով կարելի է ոչ միայն կատարել լեզվական փաստերի համաժամանակյա և տարածամանակյա քննություն, այլև ուսումնասիրել գրական լեզվի երկու տարբերակները: Օրինակ՝ արևելահայերեն-արևմտահայերեն զուգադրական կորպուսի առկայության դեպքում հաջող կերպով կիրականացվեք լեզվական նյութի զուգադրական քննություն:

Այս համատեքստում պետք է հատկապես կարևորել *հայերենի բարբառագիտական կորպուսի* ստեղծման անհրաժեշտությունը: Ի տարբերություն մյուս կորպուսների, որոնցում գրավոր տեքստերը գերակշռում են, բարբառագիտական կորպուսում պետք է մեծ թիվ կազմեն բարբառախոսների բանավոր խոսքը ներկայացնող տեսաձայնագրությունները: Համակարգչային ծրագրերի օգնությամբ սահմանափակ ծավալ և ընդգրկում ունե-

ցող նախկին փորձառական հնչյունաբանական հետազոտությունների փոխարեն կարելի է կատարել բանավոր խոսքի համակարգչային մշակում: Ընդգրկած մեծածավալ նյութի և շարունակական համալրման շնորհիվ՝ հայերենի բարբառագիտական կորպուսի ստեղծումը կնպաստի հայերենի բարբառների առավել ամբողջական ուսումնասիրությանը:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն: Օրինակ՝ դրանք բավական հաճախ օգտագործվում են ուսուցողական նպատակներով (օտար լեզուների դասավանդում): Ուսումնական շատ ձեռնարկներում լեզվաբանները նախընտրում են օրինակները բերել տվյալ օտար լեզվի կորպուսից: Էլեկտրոնային թարգմանության արդի փուլում էլ առավելապես կարևորվում է *զուգադրական կորպուսների* դերը, որոնք ընդգրկում են մի քանի լեզուներով գրված տեքստեր: Բավական է նշել, որ բոլոր առաջատար թարգմանական համակարգերը բազմալեզվյան թարգմանություններ կատարելիս օգտվում են զուգադրական կորպուսներից:

Չնայած տեքստային հենքերը, որպես կանոն, ստեղծվում են լեզվաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով, սակայն գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչները շատ հաճախ օգտագործում են դրանցում եղած հարուստ նյութը միջգիտակարգային հետազոտություններ կատարելիս: Կորպուսները, որոնք պարունակում են ժանրային տարբեր պատկանելություն ունեցող գրավոր և բանավոր տեքստեր, **հաջողությամբ օգտագործվում են հոգելեզվաբանության** բնագավառում: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս խոսքային օրինակներով պարզել այդ լեզուն կրող մարդկանց հոգեբանությունը, աշխարհայացքը, ազգային դիմագիծն ու ավանդույթները: Տեքստային հենքերն օգտագործվում են նաև հանրալեզվաբանության մեջ, սակայն այս բնագավառում կատարվող աշխատանքները փորձնական բնույթ են կրում: Դրանք

հիմնականում վերաբերում են հասարակության տարբեր խավերի լեզվագործածության ուսումնասիրությանը:

Լեզուն ու մշակույթը անխզելիորեն կապված են միմյանց, ուստի հենքում եղած տեքստերի քննությունից շատ բան կարող ենք իմանալ ժողովրդի ու նրա մշակույթի մասին: Ավելին՝ երկու լեզուների տեքստային հենքերի գուգադրական քննությունից կարող ենք գուգահեռներ անցկացնել այդ լեզուները կրող ժողովուրդների մշակութային տարբերությունների մասին: Օրինակ՝ բրիտանական անգլերենի LOB տեքստային հենքի բառապաշարը ամերիկյան անգլերենի Brown տեքստային հենքի հետ համեմատելիս տեսնում ենք, որ բազմաթիվ բառեր իմաստային ու գործառական նկատելի տարբերություններ ունեն բրիտանական և ամերիկյան անգլերեններում: Օրինակ՝ *ճանապարհորդություն* իմաստային խմբին պատկանող բառերը բրիտանական անգլերենի համեմատությամբ ամերիկյան անգլերենում առավել հաճախ են գործածվում: Մա բացատրվում է այն հանգամանքով, որ Միացյալ Նահանգներն իր տարածքով ավելի մեծ է, քան Մեծ Բրիտանիան:

Ամերիկյան անգլերենում ավելի մեծ թիվ են կազմում հանցագործ աշխարհին անվանող բառերը: Մա էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցագործ աշխարհն ԱՄՆ-ում ավելի զարգացած էր: Այսպիսով՝ բրիտանական և ամերիկյան անգլերենների լեզվական կորպուսների օգնությամբ կարող ենք բացահայտել ամերիկյան և բրիտանական մշակույթների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Շայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն «Արևելահայերենի ազգային կորպուսի»՝ ԱՐԵՎԱԿ-ի ³

³ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am:

ստեղծմամբ⁴: Որպես լեզվական կորպուս ստեղծելու փորձ՝ կարևոր է, սակայն այն բավարար չէ թե՛ որակական առումով, թե՛ ընդգրկման ծավալով: Սահմանափակ են նաև ԱՐԵՎԱԿ-ի կիրառության ոլորտները, ուստի պետք է կարևորել հայերենի նոր՝ ընդհանրական կորպուսի ստեղծման անհրաժեշտությունը, որը կընդլայնի հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուսների կիրառության ոլորտները՝ նպաստելով հայոց լեզվի լիակատար և առավել ամբողջական ուսումնասիրությանը:

Frida Hakobyan - The applied fields of corpus linguistics. - The aim of the article is to present the applied fields of corpus linguistics. The vast textual material of the corpora makes it possible for a researcher to perform a complete scientific study of linguistic phenomena. Accordingly, the applied fields of corpus linguistics are very broad, since linguistic corpora have both theoretical-linguistic and practical-applied enormous significance.

Фрида Акопян - Прикладные области корпусной лингвистики. - Цель статьи представить прикладные области корпусной лингвистики. Огромный текстовый материал позволяет исследователю провести полное научное исследование лингвистических явлений. Соответственно, применяемые поля корпусной лингвистики очень широкие, поскольку лингвистические корпуса имеют как теоретико-лингвистическое, так и практическое применение огромного значения.

⁴ **Հակոբյան Ֆ.**, «Արևելահայերենի ազգային կորպուսի կառուցվածքը և ընդգրկումը», Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բանբեր. Ե., 2018, 1 (44), էջ 382:

⁵ **Հակոբյան Ֆ.**, Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 177:

ՏԵՔՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հակոբյան Ֆրիդա

Էլեկտրոնային սրբագրման համակարգը համացանցային կամ համակարգչային ծրագիր է, ծրագրային հավելված, որի օգնությամբ հնարավոր է ուղղել տեքստում եղած լեզվական սխալները: Այն կարելի է ներբեռնել և օգտագործել համակարգչում, ավելացնել տեքստային խմբագրիչներում կամ աոցանց՝ համացանցային համապատասխան կայքում:

Սրբագրման ծրագրեր ստեղծելու գաղափարը ձևավորվել է դեռևս 1950-60-ական թվականներին, երբ հետազոտություններ էին կատարվում արհեստական բանականության համակարգեր ստեղծելու բնագավառում: Սրբագրման առաջին ծրագիրը Ռալֆ Գորինի կողմից ստեղծված Spell ծրագիրն էր Սթենֆորդի համալսարանի արհեստական բանականության լաբորատորիայում 1971 թվականին:

Ընդհանուր առմամբ՝ սրբագրման ծրագրերի ստեղծման պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի: Սկզբնապես դրանք միայն ուղղագրական սխալներն ուղղող ծրագրերի էին, որոնք ոչ թե ուղղում էին լեզվական սխալները՝ առաջարկելով ուղղման ճիշտ տարբերակներ, այլ ստուգում տեքստում գործածված բոլոր բառերը՝ համեմատելով ծրագրի հենքում եղած բառարանի հետ: Այս փուլում հիմնական խնդիրն էր սխալ բառերի համար առաջարկվող ուղղման ճիշտ տարբերակների ներկայացումը: Սրբագրման առաջին ծրագրերը ներառված էին տեքստային խմբագրիչներում՝ իբրև հավելյալ հնարավորություն: Առաջինը Sector Software ընկերության կողմից 1987 թվականին ստեղծված Spellbound կոչվող ծրագիրն էր:

1 J. Peterson, Computer Programs for Detecting and Correcting Spelling Errors, 1980.

Այնուհետև սրբագրման ծրագրերի գործառույթներն ընդլայնվեցին. դրանց օգնությամբ հնարավոր էր ուղղել ոչ միայն ուղղագրական, այլև քերականական սխալները:

Պետք է նկատի ունենալ, որ քերականական սխալների ուղղման վաղ շրջանի ծրագրերը ուղղում էին ոչ թե բուն քերականական սխալները, այլ ոճական անհամապատասխանություններն ու կետադրական սխալները: 1970-ական թվականներին ստեղծված քերականական սխալներն ուղղող առաջին ծրագիրն էր *Writer's Workbench*-ը²: Այն գործիքների ամբողջական խումբ էր՝ ներառված *Unix* համակարգում: *Writer's Workbench* փաթեթը պարունակում էր առանձին գործիքներ՝ տարաբնույթ սխալներ ուղղելու համար: Օրինակ՝ «*diction*» գործիքի միջոցով հնարավոր էր ուղղել սխալ գրված բառերն ու արտահայտությունները, «*style*» գործիքը վերլուծում էր տեքստը, ներկայացնում վիճակագրական տվյալներ նախադասության կառուցվածքի մասին, առանձնացնում ոճական սխալները:

Անձնական համակարգիչներում օգտագործվող քերականական սխալներն ուղղող առաջին ծրագիրը 1981 թվականին ստեղծված *Grammatik* ծրագիրն է: Առավել հաջող մյուս ծրագրերից էին՝ *Punctuation & Style*, *Correct Grammar*, *RightWriter* և այլն: Դրանք ուղղում էին ուղղագրական, քերականական, կետադրական սխալները:

Հետագա տարիներին տեքստի էլեկտրոնային սրբագրման ծրագրերը հասան զարգացման բարձր մակարդակի. հիմա դրանք մեքենական եղանակով գտնում են տեքստում եղած ուղղագրական, ձևաբանական, շարահյուսական, ոճական և կետադրական սխալները: Տեքստի ուղղումը կատարվում է առցանց: Շատ ծրագրեր կարելի է ավելացնել իբրև դիտարկիչի

² M. Stutz: *Living language*. Retrieved May 16, 2009.

³ A. Walker: *The Linux Cookbook*.

հավելված (Chrome, Safari, Firefox, Edge): Հնարավոր է նաև ներբեռնել ծրագիրը օպերացիոն տարբեր համակարգերով աշխատող համակարգիչներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աստիճանաբար մեծանում է հեռախոսներով ուղարկվող էլեկտրոնային նամակների և հաղորդագրությունների թիվը, սրբագրման շատ ծրագրեր ունեն հատուկ ամարթֆոնների համար ստեղծված տարբերակներ, օրինակ, Grammarly Keyboard for iOS կամ Android:

Սրբագրման համակարգերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. միակերպյան համակարգեր, որոնք ուղղում են միայն մեկ լեզվով գրված տեքստերը, և բազմակերպյան ծրագրեր, որոնք ուղղում են մեկից ավելի լեզուներով գրված տեքստեր: Օտարալեզու հեղինակավոր սրբագրման ծրագրերից են՝

Հայ լեզվաբանության մեջ ևս աշխատանքներ են տարվել սրբագրման ծրագրեր ստեղծելու ուղղությամբ: Առավել հաջողված ծրագրերից են՝

Սրբագրման ծրագրերը լեզվական սխալներն ուղղում են հետևյալ եղանակով.

ա. Ամբողջ տեքստը մեքենական եղանակով վերածվում է բառաձևերի ցանկի:

բ. Յուրաքանչյուր բառաձև համեմատվում է ծրագրի տվյալների հենքում եղած բառարանի հետ: Համակարգի բառային հենքում ընդգրկված են բառի ոչ միայն ուղիղ, այլև թեքված ձևերը: Որոշ ծրագրեր լեզվական սխալներն ուղղում են վիճակագրական տվյալների հիման վրա: Ըստ այդմ՝ առանձնացվում են ամենատարածված և հաճախական լեզվական սխալները, կազմվում են լեզվական սխալների ցանկեր, դրանք ավելացվում են ծրագրի բառային հենքում: Համակարգը տեքստային սխալները գտնում է և առաջարկում ուղղման ճիշտ տարբերակներ այդ ցանկերի հետ համեմատությամբ:

գ. Սրբագրման ծրագիրը, համեմատելով տեքստում գործածված բառաձևը տվյալների հենքում եղած բառաձևի հետ, ըստ

հնչյունական կազմի նմանության՝ առաջարկում է ուղման հինգ-վեց տարբերակ:

դ. Օգտվողը կարող է ընտրել և ուղղել սխալը ծրագրի կողմից առաջարկված ճիշտ տարբերակով:

Հարկ է նկատել, որ վերջին շրջանում հետազոտողներն առավել մեծ ուշադրություն են դարձնում այնպիսի ալգորիթմների ստեղծման վրա, որոնք գտնում են լեզվական սխալները՝ հաշվի առնելով բառի գործածության համատեքստը:

Էլեկտրոնային սրբագրման ծրագրի ծրագրային ապահովման համակարգը բավական բարդ է: Մեր նպատակներից դուրս է անդրադառնալ համակարգի ծրագրավորման կողմին: Նշենք միայն, որ դրա հիմքում ընկած բարդ ալգորիթմները մշակում են լեզվական նյութը, գտնում տեքստում եղած սխալները և առաջարկում ուղղման ճիշտ տարբերակներ: Սրբագրման համակարգի լեզվաբանական կողմն ամենից առաջ ենթադրում է տվյալ լեզվի ձևային նկարագրություն: Սակայն, ինչպես հայտնի է, ձևային նկարագրությունը...

Հղում (հղում Հովսեփյան)

Բնական լեզվի որևէ ձևային նկարագրություն չի կարող այնքան ամբողջական և լիակատար լինել, որ արտացոլի լեզվական բոլոր սխալները: Այս է պատճառը, որ դեռևս կան տեքստի էլեկտրոնային սրբագրմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Յուրաքանչյուր սրբագրման համակարգի առաջնային խնդիրը *ուղղագրական սխալների* ուղղումն է: Տրամաբանական է, որ ուղղագրական սխալների ուղղումն ամենահեշտն է, քանի որ համակարգը պետք է համեմատի բառի ճիշտ կամ սխալ գրելաձևն իր բառային հենքում եղած բառաձևի հետ, ըստ հնչյունական կազմի նմանության՝ առաջարկելով ուղղման ճիշտ տարբերակը: Սակայն պետք է նկատել, որ օտարալեզու հեղինակավոր սրբագրման համակարգերը որոշ դեպքերում չեն ուղղում նույնիսկ ակնհայտ ուղղագրական սխալները: Հիմնական պատճառն այն է, որ որևէ համակարգ չի կարող ընդգրկել այդ լեզվի

հսկայական բառապաշարը՝ ներառյալ նոր բառերն ու օտարաբանությունները: Բացի դրանից՝ դեռևս որևէ ծրագիր չի կարող ուղղել լեզվական սխալը՝ ամբողջությամբ հասկանալով բառի գործածության համատեքստը՝

The big statue ~~head~~ **had** a big ~~head~~ **head**.

Խնդիրն ավելի լուրջ է հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգերի համար, քանի որ մի կողմից՝ դրանց ընդգրկած ընդհանուր բառաքանակը շատ սահմանափակ է, իսկ մյուս կողմից՝ գրեթե անհնար է ձևայնացնել ուղղագրությունը: Բավական է միայն նշել, որ PowerSpell սրբագրման ծրագիրը **ձևային** բառը համարում է սխալ և ուղղման տարբերակ է առաջարկում **ձվային** բառը: Հայերեն սրբագրման համակարգերը գրեթե չեն ուղղում նաև հատուկ անունների, նորաբանությունների, գծիկով, անջատ և միասին գրվող բարդությունների սխալները: Ավելորդ է նշել, թե որքան մեծ է մեքենական եղանակով բառերը տողադարձելու կամ տողադարձի սխալները ուղղելու կարևորությունը:

Ընդհանուր առմամբ՝ պետք է նշել սակայն, որ սրբագրման բոլոր համակարգերը, լեզվի մակարդակային մյուս միավորների համեմատությամբ, հաջող կերպով ուղղում են ուղղագրական սխալները, նույնիսկ եթե բառի ճիշտ և սխալ գրելաձևերն իրենց հնչյունական կազմով միմյանցից էականորեն տարբերվում են՝

I like books, ~~especialy~~ the classics → I like books, **especially** the classics.

Լուրջ է նաև *քերականական սխալների* ուղղման խնդիրը, քանի որ դա էապես պայմանավորված է ինչպես տվյալ լեզվի ձևային նկարագրության լիակատարությամբ, այնպես էլ սրբագրման համակարգի ծրագրային կողմով: Այս է պատճառը, որ նույնիսկ օտարալեզու սրբագրման համակարգերը քերականական ոչ բոլոր տեսակի սխալներն են ուղղում: Օրինակ՝ ուղղվում են գոյականի եզակի և հոգնակի թվերի գործածության սխալները, իսկ հոլովական սխալները՝ ոչ

Six people lost their ~~life~~ in the accident → Six people lost their ~~lives~~ in the accident.

My brother's house || ~~The house of my brother~~

The door of the house || ~~The house's door~~

Միավանկ և բազմավանկ ածականների համեմատության աստիճանների կազմության սխալներն ուղղվում են՝ more big → bigger, մինչդեռ համեմատական աստիճանների հետ more և most բառերի գործածության սխալ ձևերը՝ ոչ.

~~She is most beautiful than her sister~~ || She is more beautiful than her sister

Ուղղվում են բայի ժամանակաձևերի կազմության սխալները, սակայն առաջարկվում են ուղղման ոչ բոլոր տարբերակները: Օրինակ՝ իբրև **I have eat** սխալ ձևի ուղղման տարբերակ՝ առաջարկվում է միայն **I have to eat** (Ես ստիպված եմ ուտել) ձևը, մինչդեռ to eat անկանոն բայի խոնարհման հարացույցում ներկավաղակատարը ժամանակաձևը կլինի **I have eaten**: Գրեթե բոլոր սրբագրման ծրագրերն ուղղում են անկանոն բայերի խոնարհման սխալ կազմությունները՝

He ~~flyed~~ to Vancouver → He **flew** to Vancouver.

Քանի որ անգլերենում բայի ճիշտ ժամանակաձևի ընտրությունը կախված է նախադասության իմաստից, սրբագրման որևէ ծրագիր չի ուղղում բայի ժամանակաձևերի գործածության սխալները

~~When I came Tom goes~~ || When I came, Tom went || When I came, Tom had gone

Օտարալեզու սրբագրման համակարգերն ուղղում են ոչ միայն ձևաբանական, այլև *շարահյուսական* այնպիսի սխալներ, ինչպիսիք են ենթակայի և ստորոգյալի, որոշի և որոշյալի համաձայնության սխալները՝

The smell of flowers ~~bring~~ back memories. → The smell of flowers **brings** back memories.

Sheryl went to the ~~tickets~~ office → Sheryl went to the **ticket** office.

Հայերեն էլեկտրոնային սրբագրման ծրագրերը ևս ուղղում են քերականական որոշ սխալներ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ քերականական (ձևաբանական, շարահյուսական) սխալների մեծագույն մասը սրբագրման որևէ ծրագրի կողմից չի ուղղվում: Գլխավոր պատճառներից կարող ենք առանձնացնել հայերենի քերականական համակարգի ձևային նկարագրության և դրա հիման վրա ստեղծված բնական լեզուն մշակող համակարգերի բացակայությունը:

Քերականության, հատկապես շարահյուսության ձևային նկարագրության խնդիրը կարևորվում է նաև *կետադրական նշանների* գործածության սխալների ուղղման ժամանակ: Հայերեն սրբագրման առկա համակարգերը չեն ուղղում կետադրական սխալները այն դեպքում, երբ կարելի է մեքենական եղանակով ավելացնել ստորակետ համադասական և ստորադասական շաղկապներից առաջ: Շարահյուսական կաղապարների ձևային նկարագրության առկայության դեպքում հնարավոր է լուծել նաև դերբայական դարձվածի, համադասական և ստորադասական նախադասությունների կազմում համադաս և ստորադաս նախադասությունների՝ ճիշտ կետադրության հարցերը: Մինևույն ժամանակ նշենք, որ առավել բարդ է զեղչված անդամների կետադրության սխալների ուղղումը:

Օտարալեզու սրբագրման շատ ծրագրեր ոչ միայն ուղղում են սխալները, այլև գնահատում են տեքստի լեզվական որակը: Օրինակ՝ Grammarly սրբագրման համակարգը վատ գրված է համարում այն տեքստը, որում հեղինակը նախապատվություն է տալիս պարզ նախադասության փոխարեն բարդ նախադասության, իսկ ներգործական սեռի փոխարեն կրավորական սեռի գործածությանը:

Ավելորդ է խոսել էլեկտրոնային սրբագրման համակարգերի կարևորության և անհրաժեշտության մասին, սակայն, ինչպես տեսանք, դեռևս կան տեքստի էլեկտրոնային սրբագրմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ: Հատկապես ցածր է հայերեն սրբագրման առկա ծրագրերի որակը: Ուստի պետք է կարևորել սրբագրման նոր, առավել լիակատար համակարգի ստեղծումը, որը, շահեկանորեն տարբերվելով մյուս ծրագրերից, ըստ հնարավորին կլուծի հայերեն տեքստերի էլեկտրոնային սրբագրմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հակոբյան Ֆրիդա

Լեզվի կառուցվածքային նկարագրությունն ու լեզվական միավորների կադապարումը բուռն զարգացում ապրեցին XX դարում, իսկ նոր դարաշրջանում համակարգչային ծրագրերի՝ լեզվաբանության մեջ տարբեր նպատակներով տեսական ու գործնական կիրառությունը, ինչպես նաև բնական լեզվի համակարգչային մշակումն առավելապես կարևորեցին լեզվական համակարգի բոլոր միավորների լիակատար ձևային նկարագրությունը:

Ձևային նկարագրության նպատակը բառաքերականական իմաստների և դրանց արտահայտման ձևերի՝ ծրագրավորման տարբեր լեզուների համար հասկանալի այնպիսի նկարագրությունն է, որի հիման վրա ստեղծված համացանցային կամ համակարգչային ծրագիրը կատարում է բնական լեզվի ձևաիմաստային յուրաքանչյուր միավորի համակարգչային մշակում:

Հայ լեզվաբանության մեջ կատարվել են լեզվի կադապարային կամ կառուցվածքային նկարագրության ուսանելի փորձեր, որոնցից պետք է նշել Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները»¹, Է. Աղայանի «Ժամանակակից հայոց լեզվի հոլովումն ու խոնարհումը»², Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը»³, Ս. Գալստյանի «Ածանցները և ա-

¹ **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1974:

² **Աղայան Է.**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1967:

³ **Հովսեփյան Լ.**, *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1987:

ծանցումը հայերենում»⁴, Ռ. Ուռուտյանի «Ժամանակակից հայերենի անվանական բառափոխման ձևային նկարագրությունը»⁵ և մի շարք այլ գործեր:

Այնուամենայնիվ, կառուցվածքային կամ կադապարային նկարագրությունը միայն մասնակիորեն կարող է ձևային համարվել, քանի որ լեզվի ձևային նկարագրության բուն նպատակը ոչ միայն լեզվական կառուցվածքի լիակատար նկարագրությունն է, այլև այդ նկարագրության հիման վրա ստեղծված բնական լեզուն մշակող զանազան ծրագրերն ու համակարգերը:

Քանի որ ցանկացած լեզվի հիմնական ատաղձը այդ լեզվի բառապաշարն է, ուստի լեզվի ձևային նկարագրությունն ամենից առաջ ենթադրում է բառապաշարի ձևային նկարագրություն: Հայերենի բառապաշարի ձևային նկարագրություն ասելով պետք է նկատի ունենալ բառամիավորների բառակազմական և քերականական հատկանիշների ձևային նկարագրությունը, որի հիման վրա հնարավոր կլինի ստեղծել տեքստում գործածված բառաձևերի՝ բառակազմական, ձևաբանական վերլուծության այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան մեքենական եղանակով առանձնացնել հիմնական ու երկրորդական, բառակազմական և բառահարաբերական ձևույթները:

Բառի ձևույթային կազմի համակարգչային վերլուծությունը ենթադրում է բաղադրյալ բառի նախ՝ ձևաբանական (հիմք, վերջավորություն), ապա՝ բառակազմական (արմատ, ածանց) վերլուծություն:

Հայերենի բառակազմության ձևային նկարագրության համար ամենից առաջ պետք է մշակել հայերենի ձևային նկարագրության ընդհանրական սկզբունքներ՝ ուսումնասիրելով արդի

⁴ Գալստյան Ա., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978:

⁵ Ուռուտյան Ռ., *Ժամանակակից հայերենի անվանական բառափոխման ձևային նկարագրությունը*, «Լեզվի և ոճի հարցեր», VI, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 134-185:

լեզվաբանության մեջ ընդունված լեզվի ձևային նկարագրության սկզբունքներն ու եղանակները:

Բառակազմության ձևային նկարագրության նպատակը պետք է համարել արդի հայերենի բառապաշարի կազմի մեջ մտնող հազարավոր բառերի բառակազմական վերլուծությունը, դրանց բաղադրիչների առանձնացումը, բարդ բառերի դեպքում՝ բարդության բաղադրիչների իմաստային կապերի բացահայտումը և ներկայացումը: Բառամիավորների բառակազմական բնութագիրը ներկայացնող էլեկտրոնային մեծածավալ շտեմարանի, համացանցային և համակարգչային տարբեր ծրագրերի ստեղծումը կարող է համարվել բառակազմության ձևային նկարագրության հեռանկարային կիրառություն:

Էլեկտրոնային շտեմարանի միջոցով բառերի բառակազմական բնութագիրը ներկայացնելու հնարավորությանն առաջին անգամ անդրադարձել ենք Ժամանակակից հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կազմության սկզբունքները մշակելիս՝ առաջարկելով բառամիավորների բառակազմական բնութագիրը ներկայացնել բառակազմական դաշտում ⁶: Նշենք, որ Մ. Սարգսյանի և Շ. Ասիլբեկյանի կողմից ևս փորձ է արվել կատարել հայերենի ածանցավոր կազմությունների ձևային նկարագրություն ու ստեղծել համապատասխան շտեմարան: Շտեմարանի կազմման աշխատանքները նախատեսված է եղել իրականացնել երկու փուլով. նախ՝ կատարել ածանցավոր, ապա՝ բաղադրյալ կազմությունների ձևային նկարագրություն: Աշխատանքն անավարտ է մնացել, իսկ «Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծման սկզբունքներն ու խնդիրները» հոդ-

⁶ Տե՛ս **Հակոբյան Ֆ.**, *Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ*, Բանբեր Երևանի համալսարանի. Երևան, 2014, 144.2. (№ 3), էջ 60-70:

վածումը հեղինակները սահմանափակվել են միայն իրենց նախագծի ամփոփ բնութագիրը ներկայացնելով⁷: Մինչդեռ ժամանակակից հայերենի բառակազմության ձևային նկարագրությանն առնչվող խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները քննված չեն:

Բառաբարդումն ու ածանցումը՝ իբրև բառապաշարի հարստացման և նոր բառերի ստեղծման հիմնական եղանակներ, մշտապես եղել են տարբեր լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվի մյուս բաժինների համեմատությամբ բառակազմությունն առավել շատ է գրավել հետազոտողների ուշադրությունը կառուցվածքային նկարագրության տեսակետից, քանի որ հայերենի կաղապարային կամ կառուցվածքային նկարագրության մասնավոր փորձերը վերաբերում են հենց բառակազմությանը: Հայ լեզվաբանության մեջ բառակազմության կառուցվածքային-կաղապարային նկարագրության օրինակելի գործեր կարելի է համարել Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» և Ս. Գալստյանի «Ածանցները և ածանցումը հայերենում» ուսումնասիրությունները:

Առաջնորդվելով կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներով՝ Լ. Հովսեփյանը հանգամանալից կերպով կատարել է դասական գրաբարի ածանցման և բառաբարդման կաղապարների վերլուծություն՝ բացահայտելով բաղադրյալ բառերի բաղադրիչների փոխկապակցվածությունն ու կառուցվածքը: Գրաբարի բառակազմական կաղապարները ներկայանելու համար դիմել է պայմանական սիմվոլների կիրառության՝ *s*-սկզբնահիմք, *a*-ածանց, *f*-քերականական մասնիկ կամ թեքույթ, *j*-հոդակապ, *c*-շաղկապ, *p*-նախդիր և այլն⁸:

⁷ Տե՛ս **Ասիլբեկյան Շ., Սարգսյան Մ.**, *Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծման սկզբունքներն ու խնդիրները*, Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014, էջ 7:

⁸ Տե՛ս **Հովսեփյան Լ.**, *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

Հայերենի բառապաշարի կաղապարման օրինակելի մյուս աշխատանքը Ս. Գալստյանի «Ածանցները և ածանցումը հայերենում» աշխատությունն է, որտեղ լեզվաբանը կատարում է ածանցների համաժամանակյա ուսումնասիրություն կառուցվածքային մակարդակում: Ս.Գալստյանը ևս բառերի կառուցվածքային-կաղապարային կազմությունը ներկայացնում է պայմանական նշանների կիրառմամբ՝ ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության: Քննելով երկանդամ, եռանդամ, քառանդամ կառույցները՝ Ս. Գալստյանը հայերենի խոսքի մասերը նշանակում է լատինական տառերով՝ N-գոյական, A-ածական, V-բայ: Պայմանական սիմվոլներով է նշանակում նաև գոյականական (R1), ածականական (R2), մակբայական (R3), բայական (R4) ածանցները: Որպես հոդակապի ցուցիչ գործածում է + նշանը, անհոդակապվոր բարդությունները կաղապարում է առանց այդ նշանի»:

Վերոնշյալ աշխատանքները, ունենալով տեսական մեծ արժեք բառակազմության կաղապարային նկարագրության տեսակետից, չեն կարող համարվել հայրենի բառակազմության լիակատար ձևային նկարագրություն:

Ամենից առաջ դրանք չեն արտացոլում հայերենի բառապաշարի արդի վիճակը: Մի դեպքում կաղապարվում է դասական գրաբարի բառապաշարը, մյուս դեպքում՝ կաղապարային նկարագրության են ենթարկվում մամուլից ու գեղարվեստական գրականությունից քաղված փոքրաթիվ բառեր, ընդ որում՝ կարևորվում են ածանցավոր կազմությունները: Ձևային նկարագրության ժամանակ պետք է նկատի ունենալ արդի հայերենի գործուն բառապաշարը՝ չսահմանափակվելով փոքրաթիվ բառաքանակով և մեծապես կարևորելով հատկապես վերջին շրջանում ստեղծված նոր բառերի ու նորաբանությունների բառակազմական վերլուծությունը: Դա հնարավորություն կտա բացահայտել

9 Տե՛ս **Գալստյան Ս.**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978:

նոր բառերի ստեղծման հիմնական եղանակները: Այնուամենայնիվ, բառապաշարի ձևային նկարագրության ժամանակ պետք է կարևորել ոչ թե բառաքանակը, այլ նկարագրվելիք բառերի կազմությունը: Ըստ այդմ՝ կառանձնացվեն կազմությամբ *պարզ կամ արմատական* և *բաղադրյալ* բառերը: *Բաղադրյալ բառերի* կազմի մեջ են մտնում համադրական, վերլուծական բարդությունները և ածանցավոր կազմությունները: Ընդհանուր առմամբ՝ բարդությունների, ածանցավոր կազմությունների բառակազմական վերլուծությունն ու նկարագրությունն առավել նպատակահարմար է կատարել աստիճանական ստորակարգությունների միջոցով, քանի որ դա հնարավորություն կտա առավել համակարգված ուսումնասիրել հայերենի բառակազմական օրինաչափությունները՝ դրանք ներկայացնելով տրամաբանական հաջորդականությամբ:

Կարծում ենք՝ նախապես պետք է կարևորել համադրական բարդությունների և ածանցավոր կազմությունների ձևային նկարագրությունը, քանի որ դրանց բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար և ունեն մեկ ընդհանուր բառային շեշտ:

Համադրական բարդությունների կազմի մեջ մտնող կցական և իսկական բարդությունների նկարագրությունը միմյանցից կտարբերվի՝ պայմանավորված դրանց բաղադրիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած իմաստային, ձևաբանական և շարահյուսական տարբերություններով: Այսպես՝ կցական բարդություններում, թեև բացադրիչները միասնաբար են հանդես գալիս, սակայն պահպանում են իրենց իմաստային, ձևաբանական-շարահյուսական անկախությունը: Հետևաբար բառակազմական վերլուծության և նկարագրության ժամանակ պետք է կարևորել դրանց կազմության եղանակը. տվյալ կցական բարդությունը կազմվել է տարբեր տիպի հարադրություններից, շարահյուսական կապակցություններից (հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ և այլն), թե՛ բառի կրկնությամբ:

Իսկական բարդություններում, ի տարբերություն կցականների, բաղադրիչների շարահյուսական կապը մթազնաձ է, քանի

որ դրանք կորցրել են իրենց իմաստային և ձևական անկախությունը: Առավել խորքային քննություն կարող է համարվել բաղադրիչների շարահյուսական կապերի բացահայտումը, բարդության առաջին՝ բաղադրիչ-գոյականի արտահայտած հոլովական և կապական իմաստների քննությունը:

Վերլուծական բարդություններում, ի տարբերություն համադրականների, բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, հետևաբար վերլուծական բարդությունների նկարագրության ժամանակ պետք է նկատի ունենալ, թե որ խոսքի մասին պատկանող բառերի հարադրությամբ է կազմված տվյալ բարդությունը:

Ածանցավոր կազմությունների նկարագրության ժամանակ պետք է տալ ամբողջական տեղեկություն ածանցի մասին՝ խմբավորելով ածանցներն ըստ ձևի և իմաստի հարաբերության (համանուն, հոմանիշ, հականիշ), ծագման (բնիկ, փոխառյալ), բառակազմական գործունության (կենսունակ, անկենսունակ), դիրքի (նախածանց, վերջածանց), ձևակազմական հատկանիշի (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բայական):

Հայերենի բառակազմության կառուցվածքային նկարագրությանը նվիրված աշխատանքներում հետազոտողները սահմանափակվել են միայն բառի կազմում հանդես եկող հիմնական, երկրորդական ձևայինների և բարդության ձևաբանական կաղապարների՝ սինվոլներով նշանակմամբ: Օրինակ՝ կառուցվածքային տեսակետից՝ *լրագրավաճառություն, մրցանակ, հիվանդոտ, կործանարար* բառերի ձևաբանական կաղապարներն այսպիսին կարող են լինել՝ NNVR₁, VR₁, AR₂, VR₂, ձևային նկարագրությունը՝ այսպիսին՝

<<< լր > N + (+) գր > N + (+) վաճառ > V > + ություն > N (S_x)

<<մրց> V + անակ > A (S_x)

<<հիվանդ> A + ոտ > A (S_x)

<<կործան> V + արար > A (S_x) [հոդակապը արտացոլված չէ]

Եթե կառուցվածքային նկարագրության տեսակետից նման բանաձևումները կարող են ինքնանպատակ թվալ, ձևային նկարագրության տեսակետից բաղադրիչների՝ տարբեր սիմվոլներով նշանակումն ու ներկայացումը մեծապես կարևորվում է, քանի որ դրանք անհրաժեշտ են ծրագրային ալգորիթմներ ստեղծելու համար:

Հետևաբար անհրաժեշտ է մշակել բառի ձևակազմական բոլոր միավորների՝ համապատասխան սիմվոլներով նշանակման ամբողջական և անհակասական համակարգ, որը հնարավորություն կտա ձևայնացնել ոչ միայն բառի հիմնական և երկրորդական ձևայինները, ձևաբանական կաղապարները, այլև կատարել բարդության բաղադրիչների իմաստային, ձևաբանական ու շարահյուսական կապերի վերհանում և ձևայնացում:

Բառակազմության ձևային նկարագրությունը կունենա տեսական հսկայական նշանակություն: Այսպես՝ բառապաշարի ձևային նկարագրության տեսքով հավաքված հսկայական փաստական նյութը օգտակար կլինի այն լեզվաբանների համար, որոնք նպատակ ունեն համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով քննել հայերենի բառակազմությունը, բացահայտել նոր բառերի ստեղծման հիմնական օրինաչափությունները, կոնկրետ բառաքանակով առանձնացված ունենալ հայերենի բոլոր պարզ կամ արմատական բառերը, ածանցավոր բառերը և երկբաղադրիչ ու բազմաբաղադրիչ բարդությունները: Այն կօժանդակի նաև օտարազգի հայագետներին, որոնք հետաքրքրվում են հայերենի բառակազմությամբ՝ իբրև նոր բառերի ստեղծման հիմնական միջոց կամ կատարում են գուգադրական-տիպաբանական աշխատանք:

Բառակազմության ձևային նկարագրության գործնական արժեքը նույնչափ մեծ է, քանի որ դա կունենա երկակի կիրառություն: Մի դեպքում, համակարգչային տեխնիկական օգտագործելով, կարելի է ստեղծել էլեկտրոնային մեծածավալ շտեմարան, որի բառային հենքը կընդգրկի հազարավոր բառերի բառակազմական վերլուծություն, կունենա բառերի, դրանց կազմում եղած

հիմնական և երկրորդական ձևայինների որոնման հնարավորություն: Դա նշանակում է՝ ցանկացած արմատի կամ ածանցի որոնման ժամանակ կհայտնվեն դրանցով կազմված բոլոր պարզ, բարդ և ածանցավոր բառերը: Այլ կերպ ասած՝ էլեկտրոնային շտեմարանը կներկայացնի արդի հայերենի բառապաշարի բառամիավորների բառակազմական բնութագիրը:

Ինչպես նշեցինք, բարդությունների, ածանցավոր կազմությունների բառակազմական բնութագիրն առավել նպատակահարմար է ներկայացնել աստիճանական ստորակարգությունների միջոցով՝ համապատասխան տրամաբանական հաջորդականությամբ:

Այս մոտեցմամբ՝ տղամարդ իսկական և օր ու գիշեր բառի բառակազմական բնութագիրը շտեմարանում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

Տղամարդ

- Շարահյուսական կապակցության եղանակ
- Որոշիչ-որոշյալ (տղամարդ > տղա-մարդ)
- Ձևաբանական կաղապար
 - N+N
 - Կցական
 - Համադրական
 - Բարդություն
 - Բաղադրյալ բառ

Օր ու գիշեր

- Գոյականական
 - Անվանական
 - Հարադրություն
 - Վերլուծական
 - Բաղադրյալ բառ

Էլեկտրոնային շտեմարանից բացի՝ ձևային նկարագրության հեռանկարային կիրառություն կարելի է համարել համացանցային և համակարգչային այնպիսի ծրագրերի ստեղծումը, որոնք

լեզվական կորպուսներում եղած տեքստերում գործածված բառերը մեքենական եղանակով կենթարկեն բառակազմական վերլուծության՝ առանձնացնելով բառի կազմում հանդես եկող հիմնական և երկրորդական ձևայինները:

Այսպիսով՝ հայերենի բառակազմության ձևային նկարագրությունը և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի կամ համակարգչային ու համացանցային զանազան ծրագրերի ստեղծումը կարելի է համարել հայերենի լիակատար ձևային նկարագրության առաջին և կարևորագույն փուլերից մեկը, քանի որ դա կնպաստի ինչպես բառակազմության համակողմանի և առավել լիակատար ուսումնասիրությանը, այնպես էլ հայերենի համակարգչային մշակմանը:

Frida Hakobyan - The problems of the formal description of the Armenian word formation. - The article is devoted to the formal description of the Armenian word formation. In the Armenian linguistics, there were attempts of the description of word formation. However, they can not be considered a formal description since a natural language processing tool has not been created based on them. It is noted that the formal description of the Armenian word formation and the creation of the corresponding electronic database or web and computer programs can be considered one of the most important stages of the Armenian formal description. It will greatly contribute to the computational processing of the Armenian language.

Фрида Акоюн - Проблемы формального описания Армянского словообразования.- Статья посвящена формальному описанию армянского словообразования. В армянской лингвистике были попытки описания словообразования. Однако их нельзя считать формальным описанием, поскольку на их основе не создан инструмент обработки естественного языка. Отмечается, что формальное описание армянского словообразования и создание соответствующей электронной базы данных или веб и компьютерных

программ можно считать одним из важнейших этапов формального описания армянского языка. Это будет в значительной степени способствовать вычислительной обработке армянского языка.

ԲԱՅԱՍԵՆԻ ԿԱՐԳԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հովսեփյան Լիանա

Հայերենի խոնարհման համակարգում բայական սեռի քերականական կարգը արտահայտում է գործողության մեջ ներգրավված առարկաների սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունները:

Դասական գրաբարի շրջանում լեզվի զարգացումը գտնվում էր այնպիսի փուլում, երբ խախտվել էին սեռի կարգի ձևամաստային հակադրությունների նախկին ավելի որոշակի դրսևորումները, որոնք ըստ հետազոտողների կապվում էին բայական լծորդությունների հետ: Վ. Առաքելյանը նշում է, որ «ե, ա, ի, ու, ո խոնարհիչ ձայնավորների հիմնական նշանակությունը բայասեռի արտահայտությունն է եղել²: Սակայն ուսումնասիրվող շրջանում լծորդ ձայնավորները հիմնականում կորցրել էին իրենց ունեցած սեռանշության վաղեմի գործառույթը՝ խոնարհման տիպերի միջև տարբեր կարգի փոխանցումների, զուգաձևությունների առաջացման, ինչպես նաև ընդհանրապես ներգործակերպ ու կրավորակերպ խոնարհումների նախկին իմաստային պայմանավորվածության խախտման հետևանքով: Բացի այդ, խախտվել էր նաև երբեմնի հարաբերակցությունը սեռի կարգի և բայական բառույթի բառակազմական (պարզ կամ ածանցավոր) կառուցվածքի միջև:

Սեռի կարգի դրսևորումները տարբեր են բայական հարացույցի՝ ներկայի և կատարյալի հիմքերից կազմված ձևերում, բացի այդ, եղանակաժամանակային ոչ բոլոր կառույցներն ունեն ձևական հակադրություններ ըստ սեռի:


¹ «Դասական գրաբար» տերմինը պայմանականորեն վերագրվում է V դարի լեզվանյութին՝ որպես մեկ ամբողջության (հմմտ. մեր «Գրաբարի բառակազմությունը» աշխատության Ներածության «Նյութի ընտրության ու նկարագրության սկզբունքները» բաժինը [նշվ. աշխ. Ե., 1987, էջ 34]:

² Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Ե., 2010, էջ 111:

Գրաբարի բայական սեռի կարգում կարելի է առանձնացնել մի քանի իմաստային և ձևաիմաստային հակադրություններ: Ըստ սեռային իմաստի՝ բայերը կարող են լինել ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ (ընդհանուր)³: Վերջինները միննույն ձևով արտահայտում են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստ: Սեռի կարգի դրսևորումներից է նաև պատճառականությունը, որը կարելի է ներկայացնել որպես օբյեկտի վրա ենթակայի միջնորդված ներգործության կամ անցողականության արտահայտություններից մեկը: Հետևաբար պատճառականությունը սեռի կարգի սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների ավելի ընդհանրական դասակարգման մեջ ներգործական սեռի հետ միասին կազմում է անցողականության դասը, իսկ չեզոք և կրավորական սեռերը՝ անանցողականության դասը: Ընդ որում, անցողականությունը առանձին ձևաբանական արտահայտություն չունի և բացահայտվում է շարահյուսական հատկանիշների, ինչպես նաև ներգործական ու կրավորական սեռերի հետ ունեցած իմաստային հարաբերակցության հիման վրա:

Սեռի կարգի՝ վերը նշված բոլոր ձևաիմաստային դրսևորումները և փոխհարաբերությունները՝ ներառյալ անցողականությունն ու անանցողականությունը, և նրանց փոխակերպումների ուղղությունն ու արդյունքները կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերով.

³ Հայ քերականագիտության մեջ կոչվել են նաև երկսեռ [Վ.Առաքելյան նշվ. աշխ.] կամ կրկնասեռ [Գ.Խաչատրյան, Գրաբար, Ե., 2014, Չ. Ջաքյան, Հին հայերենի կրկնասեռ բայերը. Տարժամանակյա քննություն, Գյումրի, 2015]:



Ի տարբերություն բայական մյուս քերականական կարգերի՝ սեռի կարգը դասական գրաբարի շրջանում չունի իմաստային հակադրությունների հստակ արտահայտված միասնական ձևաբանական դրսևորումներ և որոշվում է մասամբ լծորդությունների փոփոխությամբ (Ե – Ի), մասամբ ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումների հերթագայությամբ: Բայց այս միջոցները նույնպես ընդհանրական բնույթ չունեն, և որոշ դեպքերում սեռային հակադրությունները չեզոքանում են, ավելի ճիշտ, ներգործական և կրավորական սեռերը ձևով նույնանում են: Հետևաբար բայասեռի որոշման հիմքում ընկած է գլխավորապես իմաստային չափանիշը և նախադասության շարահյուսական կառուցվածքը:

Բայական բառայթի սահմաններում հիմնական իմաստային հակադրությունը գոյություն ունի ներգործական և չեզոք սեռերի բայերի միջև, որոնք ձևաբանորեն նշույթավորված չեն: Այս

հակադրությունը մյուսներից տարբերվում է նրանով, որ այստեղ հակադրության եզրերը տարբեր բայեր են (*քերեմ* – ներգ., *ելանեմ* – չեզ.), իսկ մյուսների դեպքում (ներգործական և կրավորական *սիրեմ* – *սիրիմ*, ներգործական և պատճառական *յիշեմ* – *յիշեցուցանեմ*, չեզոք և պատճառական *բազմանամ* – *բազմացուցանեմ*) մինևույն բայի տարբեր ձևերն են՝ հակադրությունների չեզոքացման մասնակի դրսևորումներով (օր.՝ անցյալ անկատարի ձևերում): Այլ կերպ ասած, եթե վերջիններք դեպքերում սեռային հակադրությունները «անհատական» բնույթ ունեն (բայական մեկ բառույթի սահմաններում), ապա առաջին դեպքում հակադրությունն առկա է ներգործական և չեզոք սեռերի բայերի ամբողջական դասերի (խմբերի) միջև:

Ներգործական և կրավորական սեռերը տարբերակվում են գործողության ուղղվածության իմաստային չափանիշով: Ներգործական կառուցվածքի նախադասություններում գործողության ելակետը ենթական է, իսկ հանգակետը (կրող օբյեկտը)՝ ուղիղ խնդիրը: Կրավորական կառուցվածքի նախադասություններում գործողության ելակետը ենթական չէ, այլ ներգործող խնդիրը (այսպես կոչված տրամաբանական ենթական): Պատճառական կառուցվածքներում, ինչպես նշվեց, ենթակայի ներգործությունը օբյեկտի վրա կատարվում է մեկ այլ ազենսի (գործող առարկայի) միջնորդմամբ, և եթե խոնարհվող բայը ներգործական սեռի է, կարելի է ասել՝ գոյություն ունի կրկնակի ներգործականություն:

Ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ որն ունի կրավորական սեռի առանձին ցուցիչ՝ *-վ-* կրավորակերտ միջաձանց⁴, դասական գրաբարում հատուկ սեռանիշ ձևույթ չկա,

⁴ Պետք է նաև նշել, որ ժամանակակից հայերենի *-վ-* ածանցը բազմիմաստ է և բացի կրավորականությունից կարող է արտահայտել նաև սեռի այլ դրսևորումներ՝ անդրադարձություն (լվանալ-լվացվել), փոխադարձություն (համբուրել-համբուրվել), ինչպես նաև ձևավորել բայական բառույթը առանց լրացուցիչ սեռային իմաստի, ինչպես՝ բնակվել, զբաղվել, համաձայնվել, համարձակվել, հարձակվել, հաշտվել, հնազանդվել, սխալվել, վախճանվել, վերաբերվել և նման,

սեռի կարգը դրսևորվում է դիմաթվային վերջավորությունների հատուկ խմբերով, որոնք ունեն ընտրության բավական բարդ պատկեր: Բուն ներգործական սեռի բայերը կարող են ունենալ կրավորական սեռի փոխարկման միջոցներ՝ հիմնականում, ինչպես նշվեց, լծորդության փոփոխություն՝ *Ե – Ի*, և ներգործակերպ ու կրավորակերպ խոնարհումների հերթագայություն: Սրան հակառակ՝ պատճառականությունն արտահայտվում է հատուկ ձևաբանական միջոցով՝ *-ուցան-(<ոյց+ան>)//-ուզան-//ուսան-* ածանցով, որը կցվում է կատարյալի հիմքին, ընդ որում, ի հակադրություն ընդհանրական *-ուցան-* ածանցի՝ *-ուզան-* և *-ուսան-* տարբերակները վկայված են եզակի օրինակներով (տե՛ս աղյուսակը):

Պատճառական բայերի կազմության մեջ կատարյալի հիմքի ձևավորումը մնում է նույնը, բացի **ի** թույլ բաղադրիչ ունեցող բայերից, որոնց մեջ *-ուցան-* ածանցից առաջ այդ բաղադրիչն ընկնում է: Բոլոր պատճառական բայերը անցնում են Ե խոնարհման՝ անկախ սերող բայի լծորդությունից: Կա նաև պատճառականության արտահայտման վերլուծական միջոց՝ *տալ* բայի և իմաստակիր բայի անորոշ դերբայի հարադրությամբ:

Պատճառականության իմաստի ձևաբանական դրսևորումները համադրական և վերլուծական կառույցներով կարելի է ներկայացնել ստորև տրվող աղյուսակով (տե՛ս հաջորդ էջում):

այսպես կոչված, կրավորակերպ չեզոք բայերում, որոնք չեն կարող հանդես գալ առանց *-վ-* ածանցի: Այստեղ *-վ-* ածանցը փաստորեն բառակազմական գործառույթ ունի: Ժամանակակից հայերենում այս տիպի բայերի առաջացումը գրաբարյան կրավորակերպ Ի խոնարհման բայերի զարգացման յուրատեսակ արձագանք է, այսինքն՝ գրաբարյան Ի խոնարհման բայերը, որոնք անկախ բայասեռից ունեին կրավորակերպ խոնարհում, ժամանակակից արևելահայերենում պահպանում են իրենց «կրավորակերպությունը» այս անգամ արդեն *-վ-* կրավորական ածանցի տեսքով:

Բայասեռի ձևաբանական արտահայտությունները բայական հարացույցի տարբեր հատվածներում միակերպ չեն:

Դրանք տարբեր են ներկայի և կատարյալի հիմքերից կազմված ձևերում:

Համադրական			Վերլուծական
Պատճառական ածանցներով			
<i>-ուցան-</i>	<i>-ուզան-</i>	<i>-ուսան-</i>	Տալ (հզվդ.առնել) բայի և անորոշ դերբայի հարադրմամբ
Ա խոնարհում <i>խաղամ- խաղաց+ուցանեն</i>	Ե խոնարհում <i>ելանեն- ել+ուզանեն*</i>	Ի խոնարհում <i>կորնչիմ- կոր+ուսանեն</i>	Տամ սպանանել**
Ե խոնարհում <i>հատանեն- հատ+ուցանեն</i>	Ի խոնարհում <i>փլչիմ- փլ+ուզանեն //փլուցանեն</i>		
Մ խոնարհում <i>ուսանիմ- ուս+ուցանեն</i>	Ու խոնարհում <i>ընկլնում- ընկլ+ուզանեն</i>		
Ու խոնարհում <i>ջեռնում- ջեռ+ուցանեն</i>			

5 Հմմտ.՝ Ե.Г.Туманян, Древнеармянский язык, М., 1971, с. 324.

*Պահպանված է միայն *ընդելուզանեմ* ձևում՝ իմաստային անցումով:

**Վկայված են և կրկնակի պատճառականության օրինակներ՝ *տամխադացուցանել, ետ կորուսանելք*:

Ներկայի հիմքից կազմված ձևերում ներգործական-կրավորական սեռերի հակադրությունը դրսևորվում է Ե խոնարհման ներգործական բայերի մեջ լծորդ ձայնավորի հերթագայությամբ (ե =>ի)՝ ներգործական սեռի բայերը կրավորականի փոխակերպելիս. այսպես՝ *ներկա՝ սիրեմ – սիրիմ*, առաջին ապառնի՝ *սիրիցեմ – սիրիցիմ*, արգելական հրամայական՝ *մի սիրեր – մի սիրիր*, նույնպիսի հակադրություն դրսևորվում է նաև պատճառական բայերի մեջ, քանի որ դրանք, ինչպես նշվեց, անկախ իրենց սերող բայերի լծորդությունից՝ անցնում են **Ե խոնարհման՝ նստիմ (Ի խոնարհում) – նստուցանեմ – նստուցանիմ, գողանամ (Ա խոնարհում) – գողանայցեմ – գողանայցիմ:**

Ա խոնարհման բայերի մեջ ներգործական-կրավորական հակադրությունը ներկայի հիմքից կազմված ժամանակներից ձևաբանորեն առկա է միայն առաջին ապառնիում՝ *ստանայցեմ – ստանայցիմ*:

Կատարյալի հիմքից կազմված ձևերում ներգործական և կրավորական սեռերը տարբերակվում են դիմաթվային վերջավորությունների միջոցով: Այստեղ ևս դրսևորվում են որոշակի յուրահատկություններ: Ա, Ե, Ու խոնարհման ներգործական և պատճառական բայերից կրավորական կազմելիս կատարյալի հիմքին կցվում են այսպես կոչված կրավորակերպ *այ, -ար, -աւ, -աք, -այք/արուք, -ան* վերջավորությունները: Իսկ Ի խոնարհման դեպքում, որին այդ նույն վերջավորությունները հատուկ են «ի

6 Ա.Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958, էջ 200-201, Գ.Խաչատրյան, Գրաբար, Ե. 2014, էջ 175:

բնե», դրանցով արտահայտվում են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստները, այլ կերպ ասած՝ այդ բայերը երկսեռ կամ հասարակ սեռի բայեր են, որոնք ներգործական սեռի հատուկ վերջավորություններ չունեն:

Բայի սեռի և խոնարհման տիպերի (լծորդությունների), ինչպես նաև բայերի պարզ կամ ածանցավոր կազմության միջև գոյություն ունեն հետևյալ հարաբերությունները:

Ներգործական և չեզոք սեռերի բայերը կազմությամբ կարող են լինել թե՛ պարզ, թե՛ ածանցավոր և պատկանել բոլոր չորս լծորդություններին (Ա_{ներգ.} – *աղամ*, *մոռանամ*, Ա_{չեզ.} – *խաղամ*, *զարմանամ*, Ե_{ներգ.} – *գրեմ*, *արկանեմ*, Ե_{չեզ.} – *ապրեմ*, *անցանեմ*, Ի_{ներգ.} – *խորհիմ*, *ծնանիմ*, Ի_{չեզ.} – *նստիմ*, *կարկամիմ*, Ու_{ներգ.} – *կիզում*, *ընկենում*, Ու_{չեզ.} – *զարթնում*, *ցասնում*):

Քանակական առումով ներգործական սեռի բայերը հինանականում պատկանում են Ե և Ու խոնարհման⁸, իսկ Ա խոնարհման են պատկանում առավելապես չեզոք սեռի բայերը, և նույնիսկ հին հայերենի պատմական զարգացման ընթացքում այլ խոնարհումներից մի շարք չեզոք սեռի բայեր անցել են Ա խոնարհման:

Կրավորական սեռի սկզբնաձև բայեր չկան⁹: Կրավորական բայերը առաջանում են ներգործականների փոխակերպման հետևանքով՝ Ե>Ի լծորդության փոփոխությամբ՝ *գրեմ- գրիմ*: Այսինքն՝ Ե խոնարհման բայերը ստանում են Ի խոնարհման վերջավորությունները: Սա միակ դեպքն է, երբ դիմաբվային վերջավորությունների փոփոխությունը ոչ թե ձևական, այլ բովանդակային, այսինքն՝ քերականական արժեք ունի (ներգործական սեռի փոխակերպում կրավորականի): Մնացած բոլոր

⁷ Օնանիմ բայը իրականում եռասեռ բայ է, կարող է նշանակել և՛ «ծնում եմ», և՛ «ծնվում եմ», և՛ «ինձ ծնում եմ» [տե՛ս Վ.Առաքելեան, Գրաբարի քերականություն, էջ 141]:

⁸ Տե՛ս Ն. Զաքյան, Հին հայերենի կրկնասեռ բայերը, էջ 53: Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 189 և հաջ.:

⁹ Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջք 106-108:

դեպքերում միևնույն բայերի տարբեր լծորդություններով կիրառությունները բայասեռի փոփոխություն չեն առաջացնում, քանի որ ի հայտ են եկել պատմականորեն, խոնարհումների փոխանցման և լծորդությունների սեռանշտայան նախկին գործառույթի կորստի հետևանքով՝ առաջացնելով խոնարհման գուգաձևություններ, թեն խոնարհիչ ձայնավորները սկզբնապես եղել են սեռացուցիչներ¹⁰: Վ. Առաքելյանը քանակական հաշվումներով ներկայացրել է բայասեռերի բաշխումը ըստ առանձին խոնարհումների՝ «Ե խոնարհման բայերը մեկուկես անգամ ավելի են, քան մյուս խոնարհումների բայերը միասնաբար»¹¹, հետագայում սակայն ներգործական նշանակություննադոտանում է, և դրանք անցնում են չեզոք սեռին. ներգործականության արտահայտման համար առաջանում են պատճառական բայերը, որով փոխհատուցվում է Ե խոնարհման բայերի ներգործականության իմաստի կորուստը¹²: Ի խոնարհման չեզոք սեռի բայերից անցողական (ներգործական) կազմելիս ստացվում են պատճառական բայեր՝ *շիջանիմ – շիջուցանեմ, բազմիմ – բազմեցուցանեմ*:

Միաժամանակ, որոշ դեպքերում խոնարհման միևնույն վերջավորություններով արտահայտվում է ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի իմաստը:

Հարաբերակցությունը բայի սեռի, լծորդության և կազմության (բայածանցների) միջև ընդհանուր դրսևորումներով կարելի է ներկայացնել հետևյալ կետերում.

✓ Դասական գրաբարում բայասեռի արտահայտման հատուկ սեռանիշ մասնիկներ չկան (ինչպես ժամանակակից հայերենի -վ- կրավորակերտ ածանցն է):

¹⁰ Հմմտ. Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջք 111, 117:

¹¹ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 110:

¹² Ն. տ., էջ 113:

✓ Հին հայերենում սկզբնապես բայասեռի արտահայտությանը ծառայել են խոնարհիչ ձայնավորները, սակայն գրավոր ավանդված շրջանում այդ օրինաչափությունը խախտվել է:

✓ Նախապես ներգործական սեռին են պատկանել հիմնականում Ե խոնարհման բայերը, իսկ Ա խոնարհման բայերը գերազանցապես պատկանել են չեզոք սեռին:

✓ Բայի սեռի արտահայտության հետ է կապվել նաև բայի կազմությունը. Ա և Ու խոնարհման ածանցավոր բայերը գերազանցապես չեզոք սեռի են:

✓ Ե խոնարհման ներգործական սեռի բայերը կրավորականի փոխակերպվելիս ստանում են Ի խոնարհման բայերի դիմաթվային վերջավորությունները: Այստեղ գործ ունենք ոչ միայն ձևի, այլև բովանդակության փոփոխության հետ:

✓ Ներգործական և կրավորական սեռերի հստակ հակադրություն տեսնում ենք միայն անցյալ կատարյալ ժամանակում: Մյուս ժամանակաձևերում հակադրությունը չեզոքանում է:

Որպես ընդհանուր եզրակացություն՝ կարող ենք ասել, որ ուսումնասիրվող շրջանի գրաբարում խախտվել էին բայասեռի դրսևորման նախկին՝ ավելի հստակ օրինաչափությունները: Այս վիճակը հետագայում պետք է հանգեցնե՞ր այդ քերականական կարգի արտահայտման նոր միջոցի՝ -վ- կրավորակերտ ածանցի առաջացմանը:

Hovsepyan Liana – The Category of Voice in Old Armenian.– The definition of the category of voice in Old Armenian is a complicated problem in Armenian grammar because of the loss of former morphological means for its expression dependent on conjugation types and morphological structure of the verbal lexeme (simple or with present stem affixes). For the period of the written fixation of Old Armenian at the beginning of the V c. a. D. four types of verbal voices are distinguished: active, passive, neutral and common, the morphological differentiation

among them being often neutralized. Such situation creates preconditions for a new means for expressing the passive voice in Modern Armenian by the affix *v* (<*ou).

Овсепян Лиана – Категория залога в древнеармянском языке. – Характеристика категории залога является одной из сложных проблем теории древнеармянского языка, т. к. в период его письменной фиксации (V в.н. э.) была утрачена бывшая, более четкая корреляция между планом выражения и планом содержания этой категории, обусловленная типом спряжения (спрягающими гласными) и морфологической структурой глагольной лексики (простой либо с презентными суффиксами). Для указанного периода исследователи обычно выделяют четыре залога: действительный, страдательный, средний и общий, причем морфологическое противопоставление между ними зачастую нейтрализуется. Такое положение создает предпосылки для образования нового способа выражения этой категории – с помощью страдательного суффикса *v* (<*ou) в новоармянском языке.

**ՈՍՋՄԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Հովսեփյան Լիանա

Բանալի բառեր – Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», բառապաշար, ռազմական տերմինաբանություն, զինվորական պաշտոններ, սպառազինություն, հանդերձանք, զինամթերք, զինատեսակներ, ռազմական գործողություններ:

Մովսես Խորենացու ստեղծագործական ժառանգությունը մշտապես գտնվել է հայ բանասիրության ուշադրության կենտրոնում: Հատկապես նրա «Հայոց պատմությունը» քննության նյութ է ծառայել տարբեր բնագավառների մասնագետների՝ պատմաբանների, աղբյուրագետների, փիլիսոփաների, լեզվաբանների, գրականագետների համար, որոնք տարբեր հայեցակետերով ու նպատակներով զբաղվել են հայ մատենագրության այդ նշանավոր հուշարձանի ուսումնասիրությամբ:

«Պատմության» լեզվաոճական առանձնահատկությունները ևս չեն վրիպել հետազոտողների ուշադրությունից:

¹ Նշենք այդ ուսումնասիրություններից միայն մի քանիսը՝ **Հ. Մանանդյան**, Մովսես Խորենացու բառապաշարը, Ե., 1935, **Հրանդ Արմեն**, Խորենացին և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, ՊԲՀ, 1969, N 1, **Վ. Առաքելյան**, Խորենացու լեզուն և ոճը, ՊԲՀ, 1975, N 2, **Վ. Առաքելյան**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, **Գ. Զահուկյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981, N 3, **Գ. Մուրադյան**, Մովսես Խորենացու «Պատմության» լեզվի հունարան շերտը, ՊԲՀ, 1993, N 1-2, **Վ. Համբարձումյան**, Մովսես Խորենացու «Տենչայ Սա-թենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, N 2, 1995, **Օ. Խաչատրյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի քննություն, Ե., 2016 ն.:

Կազմվել է երկի համաբարբառը², հաճախականության բառարանը³, դիտարկվել և գնահատվել են բառօգտագործման այլևայլ կողմերը:

Իր բովանդակային հարստության և կյանքի տարբեր բնագավառների ընդգրկման շնորհիվ Խորենացու երկը պարունակում է բառապաշարի այնպիսի շերտեր, որոնք կարելի է խմբավորել նաև թեմատիկ առումով և դիտարկել որպես այս կամ այն բնագավառի տերմինային համակարգի արտացոլում: Այս հայեցակետից կատարված ուսումնասիրությունները կարող են Խորենացու երկում բացահայտել նրա ապրած և նկարագրած ժամանակաշրջանների հասարակական կառուցվածքի, աշխարհագրական և վարչատարածական բաժանման, ռազմաքաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների, կրոնական ու եկեղեցական կյանքի, տնտեսական գործունեության, ինչպես նաև գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների համար բնորոշ տերմինային բառեր, հասկացություններ և արտահայտություններ: Այդ կարգի հետազոտություններից հիշատակելի է Խորենացու երկում ճարտարապետական տերմինների քննությանը նվիրված հոդվածը⁴:

Խորենացու ժամանակաշրջանի լեզվում ռազմական տերմինահամակարգի քննության համար նույնպես «Պատմությունը» զգալի նյութ է պարունակում⁵, քանի որ հեղինակը

² Տե՛ս **Հայկական համաբարբառ** –7, Մովսիսի Խորենացու պատմութիւն Հայոց, հատ 1-3, Ե., 1975–1976:

³ Տե՛ս **Խաչատրյան Օ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարան, Ե., 1986:

⁴ **Խաչատրյան Օ.**, Ճարտարապետական և շինարարական տերմինները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, «Գիտական աշխատությունների ժողովածու», Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հրատ., հատ. II (22), Ե., 2004:

⁵ Սույն հետազոտության փաստական նյութի համար հիմք են ծառայել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քննական բնագրի 1991 թ. շրատարակությունը, վերը նշված «Հայկական համաբարբառի» 7-րդ պրակի 1-

հաճախ անդրադառնում է ռազմաքաղաքական իրադարձություններին, տեղեկություններ է հաղորդում ռազմական գործողությունների և դրանց հետևանքների, զորամիավորումների, զորքերի տեսակների ու նրանց առաջնորդների, զինվորական պաշտոնյաների, մարտիկների սպառազինության ու հանդերձանքի, զենքերի տեսակների մասին, տալիս է ճակատամարտերի, զորաշարժերի, ռազմական կառույցների ու ճամբարների մանրամասն նկարագրություններ, բնութագրում է կռվի մասնակիցներին, դրվատում է նրանց մարտական ունակությունները, քաջագործությունները և այլն՝ հաճախ գեղարվեստական հարուստ պատկերավորմամբ, բայց և ճշգրիտ ու տեսանելի մանրամասներով:

Այս նկարագրությունների շնորհիվ Խորենացու երկում վկայված ենք գտնում «**ռազմական գործ**» իմաստային դաշտին պատկանող բազմաթիվ բառեր, տերմիններ և տերմինային արժեք ունեցող արտահայտություններ, որոնք կարելի է թեմատիկ առումով բաժանել մի քանի խմբերի՝

1. **Զորքի (զինվորների) տեսակներ,**
2. **Զինվորական կարգավիճակ և պաշտոններ,**
3. **Զորամիավորումներ, զինվորական ստորաբաժանումներ,**
4. **Սպառազինություն, զենքեր, հանդերձանք, զինամթերք,**
5. **Ռազմական գործողություններ և դրանց հետևանքներ,**
6. **Ռազմական շինություններ և տեղանք, դիրքավորում:**

Սկզբից նեթ պետք է նշել, որ Խորենացու երկում վկայված ռազմական տերմինների զգալի մասը ներկայացված է

3 հատորները և **Օ. Խաչատրյանի**՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանը»:

ոչ միայն նեղ տերմինաբանական արժեքով, այլև սովորական, ընդհանուր լեզվական գործածությամբ՝ կախված որոշակի համատեքստից: Առանձին հետաքրքրություն են առաջացնում այն բառամիավորները, որոնք թեև իսկական իմաստով ռազմական տերմիններ չեն (այդ պատճառով հազիվ թե ընդգրկվեն երբևէ կազմվելիք բուն ռազմական տերմինների բառարանների մեջ), բայց կարևոր տեղեկություններ են պարունակում Խորենացու նկարագրած դարաշրջանների զինվորական գործի, մարտական գործողությունների, դրանց մասնակիցների, սպառազինության, ռազմավարության ու մարտավարության տեխնիկայի և հարակից իրողությունների վերաբերյալ:

Մասնավորապես դրանք այն մակդիրներն են ու բնութագրումները, որոնցով Խորենացին ներկայացնում է իր հերոսներին՝ **դիպաղեղն, կորովաձիգ, հաստաղեղն, նիզակակից, քաջաձի, քաջաղեղն, քաջամարտիկ**, կամ՝ զենքի տեսակներին վերաբերող ածականները՝ **բոլորատեգ, երկսայրի, երեքթևեան, լայնալիճ**, զանազան գործողություններ կամ հանգամանքներ՝ **յեղուզակաբար, մկնդահար** և այլն:

Կան նաև ռազմական տերմիններ (զենքի տեսակներ և պատերազմական գործի հետ կապված այլ անվանումներ), որոնք «Պատմության» մեջ արմատական ձևով չեն հանդիպում, բայց պահպանված են բաղադրյալ բառերի կազմում (օր.՝ վերոնշյալ **մկնդահար** բառի արմատը՝ **մկունդ** զինանունը, առանձին կիրառությամբ չի հանդիպում Խորենացու երկում): Այդպիսի կազմությունները և նրանց իմաստային կիրառությունները նույնպես ըստ անհարժեշտության ներկայացված են համապատասխան թեմատիկ խմբերում:

«Պատմության» մեջ պահպանված ռազմական տերմինաբանության մյուս առանձնահատկությունն այն է, որ կոնկրետ գործածություններից կամ բնագրից երբեմն հնարավոր չի լինում որոշել նրանց ճշգրիտ իմաստը կամ տարբերակում մտցնել հոմանիշների միջև: Այդպիսի կիրառություններից են,

օրինակ՝ մի շարք զինվորական պաշտոնների (**զօրագլուխ, զօրապետ, զօրավար**), զորամիավորումների (**գումարտակ, գունդ, վաշտ, ջոկատ, զօր, հրոսակ, յեղուզակ**) անվանումները և այլ բառամիավորներ: Այս կարգի բառերի տերմինային արժեքի ճշգրտման համար անհրաժեշտ են ոչ միայն լեզվաբանական, այլ նաև պատմառագմագիտական մասնագիտական հետազոտություններ, որոնք, ցավոք, շատ քիչ են:

Պետք է նաև նկատի ունենալ, որ սույն հոդվածում քննված՝ ռազմական գործին առնչվող բոլոր բառամիավորները չեն, որ կարող են ունենալ ստույգ տերմինային արժեք և համապատասխանել տերմինաբանության ժամանակակից ըմբռնումներին, սակայն դրանց քննությունը կարևոր է Խորենացու ժամանակաշրջանում ռազմական գործի և այն արտացոլող բառապաշարի ուսումնասիրության տեսակետից:

Ստորև ներկայացվում են Խորենացու «Հայոց պատմության» մեջ վկայված ռազմական տերմիններն ու տերմինային արժեք ունեցող բառակապակցությունները ըստ առանձնացված խմբերի:

1. Զորքի (զինվորների) տեսակներ

Բուն զորատեսակներ նշանակող տերմիններից Խորենացու պատմության մեջ հանդիպում են հին աշխարհից

6 Հմմտ, օրինակ՝ **Աբրահամյան Վալենտինա**, Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. II, Ե., 1950, որում հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերի, գրչագիր մատյանների նկարագրադրումների, ինչպես նաև պատմիչների վկայությունների հիման վրա հեղինակը ներկայացնում է միջնադարյան Հայաստանում կիրառվող զինատեսակները, թեև նշում է նաև, որ ոչ բոլոր դեպքերում կարելի է հանգել ստույգ եզրակացությունների: Տե՛ս նաև՝ **Ն.Ա. Արզումանյան**, Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող «մատեան գունդ» զորամասը, ՊԲՀ, 1973, N 2:

հայտնի երկու հիմնական խմբավորումների անվանումները՝ **հետևակազոր** և **հեծելազոր**՝ իրենց հումաշային տարբերակներով:

Հետևակազոր,

Հետևակ – սրանցից առաջինը՝ **հետևակազոր**, ունի միայն մեկ վկայություն՝ **չորիք բիրովք հետևակազորու** (46): Ավելի հաճախ է կիրառվել սրան հոմանիշ **հետևակ** տարբերակը: Ընդհանրապես Խորենացու երկում կա **հետևակ** բառի 9 կիրառություն, որոնք հիմնականում ունեն բուն ռազմագիտական նշանակություն: Սրանցից երկուսում բառը կիրառվել է ածականաբար՝ որպես զորատեսակի բնութագրում՝ **հետևակ զորք** բառակապակցության մեջ՝ **ապա զորածողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բել ամբոխի հետևակ զորաց** (34), **Գորգոնոս իշխան հետևակ զորուն** (45): Երեքը ունեն գոյականական կիրառություն՝ **երազ ժողովեցան զորքն ամենայն, նա և Արգամ ... ամբոխ հետևակաւ** (169), **առեալ զբազմութիւն հետևակացն՝ ի կողմ ելանէր** (171), **առնուլ զամենայն զօրս Յունաց ... այլ և զհետևակս պահապանս քաղաքացն** (303), իսկ մեկը գործածված է մակբայական արժեքով՝ **զնիզակն իւր ... ձգեալ ի հետևակուց՝ խորագոյն նստոյց յերկանաքար արձանին** (119) օրինակում. նշանակում է «հետևակ գոլով, ի հետիոտս» (ՆՀԲ), այսինքն՝ «ոտքի վրա, հետիոտն կամ կանգնած տեղից»: Սա ասվում է շեշտելու համար նետողի ուժը և կորովը, քանի որ նիզակը ձիարշավ նետելու դեպքում ավելի

7 Բնագրային մեջբերումների էջերը նշում ենք փակագծերում՝ ըստ հետևյալ հրատարակության՝ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը **Մ.Արեղեանի** և **Ս.Հարութիւնեանի**, Նմանահանութիւն, Լրացումները **Ա. Բ. Սարգսեանի**, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1991: Քանակական տվյալները բերվում են ըստ վերը նշված՝ **Օ. Մ. Խաչատրյանի**՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանի, Ե., 1986 և համեմատվում են Խորենացու երկի «Համաբարբառի» տվյալների հետ:

ուծգին հարված կստացվեր: Հմնտ. նաև ՆՀԲ-ի՝ **գառիւծ և գայծեամ ի հետևակուց ըմբոնէր նա** օրինակը:

Զինվորական գործի հետ առնչվում է նաև **առաքէ գաղտնագնաց հետևակս** (228) օրինակը, բայց **հետևակ** բառն այստեղ նշանակում է ոչ թե «հետևակ զինվոր», այլ «հետևող՝ լրտես, հետախույզ, խուզարկու» (տե՛ս ստորև):

Հետևակ բառի մյուս կիրառությունը ռազմական տերմինի արժեք չունի, այլ նշանակում է պարզապես «հետիոտն»՝ **աստ ուրեմ զմահն ասել Շամիրամայ և զհետևակ փախուսուն** (56), այսինքն՝ «հետիոտն՝ ոչ ձիով կամ կառքով»:

Հետևակամարտ – **հետևակ** բառակազմական հիմքով Խորենացին գործածել է երկու բարդ բառ, որոնցից մեկը՝ **հետևակամարտ**, դարձյալ կապվում է ռազմական գործի հետ և փաստորեն «հետևակ զինվոր» կամ «հետևակ կովող» է նշանակում: Վկայված օրինակն է՝ **հետևակամարտքնի վերայ ուսոց ձիոց բերեալք** (72): Մյուս կազմությունը՝ **հետևակագնաց**, Խորենացու երկում ռազմական տերմինի արժեք չունի և նշանակում է «հետիոտն, ոտքով գնացող»՝ **աուր միոյ հետևակագնացի առն ճանապարհի** (40):

Հեծելագոր,

Հեծեալ – այս տերմիններից **հեծելագորը** վկայված է երկու կիրառությամբ՝ **հինգ հազար հեծելագորու** (45), և **առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելագորու** (133): Եվս երկու օրինակ վկայված են **հեծեալ** հոմանիշով՝ առանց **գոր** բաղադրիչի (ինչպես և վերը բերված **հետևակ** տերմինի դեպքում է՝ **հետևակագոր**-ին զուգահեռ)՝ **երկու հազար հեծելովք** (46), այլ **միայն հինգ հարիւր հեծելով** (133):

Այրևձի – որպես **հեծելագոր** տերմինի երկրորդ հոմանիշ Խորենացու երկում վկայված է **այրևձի** տերմինը մեկ կիրառությամբ՝ **անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս հանդերձ բազմութեամբ այրևձիոյն** (271):

Զորատեսակների ուրիշ այսպիսի մեծ խմբավորումներ,

որոնք տարբերվեին իրենց ռազմական տեխնիկայի և առանձնահատուկ մարտական գործողությունների տեսակետից, այդ ժամանակաշրջանից Խորենացու պատմության մեջ վկայված չեն:

Ռազմիկների խմբերի միջև եղած մյուս կարևոր տարբերակումը հիմնվում է նրանց գործածած հիմնական զինատեսակների և սպառազինության վրա: Այստեղ ևս պետք է նշել, որ Խորենացու երկում վկայված անվանումները կարող են ունենալ ինչպես բուն ռազմագիտական տերմինային նշանակություն, այնպես էլ ծառայել երկի գեղարվեստական պատկերավորման նպատակներին:

Զինանուն հիմքերով կազմված զինվորների տեսակների անվանումներից Խորենացու երկում վկայված են հետևյալ տերմինները՝ **աղեղնաւոր**, 5 կիրառությամբ, **նիզակաւոր**, 3 կիրառությամբ, **սոււերաւոր**, 2 կիրառությամբ, **շերտաւոր**, **պարսաւոր**, **տիզաւոր**՝ մեկական կիրառությամբ բոլորն էլ կազմված **-աւոր** ածանցով՝ «տվյալ զինատեսակը կրող՝ ունեցող» նշանակությամբ: Վկայված են հետևյալ բնագրային օրինակները.

Աղեղնաւոր – մյուսների համեմատ **աղեղնաւոր** տերմինի ավելի հաճախական կիրառությունը բացատրվում է նրանով, որ (նետ ու) աղեղը հին աշխարհի հիմնական հեռահար զենքն էր, և այդ զենքին քաջ տիրապետելը կարևոր հատկանիշ էր մարտնչողներին բնութագրելու համար: Այդ են վկայում Խորենացու կիրառած մակդիրների մեջ **աղեղ** հիմքով կազմված ածականները՝ **դիպաղեղն** – **պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք** (72), **հաստաղեղն**– **քաջ նախարար**, **կորովաձիգ** և **հաստաղեղն** (32), **քաջաղեղն** – **առեալ անձնագեղոյն** և **քաջաղեղանն արին Վաղարշակայ** (31), ինչպես նաև նախորդ օրինակի **կորովաձիգ** մակդիրը, որ դարձյալ կապվում է աղեղի և նետաձգության հետ: Ինչ վերաբերում է բուն **աղեղնաւոր** տերմինին, ապա այն իր հերթին գրեթե միշտ

հանդես է գալիս **քաջ** կամ **կորովի** ածականների հետ՝ կազմելով յուրատեսակ իմաստային զույգեր, որ երևում է այստեղ բերված օրինակներում՝ **արս քաջս և աղեղնաւորս** (35), **ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց** (43), **լինի պատերազմ ի մեջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց** (177), **Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց** (200):

Նիզակաւոր – **նիզակ**-ը և **տեգ**-ը կարևոր հարձակողական զինատեսակներ են եղել (ավելի մանրամասն տե՛ս զինանուններին վերաբերող հատվածում), որոնց անունով տարբերակվել են և դրանց կրողները: **Նիզակաւոր**-ի կիրառություններն են՝ **բայց գովեմ զքաջ նահատակն իմ և զնիզակաւորն** (82), **արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս** (110), **զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմ սկայ վառեալ** (267): **Շերտաւոր** – վկայված է մեկ օրինակով՝ **և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք և շերտաւորքն ի սուսեր և ի տեգ նիզակի վառեալ** (72): Այս տերմինի բացատրությունը ըստ ՆՀԲ-ի հետևյալն է. «Ունող զգործի շերտ շերտ կոտորելոյ, ջարդելոյ, որպէս տապարաւոր, սակրաւոր, տիգաւոր են»: Հետևաբար **շերտաւորները** տապարի կամ սակրի նման զինատեսակ կամ գործիք են ունեցել: ՆՀԲ-ի բացատրության մեջ նշված **տիգաւորը** չպետք է համարել **շերտաւորի** հոմանիշը (թերևս **տիգաւորը** այստեղ բերվում է պարզապես **-աւոր** ածանցի ընդհանրությամբ), քանի որ Խորենացու վերոհիշյալ հատվածից երևում է, որ շերտավորները զինվեցին սուսերներով և տեգերով (նիզակներով), հետևաբար դրանք նույնարժեք չէին, ընդ որում՝ «տեգ նիզակին» կռվում ավելի զորավոր էր և գործառական ավելի մեծ հնարավորություններ ուներ: Նիզակներով հարվածում էին ինչպես հեռվից, այնպես էլ մերձավոր ձեռնամարտում: Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ զինատեսակներ նշանակող տերմինների քննության մեջ:

Պարսաւոր – զինվորների կարգերից կամ տեսակներից հավանաբար նվազ կարևոր էին համարվում **պարսավորները**

(պարս ունեցողները) և **շերտավորները**։ Այս է պատճառը, որ Տիգրան Մեծի հաղթանակների շնորհիվ երկրի հարստացման և գորքի վերազինման մասին խոսելիս Խորենացին հատուկ կերպով նշում է. **«Հետևականարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիգակի վառեալք. այսինքն՝ պարսով (պարսաստիկով) կռվողները դարձան աղեղնավորներ, իսկ շերտավորները ստացան սուսերն նիգակ:**

Սուսերաւոր – սուսերը ՆՀԲ-ում ներկայացվում է որպես **սրի** հոմանիշ՝ «նոյն ընդ սուր»։ Սրանք տվյալ ժամանակաշրջանի շատ գործուն և տարածված զինատեսակներ են եղել, և դրանց անվանումները բավական մեծ հաճախականություն ունեն Խորենացու երկում (տե՛ս ստորև)։ **Սուսերաւոր-ը** վկայված է երկու օրինակով՝ **ի մօտ հասանել սուսերաւորաց և զհուռութսն ի ծով** (56), **արս ընտիրս և քաջս, նիգակաւորս և սուսերաւորս** (110)։

8 Այլուր վկայված է նաև պարսայակ, պարսատակ, պարսատիկ ձևերով։

9 Շերտ արմատը ինքնին ռազմական տերմինի արժեք չունի, քանի որ, ինչպես տրված է ՆՀԲ-ում, նշանակում է «ջարդեալ մասն, կոտորակ փայտի պատառելոյ» և այլն, Խորենացու երկում այն որպես մաքուր արմատ չի հանդիպում և պահպանվել է միայն շերտաւոր բաղադրության մեջ։ Դժվար է ենթադրել, թե եղել է շերտ անունով զինատեսակ (ինչպես պարսաւոր-ի, տիգաւոր-ի և մյուս զինատեսակները կրողների անվանումների դեպքում է), այլ համապատասխան մարտիկները շերտաւոր էին կոչվում, քանի որ ունեին «գործի շերտ շերտ կոտորելոյ» (ըստ ՆՀԲ-ի)։ Այս ենթադրության օգտին է խոսում նաև ՆՀԲ-ում Շերտակոտոր գլխաբառի բացատրության մեջ տրված օրինակը՝ «ի հարկէ տապար ի գործ արկեալ շերտակոտոր առնելով քանդէր (զշիրիմն). Պիտ»։ Հետևաբար ենթադրելի է, որ շերտաւոր-ի ներքին ձևն է՝ «շերտատող, շերտ-շերտ կոտորող» (ինչպես հնձվոր նշանակում է «հնձող, հունձ անող»), այսինքն՝ շերտավորներն անվանվում էին ոչ ըստ իրենց զինատեսակի, այլ ըստ գործողության արդյունքի։ Սրանով էլ շերտավոր-ը տարբերվում է զինանուն հիմքերով կազմված՝ զինվորների մյուս տեսակներից, որոնք անվանվում էին ըստ իրենց գործածած զենքերի։

Տիգաւոր – այս տերմինը վկայված է Մուրացեան Արգամին բնութագրող **տէր տիգաւորաց**, այսինքն՝ «նիգակաւոր ռազմիկներ ունեցող» կապակցութեան մեջ՝ **միայն ակնածէին Մուրացենէն Արգամայ, զի այր քաջ էրև բազմաց տէր տիգաւորաց** (171):

Մերկ – ինչ վերաբերում է **մերկ** տերմինին, ապա այդպէս կոչվում էին նետաձիգները (աղեղնավորները), քանի որ նրանք կոչվում էին հեռվից և հատուկ պաշտպանական գրահավորում չունէին: Նրանք կազմել են առանձին գնդեր, և զինված են եղել միայն նետ ու աղեղներով: Այնուամենայնիվ, նրանք նույնպէս նոր հանդերձավորում ստացան, ինչպէս նշվեց վերը՝ **մերկքն վահանօք և զգեստուք երկաթօք պարածածկէալք** (72), այսինքն՝ ունեցան վահաններ և երկաթե պաշտպանական զգեստավորում: Նշենք նաև, որ ՆՀԲ-ում **Մերկ** բառի բացատրութեան մեջ նրա ռազմական տերմինի իմաստը առանձին ներկայացված չէ: Սակայն բերվող օրինակներից մեկը (Եղիշէի երկից)՝ **Որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն**, համապատասխանում է մեր բերած մեկնաբանութեանը¹⁰:

Զինվորական այլ «մասնագիտություններ» կամ պարտականություններ նշանակող տերմիններից Խորենացու երկում վկայված են **զինակիր, լրտես, հետալոյզ** և սրան հոմանիշ՝ **հետևակ**:

Զինակիր – այս բառի բացատրությունը ՆՀԲ-ում տրվում է երկու իմաստով. առաջինը՝ գոյականական՝ «թիկնապահ

¹⁰ Հմմտ. **Ստ. Մալխասյանցի** «Հայերէն բացատրական բառարանում» ՄԵՏԿ բառի երկրորդ իմաստը՝ «Առանց զենքի ու զրահի: Մերկ զինուորներ: Մերկ ըմբիշներ»: Տէ՛ս նաև՝ **Վ. Աբրահամյանի** «Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները» աշխատությունում հայ և օտարազգի պատմագրությունից մեջբերված փաստերը (էջ 49 և հաջ.):

կամ արբանեակ, որ կրէ ի ձեռին զգէն գլխաւորին» և երկրորդը՝ ածականական՝ «Զինազգեաց. սպառագէն, զինաւոր»: Խորենացու երկում վկայված է միայն առաջին իմաստը՝ 4 օրինակով՝ **իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ մեռանի** (45), **հրամայեաց միում ի զինակրացն՝ կտրել զոսս նորա սրով** (158), **Վարդանաւ զինակրաւ արքայի** (282), **գրգռէր զարքայ Վասակ զինակիր նորա** (286):

Մյուս՝ **լրտես, հետայոյզ և հետևակ** հումանշային տերմիններն ունեն մեկական կիրառություն:

Լրտես – վկայված օրինակն է՝ **ոչ թողացուցին նմա առաջախաղաց գունդք և լրտեսք՝ պատառել զայնու** (287):

Հետայոյզ – կիրառված է այժմյան «հետախույզ» տերմինի իմաստով՝ **որում իրազգած եղեալ արքային Երուանդայ հետայոյզս առաքէ** (163):

Հետևակ – ունի մեկ կիրառություն նույն՝ «հետախույզ» իմաստով: Այդ մասին խոսվեց վերը՝ **հետևակ** համանուն տերմինի բացատրության մեջ՝ **առաքէ զաղտնագնաց հետևակս** (228):

2. Զինվորական կարգավիճակ և պաշտոններ

Խորենացու երկում վկայված են զգալի թվով անվանումներ, որոնք բնութագրում են մարդկանց զինվորական դասին պատկանելու կամ ռազմական գործով զբաղվելու առումով: Այդպիսի բառերում ըստ ներքին ձևի կարելի է տարբերակել երկու իմաստ՝ «զենք կրող՝ ունեցող» և «գորքին պատկանող՝ գորական՝ զինվորական»: Այդ երկու իմաստներով վկայված են **զինուոր** և **զինաւոր** բառերը: Երկրորդ՝ **զինաւոր** տարբերակը իմաստակառուցվածքային տեսակետից առնչվում է ավելի մասնավոր՝ կոնկրետ զինատեսակ կրող զինվորների անվանումներին (հմմտ. վերը բերված՝ **աղեղնաւոր, նիզակաւոր, պարսաւոր, սուսերաւոր, տիգաւոր** տերմինների շարքը), բայց

ունի ավելի ընդլայնված՝ «ընդհանրապես զենք կրող՝ ունեցող» նշանակությունը: **Զինուոր** տարբերակի մեջ ավելի զգալի է «զինվորական դասին պատկանող» իմաստը, թեև նշանակյալի (դեմոտատի) առումով երկուսն էլ նույնական են: Ավելի սովորական և ընդհանրական կիրառություն է ունեցել **զինուոր** տարբերակը (որը և պահպանվել է մինչև օրս, մինչդեռ **զինաւոր**-ը դուրս է մղվել գործածությունից):

Զինուոր – Խորենացու երկում այս տարբերակը վկայված է երկու կիրառությամբ՝ **մի ում ի զինուորացն մտեալ եհար զգլուխն Երուանդայ** (173) և **հանդերձ զինուորօք իւրեանց եօթն հարիւրովք** (321):

Զինաւոր – այս տարբերակը ունի մեկ վկայություն՝ **դարձաւ առ զերեալ Յոյնսն զինաւորս** (290): ՆՃԲ-ում **զինաւոր** տերմինը, ինչպես նաև նրանից կազմված **զինաւորիմ** բայը հղվում են իրենց ավելի սովորական տարբերակներին՝ **զինուոր** և **զինուորիմ**: Խորենացու **զինաւոր** կիրառությունը ՆՃԲ-ի օրինակներում նշված չէ:

Զինուորութիւն – **զինուոր** հիմքից կազմված **զինուորութիւն** հավաքականություն արտահայտող տերմինը Խորենացու երկում ունի երկու կիրառություն, երկուսն էլ հոգնակիաձև: Ենթադրելի է շրջասական կիրառություն՝ վերացականը թանձրացականի փոխարեն՝ «զինվորներ» իմաստով, հատկապես **կարգ զինուորութեանց** կապակցության մեջ, որն անշուշտ նշանակում է «զինվորների կամ զինվորականների (և ոչ թե զինվորությունների) կարգեր՝ տեսակներ»: Այդ երևում է թվարկման մյուս անդամներից, որոնք տրված են պարզապես հոգնակի ձևով՝ **և առ այսոքիք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն, զունդք և միանգամայն զօրականացն վաշտք** (190):

¹¹ Ոճական նույն՝ վերացականը թանձրացականի փոխարեն, հնարանքն է կիրառված նաև «նախարարութեանցն զունդք» արտահայտության մեջ:

Ավելի ակնառու է նույն կառուցվածքն ունեցող մյուս օրինակը՝ **Օրէնսիւմ հաստատէ ի տան թագաւորոյթյան իւրոյ ... Եւ կարգս զինուորոյթեանց, և նոցունց առաջին և երկրորդս, և երրորդս, և որ ի կարգին** (117)։ Բնականաբար, այստեղ ևս նկատի են առնվում **զինվորների** կարգերը, ինչպէս նշվեց վերը։

Զօրական – պատկանելությունը զինվորական դասին՝ գորքին արտա- հայտվում է և **զօրական** տերմինով։ ՆՅԲ-ում որպէս առաջին իմաստ տրվում է այս բառի հավաքական «գորք» նշանակությունը՝ «զօրաւոր որեար, կամ դաս զինուորական. զօր. սպայ»։ Այս իմաստով Խորենացու երկում օրինակ չկա։ Այնտեղ վկայված երկու կիրառությունն էլ ունեն ոչ թէ հավաքական, այլ կոնկրետ՝ պարզապէս «գորքին՝ զինվորական դասին պատկանող անձ» իմաստը, ինչպէս վերը նշված օրինակում՝ **նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք** (190), և մյուսը՝ **զօրականք անարիք, սնապարծք, զինատեացք, պղերգք** (364) բացասական բնութագրոյթյան մեջ։

Մարտիկ – այս տերմինի՝ «զինվորական դասին պատկանող անձ» իմաստը Խորենացու երկում հանդիպող երկու օրինակում էլ ընդգծվում է ի հակադրություն «ոչ զինվորական՝ որևէ այլ դասի պատկանող» իմաստի՝ **ամբոխի մեծաւ և արամբք մարտկօք** (200), ինչպէս նաև՝ **ոչ միայն մարտիկս, այլ և զոամիկ շինականս** (263) կիրառություններում **մարտիկ**-ը մի դեպքում հակադրվում է **ամբոխ**-ին՝ որպէս անորոշ կազմ ունեցող բազմութեան, մյուս դեպքում՝ կոնկրետ, ոչ զինվորական հասարակական խավին՝ **շինականներ**-ին։

Մրցող – «Հայոց պատմութեան» մեջ վկայված է մեկ կիրառութեամբ՝ **դիմեալ գայ ի վերայ քո Բել յաւերժիւք քաջօք և ...**

Աշխարհաբար տեքստում թարգմանված են ածականներով՝ «զինվորական պաշտոնյաներ», «նախարարական գնդեր» (էջ 205)։

սկայիւք մրցողօք (34): Այս բառը ՆՀԲ- ում չի տրվում որպես առանձին գլխաբառ՝ հավանաբար համարվելով **մրցիմ** բայի քերականական ձև, բայց առանձնացված է Օ. Խաչատրյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանում», ինչպես նաև «Համաբարբառում»¹²: Դատելով խոսքաշարից՝ **մրցող** ձևը կարելի է ընկալել և՛ որպես ժամանակակից առումով մարզական (սպորտային), և՛ որպես ռազմական տերմին, մանավանդ որ գործածված է **յաւերժիւք քաջօք** արտահայտության հետ զուգահեռ, որը նույնպիսի մի զուգահեռ է հիշեցնում «անմահների գունդ» ռազմական հասկացության հետ, որի մեկնաբանություններից մեկն է՝ «մշտապես նույն թվակազմը պահպանող (համալրվող) գունդ»: Ըստ այդմ **յաւերժիւք քաջօք** արտահայտությունը կարող է նշանակել քաջ մարտիկների զորախումբ, որի թվաքանակը անփոփոխ է մնում՝ մշտապես համալրվելով նոր մարտիկներով՝ կորուստների փոխարեն: Պետք է սակայն նշել, որ «անմահների գունդը» հատուկ էր Սասանյան Պարսկաստանի բանակին, և դրա վերագրումը Բելի զորքին կարող է դիտվել պատմական անախրոնիզմ (Խորենացու կամ հետագա ուսումնասիրողների կողմից):

Վաշտկան – զինվորական կարգավիճակ նշանակող՝ վերը նշված ավելի ընդհանուր հասկացությունների կողքին Խորենացու «Պատմության» մեջ հանդիպում են և ավելի մասնավոր անվանումներ՝ ըստ զինվորական ստորաբաժանումների: Այդպիսի տերմիններից է մեկ անգամ գործածված **վաշտկան**-ը՝ հետևյալ օրինակում՝ **Բայց Սմբատայ զիշերայն զհետ Երուանդայ եկեալ սակաւ վաշտկանաւ՝ զդուռն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն**

¹² Տե՛ս **Հայկական համաբարբառ** – 7, Մովսիսի Խորենացույ «Պատմութիւն Հայոց», գիրք 3-րդ, էջ 443:

(173): Պարզ է, որ այս կիրառության մեջ **վաշտկան** տերմինը չի կարևորում տվյալ ստորաբաժանմանը պատկանելը, այլ պարզապես նշանակում է «զինվոր, մարտիկ» Այդ է հաստատում նաև ՆՀԲ-ի ավելի ընդհանրական բնութագրումը՝ «այր ի վաշտէ, զօրական, զինուոր»:

Բացի ընդհանրապես զինվորական դասին պատկանելու հատկանիշից՝ Խորենացու երկում պահպանված են նաև կոնկրետ զինվորական պաշտոններ նշանակող տերմիններ, թեև ինչպես արդեն նշել ենք, դրանց ճշգրիտ սահմանումները դժվար է տալ՝ մասամբ հոմանշային կիրառությունների, մասամբ կոնկրետ բնութագրումների պակասի պատճառով: Մասնավորապես, հոմանշային շարք են կազմում **զօրագլուխ**, **զօրապետ**, **զօրավար**, ինչպես նաև **սալար** անվանումները, որոնցից առավել հաճախականն է **զօրավար**-ը՝ 15 կիրառությամբ, երկրորդ տեղում է **զօրագլուխ**-ը՝ 6 օրինակով, **զօրապետ**-ը հանդիպում է 3 անգամ, իսկ **սալար**-ը ունի միայն մեկ վկայություն: Մասամբ այս շարքին է հարում նաև **սպարապետ** տերմինը՝ ընդհանրապես «զորավար, որևէ զորամիավորման հրամանատար» իմաստով: Սակայն **սպարապետ**-ի հիմնական կիրառությունները որոշակի՝ «նշանակովի» զինվորական պաշտոն են մատնանշում:

Սպարապետ – զինվորական բարձր պաշտոն անվանող տերմիններից ամենահաճախականն է՝ 24 կիրառությամբ, սովորաբար «խոշոր զորամիավորման հրամանատար» կամ «զորքերի գլխավոր հրամանատար» նշանակությամբ, որ լրացնում է **զօրագլուխ**, **զօրապետ**, **զօրավար** հոմանշային շարքը: Ընդ որում, տերմինը այս իմաստներով կիրառվում է ոչ միայն հայկական բանակի, այլ նաև այլազգի զորամիավորումների հրամանատարներին նշանակելու համար, ինչպես՝ յայնմ ժամանակի Պոմպէոս Հռոմա- յեցոց զօրավար ... զՍկաւրոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ (129), Ընդդէմ նորայ գայ Գաբիանոս սպարա-

պետ զօրացն Հռոմայեցոց (131), սպարապետ կացուցանէ զօրացն Հայոց և Պարսից (133), ի դառնալն Շապիոյ ի Յունաց՝ առաքեաց զմի ի սպարապետաց իւրոց և հայ գունդ ընդ նմա (288) և այլն:

Սպարապետ-ի մյուս՝ «զինվորական բարձրագոյն պաշտոնյա, զորքերի գլխավոր հրամանատար» նշանակությունը, որը և պահպանվել է ժամանակակից հայերենում¹³, Խորենացու երկում վկայված է հատուկ շեշտումով՝ **որ միանգամայն սպարապետ էր և ամենայն Հայոց զօրավար** (262): Այստեղից կարելի է եզրակացնել, որ **զօրավար** տերմինը ավելի ընդհանրական իմաստ ուներ, քան **սպարապետը**, քանի որ **զօրավարները** իրենց «ձեռքի տակ» ունեին **սպարապետներ** (տե՛ս նաև վերը՝ Սկավրոս սպարապետի մասին վկայությունը «Պատմության» 129 էջում):

«Զորքերի գլխավոր հրամանատար» նշանակությունը, ըստ երևույթին, կայունանում է ավելի ուշ, իսկ «Հայոց պատմության» մեջ **սպարապետ** բառը միշտ հանդես է գալիս լրացյալներով, որոնք ցույց են տալիս, թե հատկապես ո՞ր որոշակի զորախմբի հրամանատարն է նկատի առնվում: Ընդ որում՝ դրանք կարող են նշանակել թե՛ երկրի աշխարհագրական կամ վարչական բաժանման միավորներ՝ **ինքն լինի քրմապետ միանգամայն և սպարապետ արևմտից** (186), **Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար արևմտեան գնդին, երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բղեաշի Գուգարացոց, սպարապետ հիւսիսային զօրուն, երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար արևելյան գնդին, չորրորդ՝ Մանաճիհր Նահապետ որջտունեաց, սպարապետ հարաւային զօրուն** (262), **Գնել նահապետ Անձևացեաց և սպարապետ Պապայ**

¹³ **Է. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է միայն այս իմաստը՝ «Պետության զորքերի ընդհանուր գերագոյն հրամանատար», տե՛ս անդ, էջ 1324:

արևելյան զորուն (307), և թե՛ որևէ կոնկրետ երկրի ամբողջական պետական միավոր՝ յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտաւազդ Մանդակունի (231), սպարապետն Պարսից եկեալ ի Հայս ... առնու զամուրն Անի (288), սպարապետ կացուցանէ զօրացն Պարսից և Հայոց (262) և այլն:

Սպարապետութիւն – նոյն տիպի՝ կոնկրետ երկրին վերաբերող կիրառություն ունի և դրանից ածանցյալ սպարապետութիւն կազմությունը Չօրինակով՝ ի ձեռս տայ նմա զսպարապետութիւն՝ լինել ի վերայ ամենայն զօրաց (224), և հրամայեաց տալ ... որում ցանկայրն՝ զսպարապետութիւն Հայոց (323): Սպարապետ-ից բացի որպէս խոշոր զորամիավորումների հրամանատարների անվանումներ վկայված են

Զօրագլուխ – «Զորքի մի մասի կամ առանձին զօրամիավորման գլուխ՝ հրամանատար» իմաստով հանդիպում է 8 անգամ՝ Եւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջագոյն՝ պատուի մեծապէս ընդ զօրագլուխսն Պարսից (163) և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմ սկայ վառեալ (267), Զօրս, որ արձակեցեր ընդ մեզ, առեալ զօրագլխի նոցին՝ ի բաց դարձաւ (273), Յանձն առնու և Արկադ առնել զհաշտութիւն, առաւել յիւրոց զօրագլխացն (163), իւրում տեղակալին հրամայելով զօրագլխի (332), Իսկ ի ձեռն քաջին և բարեբախտին Ներսիսի Ճիճրակացոյ զօրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց տան ընդ գնդին Պարսից պատերազմ. հարկանեն զօրսն, և սպանանէ Ապրսամ Սպանդունի զօրագլուխն (332):

Զօրապետ – վկայված է երեք կիրառությամբ՝ և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն – զօրաց, զօրապետաց, կողմանց կողմակալաց, և որ նման այսոցիկ (109), հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ և Վահանաւ նահապետիւ Ամատունեաց (266), Եւ ժողովեալ մեծին Վրթանիսի զամենայն նախարարս Հայոց, հանդերձ զօրօք և զօրապետօք (268):

Զօրավար – ըստ վկայված օրինակների՝ զօրավար-ը փաստացի ավելի ընդհանրական և բարձր դիրք էր գրավում,

քան նույնիսկ **սպարապետ**-ը, քանի որ **գորավար**-ը իր գորա-
բանակում կարող էր ունենալ այլ հրամանատարներ, այդ
թվում և **սպարապետ** (տե՛ս վերը՝ **սպարապետ** գլխաբառի
տակ), կամ տվյալ գորահրամանատարը կարող էր համատե-
ղել **սպարապետ**-ի և **գորավար**-ի պաշտոնները, ինչպես հե-
տևյալ օրինակում է՝ **որ միագլուխ սպարապետ էր և ամենայն
Հայոց գորավար** (262): **Ջորավար** տերմինը վկայված է 15 օրի-
նակով, որոնցից 5-ը վերաբերում են հույների Անատոլիոս գո-
րավարին (334-bis, 337, 338, 350 էջերում): Այլ օրինակներ՝
Դիմում ի մեզ Պոմպեի Հռոմայեցուց գորավարի (94, 129), **որ
անուանեալ կոչի Կոշմ, կին գորավարին ամենայն Արեաց
(146), իսաղայ յաշխարհն Պարսից՝... չորս յիւրոցն առնելով
գորավարս** (231) և այլն:

Ջորավարել – Խորենացու երկում վկայված է նաև **գորա-
վար** հիմքով կազմված՝ **գորավարել** բայի մեկ կիրառություն, որ
կապվում է գորքի մարտական գործողությունների հետ՝
**Քանզի լուեալ էր ... զգորավարելն Ներսեհի, որ և թագաւորեաց
ամս ինն, և Որմզդի, որ ապա և նա թագաւորեաց ամս երիս
նահատակութեամբ** (239), այսինքն՝ թագավորներն իրենք
«գորավարություն են անում»¹⁴:

Սալար – ունի ընդամենը մեկ կիրառություն՝ **վասն
որոյ՝ մեր ցասուցեալ՝ սալարի նորս ցլու արբուցութ արին
(276): ՆՀԲ-ում, թեև նշված օրինակը վերցված է Խորենացուց
(սալար ձևով), բառը հղվում է սաղար-ին, որի բացատրու-
թյունն է՝ «գորավար, սպարապետ»: Բերվում է նաև **սալար****

¹⁴ Հմմտ. աշխարհաբար թարգմ.՝ «...և գորավարություն է անում Ներսեհը, որ
թագավորեց ինը տարի, և Որմիզդը, որ նույնպես երեք տարի թագավորեց
քաջագործություններով», տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն,
խմբ., ներած. և ծանոթություն. Մ. Մալխասյան, Երևանի համալս. հրատ.,
Եր., 1981, էջ 236:

տարբերակից կազմված **սպասալար** բաղադրությունը՝ «ուստի Սպասալար. Ջորավար. սպարապետ» բացատրությամբ: **Սպասալարը** տրվում է և առանձին բառահոդվածում՝ «Սաղար սպայից. գորագլուխ» բացատրությամբ, որին իր հերթին հղվում է **սպայասալար**-ը (ՆՀԲ, հատոր երկրորդ, էջ 754-757):

Բիրաւոր, բազմաբիր, բազմաբիրաւոր – Խորենացու երկում կիրառված են նաև գորամիավորումների պետերին կամ հրամանատարներին, կամ որոշակի թվով գորք ունեցող նախարարներին բնութագրող հետաքրքրական անվանումներ՝ **բիրաւոր**՝ 3 կիրառությամբ, **բազմաբիր** և **բազմաբիրաւոր**՝ մեկական կիրառությամբ: Սրանցից առաջինը՝ **բիրաւոր**, ՆՀԲ-ն բացատրում է որպես՝ «որ ունի ընդ ձեռամբ բիր մի գորաց», այսինքն՝ «տասնհազարանոց բանակ ունեցող»: Բնականաբար մյուս երկու տերմինները **բազմաբիր**-ը և **բազմաբիրաւոր**-ը վերաբերում են բազմաթիվ այդպիսի գորամիավորումներ ունեցողին: Հետաքրքրական է նաև **կողմակալ բիրաւոր** կրկնվող արտահայտությունը, որը կարող է մեկնաբանվել որպես կայուն կապակցություն՝ պաշտոնի անվանում, կամ որպես իր տրամադրության տակ տասը հազարանոց գորք ունենալը **կողմակալի** («կուսակալի, բղեշխի») և **կողմակալության** («կուսակալության, բղեշխության») համար պարտադիր հատկանիշ համարելը: Վկայված օրինակներն են՝ **Եւ յարևելից կողմանէ, զեզերք հայկական խօսիցս կողմակալս բիրաւորս զերկուս ի ցեղիցտանց նահապետութեանց, զՄիսակեանսդ և որ ի Կաղմեայ տանէն** (112- 113), **Այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմակալ բիրաւոր ի պարթևէն Վաղարշակայ** (113), **զայրացեալ հրաման տայր զօր յարուցանել զբիրաւորս Ատրպատական նահանգին** (137): Վերջին օրինակում **զբիրաւորս** վերաբերում է ոչ թե գորավարին, այլ գորքին (տե՛ս ստորև՝ **զօր յարուցանել** դարձվածը՝ **Ջօր(ք)** գլխաբառի տակ):

Բազմաբիր-ը և **բազմաբիրաւոր**-ը վկայված են մեկական օրինակով՝ **Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիր**

զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմակալութիւն (113), և Ո՞րպիսի հնարիւք լուծանել կարասցուք, ասէ, զկապ սիրոյ պարսկայնոյն և հայկազինն բազմաբիրաւորի (74):

Բացի բուն հայկական գորքում ընդունված՝ զինվորական պաշտոնների անվանումներից Խորենացին հիշատակում է նաև հունական գորքի հրամանատարներին և պաշտոնյաներին:

Ստրատելատ – Խորենացու երկում վկայված է 9 կիրառութեամբ: ՆՀԲ-ում այս տերմինը բերվում է նույն բացատրութեամբ, ինչ սալար-ը՝ «զօրավար, սպարապետ»: Ընդ որում, թէն այս անվանումը տրվում էր բյուզանդական բանակի հրամանատարներին, ինչպէս տեսնում ենք **գումարեաց զօր բազում ի ձեռն քաջ ստրատելատին Տերենտիանոսի** (302) օրինակում, բայց կան նաև այդ կոչումը կրող՝ հունական մասում ծառայող հայ զորավարներ, օր.՝ **ստրատելատ Գազաւոն և ամենայն նախարարք Հայոց մասինն Հունաց** (317), **Ստրատելատիդ Գազաւոնի և ամենայն նախարարացդ մերոց ողջոյն շատ** (318), **Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդանայ զորդի որդիացելոյ քոյ** (335), եկեալ **Մեսրոպայ և Վարդանայ ստրատելատի՝ գտին զզօրավարն Անատոլ հուպ ի մերս եկեալ սահման** (337), և **դարձեալ հաստատելով զթոռն նորա զՎարդան ստրատելատն ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից՝ արձակէ ի Հայս** (352), որում անուն էր **Դստրիկ, կին Վարդանայ ստրատելատի** (356) և այլն:

Չիզոստատ – այս տերմինը ՆՀԲ-ում արձանագրված չէ: Խորենացու երկի աշխարհաբար թարգմանության մեջ նույնպէս այս տերմինը բացակայում է: **Հանդերձ իւրովք զիզոստատոք** արտահայտությունը այնտեղ թարգմանված է «իր գլխավոր մարդկանցով»¹⁵: Հ.Աճառյանի «Արմատական բառարանում» **զիզոստատ**-ը բացատրվում է որպէս «զինւորների

¹⁵ **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմություն, խմբ., ներած, և ծանոթություն. **Ս. Մալխասյան**, Երևանի համալս. հրատ., Ե., 1981, էջ 204:

ռոճիկը կշռող պաշտօնեայ: «Հայոց պատմության» մեջ վկայված է հետևյալ օրինակը՝ **և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք զիզոստատօք** (190), որը և բերվում է «Արմատական բառարանում»¹⁶:

3. Զորամիավորումներ, զինվորական ստորաբաժանումներ

Հետաքրքրական է, որ «գորք, բանակ» իմաստը հայերենում և մի շարքայլ լեզուներում կապվում է «ուժ, գորություն, հզորություն» հասկացության հետ (հմմտ. անգլ. Forces «զինված ուժեր»^{*}): Ժամանակակից հայերենում նույնպես «բանակ» իմաստը կարող է արտահայտվել «զինված ուժեր» կապակցությամբ, բայց ավելի սովորական և տարածված է հնուց ի վեր եկող **գորք** տերմինը:

Զօր(ք) – Խորենացու երկում վկայված ռազմական տերմինների մեջ ամենահաճախականը այս թեմատիկ խմբին պատկանող **զօր(ք)** բառն է (223 կիրառություն), որը հիմնականում գործածվում է «ամբողջ գորքը, բանակ» ժամանակակից տերմինի արժեքով, բայց ավելի հաճախական է ընդհանրապես «մեծաքանակ զորամիավորում» իմաստը: Ընդ որում, մեծ մասամբ վկայված են հոգնակի թվով օրինակներ՝ տարբեր հոլովածներով՝ **եթէ զօրքն Հռոմայեցւոց ոչ հասին նմա ի թիկունս** (170), **թողեալ բիւրմի ի զօրացն ի վերայ աշխարհին և ինքն դառնայ ի Հայս** (46), **դիմեալի վերայ զօրացն Հայոց** (95), **կորնչի հանդերձ զօրօքն** (104) **սո ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա** (171), **տայ պարզևս զօրացն Մարաց և Պարսից** (174), **ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ**

¹⁶ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, Բ հատոր, Երևանի համալս. հրատ., Եր., 1973, էջ 97: * **Գրիգորյան Խ., Գրիգորյան Զ.**, Անգլերեն-հայերեն արդի բառարան, «Անկյունաքար» հրատ., Ե., 2010, էջ 438:

մեր (302-303) և այլն, թեև կան և եզակի հոլովածներով գործածություններ (մոտավորապես 18%)՝ **մինչև հասցէ բովանդակ գորն** (219), **հալածականս առնէ զգոր Պարսից** (278), **իշխան հետևակ գորուն** (303), **օգնեցէ նմա գորու** (321), **եհաս բազմութիւն գորուն Հռոմայեցոց** (234) և այլն:

Չօր հարուցանել – Խորենացու երկում վկայված է և **զօր** բաղադրիչով կազմված՝ **զօր յարուցանել** «զորք հանել» դարձվածային կազմությունը՝ երկու կիրառությամբ՝ **Յայնժամ հրաման տալ Արտաշէս՝ զօր յարուցանել յարևելից և ի հիւսիսոյ** (122), **զայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զբիրաւորս Ատրպատական նահանգին** (137):

Բացի ընդհանրական իմաստ ունեցող **զօր//զօրք** տերմինից՝ գրեթե բոլոր գորամիավորումների անվանումներն ունեն նաև ոչ ռազմական տերմինի արժեք և նշանակում են ընդհանրապես «խումբ. դաս. բազմություն»:

Խորենացու երկում հիմնականում գերակշռում են ռազմական անվանումները, բայց կան նաև նշված ընդհանուր իմաստներով գործածություններ: Չորամիավորումների ստորակարգության և նրանց քանակական կազմի մասին հայ մատենագրության պատմական աղբյուրներում որոշակի տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Կարելի է միայն ենթադրություններ անել համեմատաբար ավելի մեծ և փոքր խմբավորումների մասին:

Գումարտակ – վկայված է երկու օրինակով՝ գոյականական և ածականական կիրառությամբ: Գոյականաբար նշանակում է «գումարված բազմություն՝ որպես հավաքական ամբողջություն», ըստ ՆՀԲ-ի՝ «մանաւանդ գօրու, բանակ, ճակատ»: Խորենացու օրինակն է՝ **և գումարտակ ի Միջերկրայս առաքեալ հալածականս առնէ զգօրս Պարսից** (278): Ածականական գործածությամբ նշանակում է «գումարված, հավաքված, միավորված», որ վկայված է մեկ օրինակով՝ **կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գու մարտակ գնդաւ** (287):

Գումարտակ առնել – վկայված է նաև **գումարտակ առնել** վերլուծական կազմությունը՝ «գումարել, միավորել» իմաստով՝ որ հիմնականում վերաբերում է զինված ուժերին՝ **միաբանեալ յամենայն հիւսիսի, հանեալ զօր քազում, գումարտակ արարեալ՝ խաղայ յաշխարհն Պարսից** (231): **Գումարտակի**՝ «զինվորական որոշակի ստորաբաժանում» իմաստը զարգանում է հետագայում՝ և առկա է ժամանակակից հայերենում:

Գունդ – բազմիմաստ բառ է, նախնական նշանակությունն է «կլոր՝ բոլորակ առարկա» և նրանից զարգացած իմաստներ՝ «զնդակ (խաղալիք)», «զնդաձև լապտեր», «երկնակամար» և այլն: Մյուս իմաստն է՝ «մարդկանց, մասնավորապես զինվորականների խմբավորում»՝ **դոյզն գունդ առաքէ զկնի Շապիոյ** (286), **կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գումարտակ զնդաւ** (287), **ոչ թողացուցին նմա յառաջախաղաց գունդք և լրտեսք՝ պատաղել զայնու** (287), **գունդ փոքր է, որ վասն այնր է եկեալ** (299), **տան ընդ գնդին Պարսից պատերազմ** (332) և այլն, ընդհանուր առմամբ՝ 49 կիրառություն:

Բացի ռազմական միավորումից **գունդ**-ը նշանակում է նաև «մեծ բազմություն, ամբոխ, խումբ»՝ **նահապետք և նախարարացն գունդք** (190), ինչպես նաև «տոհմ» կամ «սերունդ» (հմմտ. **որդիք ռուբինի ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց** (ՆՀԲ): Այս իմաստով Խորենացին ունի՝ **հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեան և Ասքանազեան զնդին** (67), **զգունդն որ ի Միսակայ, որ ժառանգեաց զդաշուն Ադուանից** (113):

Յառաջախաղաց գունդ – գունդ տերմինի կիրառությունների մեջ կարելի է առանձնացնել **յառաջախաղաց գունդ** կա-

¹⁷ Հմմտ.՝ **Գումարտակ բառի առաջին իմաստը էդ. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ «1. Զորքի ստորաբաժանում, որ բաղկացած է մի քանի վաշտերից (բատալյոն)»:

պակցությունը՝ որպես որոշակի դիրքավորում և գործառու-
թյուն ունեցող գորամիավորման անվանում, որ վկայված է
վերը բերված օրինակներից մեկով՝ **ոչ թողացուցին նմա յառա-
ջախաղաց գունդք և լրտեսք՝ պատաղել զայնու** (287):

Սպայ – Ըստ ՆՀԲ-ի «գօր կամ զօրական, գունդ զօրաց
կամ զինուորական ազատաց»: Նույն բացատրությունը փո-
խադարձ հղումով տրվում է և **սեպուհ** գլխաբառի տակ՝ «որ
և սպայ, սպահ». իմաստն է՝ «ասպետ. հեծեալ. ազնուական և
ձիաւոր զօրական» ևն, հավաքական իմաստով՝ «սեպուհների
գունդ», թերևս՝ «հեծելագօր»: Խորենացու երկում վկայված է
երկու կիրառությամբ՝ **Իսկ ի գնալն Սմբատայ ի Պարսս հա-
սանեն հարկահանք կայսեր և սպայ ծանր ի սահմանս հայոց**
(175), **մեծն Թեոդոս ել ի Բիւզանդիոյի Հռովմ կոյս, և մտեալ ի
Թեսաղոնիկ հանդերձ սպային...** (306): Այս տերմինի կապակ-
ցությամբ հետաքրքրական է նշել **յ/հ/ր** հնչյունական հերթա-
գայությունը **սպայ/սպար/սպահ** (հմտ. **սպայապետ/սպարա-
պետ/ասպահապետ**), ինչպես նաև հետագա իմաստային զար-
գացումը ժամանակակից հայերենում, ուր տեղի է ունեցել
իմաստի նեղացում և մասնավորեցում՝ **սպա** նշանակում է
«զինված ուժերի հրամանատարական կազմի ներկայացուցիչ՝
ի հակադրություն շարքային զինվորների»:

Վաշտ – ենթադրաբար ավելի փոքր զինվորական ստո-
րաբաժանումներ են **վաշտը** և ապա՝ **ջոկատը**: ՆՀԲ-ում տրը-
վում է «Գունդ զօրաց առանձին դրօշու, որ և ԴԲՕՇ ասի»
բացատրությունը, այսինքն՝ մի դրոշի տակ միավորված զորա-
խումբ: **Վաշտ**-ը վկայված է երկու կիրառությամբ, որոնք բեր-
ված են նաև ՆՀԲ-ի բառահոդվածում՝ **նախարարութեանցն
գունդք և միանգամայն զօրականացն վաշտք** (190), **որք
միանգամայն անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք** (197):
Վերջին օրինակի առիթով հետաքրքրական է բերել Խորենա-
ցու երկի աշխարհաբար թարգմանությունը («որոնք հեծելագո-
րով աննշան էին, բայց անձամբ երևելի») և համապատասխան

ծանոթագրությունը¹⁸, որից կարելի է ենթադրել, որ նախ՝ **վաշտ**-ը հեծյալների կամ հեծելագորի ստորաբաժանում էր, և երկրորդ՝ որ Տիգրանը հաստատում է կրտսեր նախարարական տներ այն մարդկանցից, որոնք անձամբ երևելի էին, բայց սեփական վաշտեր (հեծելագոր) չունեին:

Ջոկատ – «Հայոց պատմության» մեջ վկայված է միայն մեկ կիրառությամբ: ՆՀԲ-ում տրվում է բառի **ջոկ** արմատի ընդարձակ բացատրությունը՝ մի շարք հումանիշներով, որոնցից ոչ բոլորն ունեն ռազմագիտական նշանակություն: Բացատրվում է որպես համախմբված բազմություն, որը կարող է կազմված լինել ինչպես մարդկանցից, այնպես էլ զանազան ընտանի և վայրի կենդանիներից, նաև հրեշտակներից և այլ հոգևոր էություններից: Ըստ այդմ **ջոկատ**-ը բացատրվում է որպես «ջոկ զատուցեալ կամ խումբ ի ջոկոյ հատեալ. Գունդ, հատուած», և այս իմաստի համար որպես լուսաբանություն բերվում է հենց Խորենացուց վերցված օրինակը՝ **ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին** (35), որում անշուշտ ակնհայտ է **ջոկատ** տերմինի՝ որոշակի գորամիավորման իմաստը՝ «զինված ջոկատի խումբը»:

Բացի պետական կազմավորումների՝ կանոնավոր բանակի զինված ուժերի և առանձին գորամիավորումների անվանումներից՝ Խորենացու երկում վկայված են նաև զանազան զինված մեծաքանակ, բայց ոչ կանոնավոր խմբավորումների անվանումներ: Դրանք են՝

Հէն – նշանակում է անկանոն զինված ավազակախումբ՝ ծովային կամ ցամաքային (հիմնականում հեծյալ), որ գրոհում է մեծ բազմությամբ և հախուռն հարձակմամբ: Խորենացու երկում **հէն** տերմինը կիրառված է 7 անգամ,

¹⁸ Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, խմբ. ներած. և ծանոթություն, **Ս.Մալխասյան**, Երևանի համալս. հրատ., Ե., 1981, ծան. 196:

որոնցից չորսում՝ հոգնակի թվով՝ կապակցություններ կազմելով **ասպատակ** բառի հետ, ընդ որում երեք օրինակում՝ **ասպատակաւ հինից ձևով՝ Առաքէ զգօրս Թրակացոց և Գերմանացոց ասպատակաւ հինից յերկիրն Պարսից (143), որպէս զի մի՛ ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց (178), և ասպատակաւ հինից աւարել զաշխարհս Պարսից և Ասորեստանեայց (202), իսկ մեկ անգամ՝ և շաղկապով միացած՝ հոմանշային կիրառությամբ՝ ի մեծամեծ արուեստից և գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակաց պարապեալք (188): Մյուս օրինակներում **հէն**-ը գործածված է առանձին՝ եզակի կամ հոգնակի թվով, «ավագակախումբ» կամ «ասպատակ» իմաստով՝ **քուշանաբար հինի սմբակակոյ արարեալ զսահմանս Հայոց ծառայեցոյց ամս երկուս (44), արձակեցաք զունդ հինից յերկիրդ Յունաց (293). մարդիկ աշխարհիս ի հէն և ի գաղթականս փախստեամբ ամրանան(52)**՝ այսինքն՝ «ասպատակում են ասպատակությունների և գաղթականությունների ժամանակ»:**

Հրոսակ – ըստ ՆՀԲ-ի՝ «գօրական յանդուզն յարձակեալ իբրև ասպատակաւոր»: Կիրառված է երկու անգամ, առաջին օրինակը վերագրվում է Բելի անկանոն գորքին՝ **երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ ցան և ցիր յանդուզն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով (35), երկրորդ օրինակում հրոսակ է անվանվում նաև Հայկի գորախումբը՝ և ինքն առաջի և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց (36), բնականաբար առանց բացասական երանգավորման: Այստեղից կարելի է ենթադրել, որ **հրոսակի** բուն իմաստն է եղել «հարձակվող՝ գրոհող գորախումբ¹⁹, իսկ բացասական վերաբերմունքը դրսևորվում է միայն հակառակորդի **հրոսակի** նկատմամբ:**

¹⁹ **Հ. Աճառյանի** «Արմատական բառարանում» նույնպես բառի առաջին իմաստն է «ասպատակող զօրք»:

Յեղուզակ – ՆՀԲ-ում հղվում է **Յեղուզակ** տարբերակին: Խորենացու երկում վկայված է 7 կիրառությամբ: Հիմնականում նշանակում է «ավազակ, կողոպտիչ» և ըստ այդմ անարգական անվանում է անհատների կամ ավազակախմբերի, ինչպես հետևյալ օրինակներում է՝ **լսելով քանից Մմբատայ յեղուզակի**, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Մանատրկոյ (163), **Վայկուն** ոմ անուն յեղուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յեղուզակին կոչին **Վայկունիք** (129), սակայն որոշ դեպքերում էլ տերմինը ձեռք է բերում նաև «հրոսակ, անկանոն զորք» իմաստը՝ **դարձեալ յիւր աշխարհն վասն խուճապանաց յեղուզակին** (129), և յեղուզակն բնաջինջ արարեալ ի լեռնէն (130), եթէ ո՛րպէս մեծարեաց Խոսրով զՍահակ ասպետ. և նահատակութիւնք նորին ի յեղուզակս ազգին Վանանդացոց (254, 313), լինէր ... հասանել անդր ասպետին Սահակայ բովանդակ գնդաւն Խոսրովայ, որով հետամուտ յեղուզակացն էր (314):

Յեղուզակաբար – «Պատմության» մեջ հանդիպում է նաև **յեղուզակ** հիմքով կազմված **յեղուզակաբար** մակբայը հետևյալ կիրառությամբ՝ **յեղուզակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորութեանցն Հայոց խռովէին զաշխարհս և անհանգիստ պահէին** (313):

4. Սպառազինություն. զենքեր, հանդերձանք, զինամթերք

Սպառազինություն իմաստային դաշտում միավորվում են հարձակողական ու պաշտպանական զենքերն ու հանդերձանքը:

Զէն – մարտիկների անհատական սպառազինության և զինատեսակների ընդհանուր, չտարբերակված անվանումն է, որ վկայված է 14 կիրառությամբ, տարբեր հոլովածներով, մեծ մասամբ եզակի թվով՝ **զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի** (29), **թագ կապեալի**

զուխն, և զէնն ոսկւով առաջի եղեալ (190), առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն՝ ի լուղ ... անցանէր ընդ Եփրատ ի բուն զօրսն իւրեանց (219), մեծապէս հանդերձեաց զինու և զարդու (282) և այլն: Հոգնակի թովով վկայված է 4 օրինակ՝ Այսպէս և զկնի այլով զինուք ժամն ոչ սակաւս (76), պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք (72), զէնս շարժեալ յաջողակաբար (217), զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկ-ւոյ և արծաթոյ (303):

Նիզակ – Հին աշխարհի կարևորագույն զինատեսակներից մեկի անվանումն է, որ Խորենացու երկում գործածված է 12 անգամ, ընդ որում, 5 օրինակում հանդիպում է **սեզ նիզակի** կապակցության մեջ՝ **որք ի սեզ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողածեոնագոյն** (65), և **շերտաւորքնի սուսեր և ի սեզ նիզակի վառեալք** (72), **շամփրէ զԱժդահակ յընդարձակ սեզ նիզակին** (82), **ի սեզ նիզակաց զմարմինս երկաքանչիւրոցն յոշելով** (76), ևս մեկ օրինակում դարձյալ հիշատակվում է **սեզը նիզակ բառի որոշիչ բարդության մեջ՝ զնիզակն իւր, ասեն, զբոլորատեզ, որ էր արեամբ զեոնոց մխեալ** (119): Մնացած կիրառություններում **նիզակ** զինատեսակը հանդես է գալիս առանց **սեզ** բաղադրիչի՝ **նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ** (36), **այնպէս երագ յերիվարացն առեալ նիզակօք, դիցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մտանել** (303), **ուղղեա և զնիզակս իմ ական հզօրիս այսորիկ** (267) և այլն:

Նիզակակից – նիզակի՝ որպէս կարևորագույն զինատեսակի նշանակությունը արտացոլված է նաև **նիզակակից** «զինակից, մարտակից, պատերազմակից» տերմինի մեջ՝ վկայված հետևյալ օրինակով՝ **կրտսեր եղբայր քո և նիզակակից** (29):

Տեզ – ՆՀԲ-ի բացատրության մեջ բերվում են մի շարք հոմանիշներ՝ «արդն. զեղարդն. նիզակ. զայիսոն. մանաւանդ երկաթ նորա սայրասուր որպէս սլաք կամ փուշ», այսինքն՝ նիզակի երկաթյա մասը, որ հագցվում է փայտյա կոթին (այդ է

վկայում ՆՀԲ-ի բնութագրական օրինակը Բուզանդից՝ փակագծերում տրված բացատրություններով)՝ «Մանուէլ գտէզ նիզակին (զերկաթն) ի ձեռին կալեայ, և նիզակաւն (բնովն) ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Վարազդատ. Բուզ. Ե. 37»: Խորենացու երկում հանդիպում է **տէզ** տերմինի վեց գործածություն, որոնցից միայն մեկում բառն ունի պարզ արմատական կառուցվածք՝ **քարինք և նէտք և տէզք արձակեալ լինէին** (290), իսկ հինգը վկայված են **տէզ նիզակի** հարադրական կազմության մեջ (տե՛ս նիզակ գլխաբառի տակ բերված օրինակները): **Տէզ նիզակի** կապակցությունը կարելի է բնութագրել նաև որպէս տարածված ռճական դարձույթ՝ «մասը ամբողջի փոխարեն»:

Բոլորատէզ – **տէզ** արմատով կազմված է և **բոլորատէզ** բարդությունը, ըստ ՆՀԲ-ի՝ «որոյ տէզն կամ սայրն է բոլորակաձև, այսինքն գունտ բրգաձև» և բերվում է հետևյալ օրինակը Խորենացուց՝ **գնիզակն իւր, ասեն, զբոլորատէզ, որ էր արեամբ զեռնոց մխեայ, ձգեալ ի հետևակոց՝ խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին** (119): Սա նշանակում է, որ եղել են տեգերի (նիզակի երկաթե ծայրապանակների) տարբեր ձևավորում ունեցող տեսակներ²⁰:

Գեղարդն – ՆՀԲ-ի բացատրությունը հանգում է հետևյալ հոմանշային շարքին՝ «նիզակ. տէզ. աշտեայ. սուին. գայիսոն»: Այսինքն՝ **գեղարդը** նույնպէս պատկանում է հեռահար՝ ձեռքով նետելու զինատեսակների թվին: Բուն գեղարդը նիզակի վերին սրածայր հարվածող մետաղա մասն է, որ հազցվում է փայտյա կամ եղեգնյա կոթին²¹: Խորենացու երկում հանդիպում է մեկ գործածությամբ՝ **վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր ազգսն զայնսիկ** (200):

²⁰ Հմմտ.՝ **Աբրահամյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները. էջք 60, 63, որտեղ պատկերված են հնագիտական պեղումներով հայտնաբերված՝ նիզակի երկաթյա ծայրերը:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 58 և հաջ:

Մկունդ – ինչպես արդեն նշել ենք²², **մկունդ** զինանունը առանձին կիրառությամբ չի հանդիպում Խորենացու երկում, այլ վկայված է **մկնդահար** բարդության կազմում՝ «Պատմության» երկրորդ գրքի Ե գլխի վերնագրում՝ **Պատերազմ Մորփիտլիկեայ և մկնդահար մահ** (107): ՆՀԲ-ում **մկունդ** գլխաբառը նախ տրվում է հղումով՝ «որ և ՍՈՒԻՆ, ՍԸՎԻՆ», այնուհետև բացատրվում է հեռահար զենքերի հոմանշային անվանումներով՝ «գեղարդն մեծ. նիզակ. աշտե. կամ տեգ նիզակի. մական կամ ձող բոլորատեգ. ևն»:

Սուին – ՆՀԲ-ում բացատրվում է որպես «տեգ, և ժաննոր երկաթ ի ծայր ձողոյ», այսինքն՝ ունի նույն կառուցվածքը և գործառությունը, ինչ որ **գեղարդն**-ը կամ **տեգ նիզակի**-ն: Խորենացու օրինակն է՝ **Եւ մօտ անցեալ աջողեցաւ ձգել զսուինն, քանզի էր կորովի և երկայնաձիգ, հեռի զաշ- տէսն արձակեալ, որպէս ի թռիչս սրաթն հաւուց** (107):

Աշտե – հեռահար զինատեսակ նշանակող տերմինների թվին է պատկանում նաև 2 անգամ հանդիպող **աշտե**-ն: ՆՀԲ-ում որպես գլխաբառ տրվում է **Աշտեայ** ձևը իր հնչյունական տարբերակներով՝ «որ և **աշտե**, ասի և **աշտէն**» և հետևյալ բացատրությամբ՝ «նիզակ. արդն. տեգ. գեղարդն փոքր ձգելի ի բացեայ»: Հետևաբար **աշտե**-ն ունի նույն գործածությունը, ինչ **նիզակ**-ը կամ **տեգ**-ը, բայց դրանցից տարբերվում է իր փոքր չափերով: Վկայված օրինակներն են՝ **հեռի զաշտէսն արձակեալ, որպէս ի թռիչս սրաթն հաւուց** (107), **հարեալ աշտէի զքաջն՝ սատակէին** (107):

Աղեղն – երկրորդ կարևոր հեռահար զինատեսակն է եղել **նետ ու աղեղը**: Խորենացու երկում դրանք հանդիպում են առանձին-առանձին կիրառված: Մրանցից **աղեղ**-ը վկայված է երեք օրինակով՝ **արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր** (36), **և որք ի տեգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռնագոյն** (65),

²² Տե՛ս նույն տեղում, էջ 2:

դիպեցուցանե աղեղամբ ընդ մեջ թիկանցն (229): Օրինակներից կարելի է եզրակացնել, որ բուն զինատեսակը Խորենացին համարում է **աղեղ**-ը, թվելով մյուս զենքերի շարքում (**նիզակ** և **սուսեր**):

Այդ է վկայում նաև **դիպեցուցանե աղեղամբ** կապակցությունը, որի իմաստն է «դիպցնում է աղեղով»: Հմմտ. նաև վերը նշված **աղեղնաւոր** տերմինը 5 կիրառությամբ՝ «տվյալ զինատեսակը կրող՝ ունեցող» նշանակությամբ տերմինների շարքում²³: Ինչ վերաբերում է **նէտ** տերմինին, ապա **աղեղ** բառի հետ նրա զուգադիր կիրառությունը հավանաբար սկսվում է ավելի ուշ և ծավալվում է ժամանակակից գրական հայերենում ու բազմաթիվ բարբառներում՝ հաճախ բաղադրիչների միաձուլումով՝ **նետուաղեղ, նետ-անեղ, նետանեղ, նետվանեղ, նետվանիղ** և այլ հնչունական տարբերակներով²⁴:

Լայնալիճ²⁵ – փոխանվանաբար՝ **աղեղ** տերմինի իմաստով կիրառված ենք գտնում նաև նրա մակդիրներից մեկը, որը խոսքաշարում փոխարինում է **լայնալիճ աղեղ** բառակապակցությանը՝ **Ջայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին** (36):

Նետ – Խորենացու երկում առանձին հանդիպում է 7 կիրառությամբ: Վկայված օրինակներից 4-ը վերաբերում են

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 4:

²⁴ Տես Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, հատոր Դ, Ե., 2007, էջ 151:

²⁵ Խորենացու երկի աշխարհաբար թարգմանության 45-րդ ծանոթագրության մեջ «լիճ» տերմինը բացատրվում է որպես կորացված աղեղով և նրա երկու ծայրերի միջև ձգված լարով կազմված տարածություն: Որքան մեծ է այդ տարածությունը, այնքան ավելի մեծ ուժ է պահանջվում լարը քաշելու համար, ուստի լայնալիճ աղեղ կարող էին գործածել միայն շատ ուժեղ մարդիկ (տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, խմբ., ներած. և ծանոթություն. **Ս. Մալխասյան**, Երևանի համալս. հրատ. 1981, ծանոթ. 45, էջ 328):

մարտիկների հանդերձանքին և մարտական գործողություններին՝ և ինքն վառեալ վերտ պահպանա- կօք, ուր ոչ գծէին նետք (230), նետք և տեգք արձակեալ լինէին, և խոցոտեալ մերքն յապուշ դառնային (290), և պարսկական զօրուն շուրջ զքաղաքաւն հրամայեաց ընթանալ և նետիւք խոցոտել զ'ի վերայ պարսպին (290), ի վերայ պատուարին ևթննտասն այր նետիւք հարեալ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի (308):

Նետը և աղեղը կիրառվում էին ոչ միայն պատերազմական գործողություններում, այլև որսորդության ժամանակ: «Հայոց պատմության» մեջ ունենք այդպիսի կիրառությունների վերաբերյալ երեք վկայություն՝ Մա ... կեցեալ ամս երեսուն մեռաւ յորսի՝ նետի ուրուք դիպեալ փորոտեացն (161), երէոյ կամելով ձգել՝ նմա պատահեաց նետն (284), ում Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց և այծեմանց և վարագուց, դիպածգութեամբ նետից կորովի (42):

Երեքթնեան – կիրառված է «նետ» իմաստով՝ փոխանվանաբար (հատկանիշը առարկայի փոխարեն)՝ «եռաթև նետ», որի ծայրապանակը իրառանցքի շուրջը՝ սուր ծայրից դեպի հիմքը լայնացող երեք շեղբ ուներ: Վկայված օրինակն է՝ լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթնեանն կրծից տախտակին (36):

Ինչպէս տեսնում ենք, հետաքրքրական փոխանվանական գործածությամբ **աղեղ** և **նետ** տերմինները փոխարինված են իրենց հատկանիշները բնութագրող բառերով: Մա է այն օրինակներից մեկը, երբ Խորենացու երկում ճշգրիտ տերմինը կիրառվում է և գեղարվեստական նպատակներով:

Սլաք – ըստ ՆՀԲ-ի՝ «սայր. սայրասուր բերան կամ ծայր զինուց»: Ընդհանրապես կարող է նշանակել նաև «ձգելի զէն երկաթի, նետ, նիզակ, տեգ»: Խորենացու «Պատմության» մեջ

կիրառված է մեկ անգամ որպես **նետ** տերմինի հոմանիշ²⁶ հետևյալ օրինակում՝ **լի քարշէ զլայնալիճն ... և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն** (36):

Պարսաստիկ – հեռահար զինատեսակներից է նաև **պարսաստիկը**, որը սակայն Խորենացու երկում հիշատակվում է ոչ թե ռազմական գործողությունների նկարագրության մեջ, այլ համեմատության հիմք է ծառայում ցույց տալու համար ամբարտակի ամրությունը և կուռ կառուցվածքը, որից նույնիսկ չէր կարելի պարսաստիկի մի քար պոկել՝ **ոչ իբր պարսաստկաց քարմի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեցե** (52):

Պարսաքար – այս տերմինը նույնպես կիրառվում է ոչ թե նկարագրելու համար մարտական գործողությունը, այլ որպես օրինակ անվրեպ նշանառության՝ **Օգնեա ինձ, Աստուած, որ գԴարթեան պարսաքարն դիպեցուցեր ճակատու խրոխտացելոյն Գողիաթու, ուղղեա և զնիզակս իմական հզօրիս այսորիկ** (267):

Հեռահար զինատեսակներից բացի Խորենացու երկում վկայված են նաև մերձավոր ձեռնամարտի ժամանակ կիրառվող անհատական զենքերի զգալի թվով անվանումներ: Դրանցից ամենահաճախականն են **սուր** և **սուսեր** տերմինները՝ յուրաքանչյուրը 14-ական գործածությամբ: Սրանք ՆՀԲ-ում ներկայացված են որպես հոմանիշներ:

Սուսեր – ըստ ՆՀԲ-ի՝ «նոյն ընդ սուր», ուստի և բացատրությունը տրվում է **սուր** գլխաբառի տակ (տես ստորև): Խորենացու երկում վկայված օրինակներից են՝ **արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր** (36), **որք ի տեգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռնագոյն** (65), և **շերտաւորքն ի սուսեր և ի տեգ նիզակի վառեալք** (72), **սուսերաւ զերամակս փղացն**

²⁶ Նետի և սլաքի իմաստային առնչության համար հմմտ. նաև ռուս. стрела «նետ» և стрелка «սլաք» (ժա-մացույցի են) գույգը:

պուղեր (225), զի եր վերացուցեալ զձեռն՝ անել ումեք սուսերաւ (230), արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորա (307) և այլն:

Սուր – ՆՅԲ-ում բացատրվում է որպես «երկաթ սրեալ ի հատանել», և բերվում են մի շարք նման գործառույթ ունեցող զենքերի և գործիքների անվանումներ՝ **վաղակ, վաղակաուր, դաշոյն, նրան**, ինչպես նաև **դանակ և կտրոց**: Խորենացու երկում **սուր**-ը և **սուսեր**-ը կիրառվում են որպես բուն ռազմական տերմիններ՝ մերձավոր ձեռնամարտի ժամանակ կիրառվող զինատեսակների անուններ: **Սուրը** և **սուսերը** մարտիկները կրում էին իրենց մարմնի վրա՝ գոտիներին ամրացրած ձախ կողմից՝ **գօտնորեալ զմէջսն, և յահեկէ գտուրն երկսայրի** (36): Այլ օրինակներ՝ **սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց** (33), **արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալ տապալ յերկիր կործանէին** (36), **երկուք ումանք ի նոցանէ սրով կատարեցան արիաբար ի վերայ հայրենի օրինացն** (119), **վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր ազգսն զայնոսիկ** (200), **զոմանս կոտորեալ սրով** (307) և այլն:

Երկսայրի – **սուր** զինատեսակի հետ կապված՝ Խորենացու երկում վկայված է նաև **երկսայրի** կազմությունը, որը գործածված է մեկ անգամ փոխանվանաբար՝ «երկսայրի սուր» իմաստով՝ **ի ճահ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և գոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին** (231). Հմմտ. նաև վերը նշված՝ **երեքթևեան և լայնալիճ** բաղադրությունների փոխանվանական կիրառությունները **նետ** և **աղեղ** անվանումների փոխարեն:

Բերան սրոյ – **սուր** տերմինի հետ է կապված նաև **բերան սրոյ** կապակցությունը՝ որպես տվյալ զինատեսակի մասի անվանում, որ վկայված է մեկ գործածությամբ՝ **արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին** (36): Այս օրինակը ևս կարելի է մեկնաբանել կա՛մ որպես փոխանվանական կիրառություն՝ «մասը ամբողջի փոխարեն», կա՛մ դարձվածային արտահայտություն՝ «սրի բերանն ընկնել»:

Սակր – հղվում է **սակուր** ձևին թե՛ ՆՀԲ-ում՝ «նոյն ընդ սակուր», թե՛ Հ.Աճառյանի «Արմատական բառարանում» և բացատրվում որպես «տապար» (ՆՀԲ) կամ «պատերազմական տապար» (ԱՃ.): Հ.Աճառյանը բառը ծագած է համարում հ.-ե. *seq «կտրել» արմատից:

Խորենացու երկում վկայված երեք կիրառությունից երկուսում հանդես է գալիս որպես զինատեսակի անվանում՝ **հարկանի յումեմ է սակերբ զգլուխն** (236), **ըստ իւրում անզգամութեան սակրով վճարի** (307), իսկ մեկում՝ որպես պաշարողական գործողություններում կիրառվող՝ պարիսպների հիմքերը քանդող գործիք: **Եւ Յունացն մատուցեալ մեծաբնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշն:** Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ և ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն (290):

Էշ – վերի օրինակից պարզ է դառնում, որ **Էշ**-ը պաշարողական մեքենա կամ հարմարանք է, որի օգնությամբ խարխլում էին պարիսպների հիմքերը և փլուզված պարսպից ներխուժելու հնարավորություն ստեղծում:

Նույն օրինակում կիրառված են նաև պաշարողական «տեխնիկային» պատկանող գործիքների անվանումներ, որոնք կարող են բուն զինատեսակ չլինել, բայց կիրառվում են մարտական որոշ գործողություններում: Դրանք են՝

Կացին – հիմնականում ծառայում է որպես փայտահատի գործիք, բայց վերը բերված օրինակում ցույց է տրված նրա գործածությունը ռազմական նպատակներով՝ պարսպի հիմքերը քանդող՝ խարխլող գործիք՝ ... և ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն (290):

Կտցաւոր մուրճ – ըստ վերը բերված օրինակի՝ **կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն** (290), ենթադրելի է մուրճի տեսակ, որի մի կողմը կեռ կտուցի է նմանվում: Ի դեպ, այդպիսի գործիք ունեն և ժամանակակից աստղձագործները:

Երկրբերան սակր – երկկողմանի կամ երկսայրի սակր է, որ զինատեսակ լինելուց բացի կիրառվում է կարծր նյութերը փշրելու կամ, տվյալ դեպքում, պարիսպների հիմքերը քանդելու համար:

Վաղակատր – ՆՀԲ-ի բացատրությունն է՝ «վաղր. ազգ սուսերի կամ դանակի»: Ի թիվս այլ հղումների՝ ՆՀԲ-ում նշվում է և Խորենացու կիրառության էջը, բայց առանց տեքստը մեջբերելու: «Արմատական բառարանում» տրվում է «կարճ թուր, մի տեսակ դաշոյն, խարբ» իմաստը: Խորենացու երկում վկայված է մեկ օրինակով՝ **այլ նա ի վաղակատրն հաստատեալ զաջն, ... յիր տունն անցեալ գնայր** (331-332):

Վաղր – և՛ ՆՀԲ-ում և՛ «Արմատական բառարանում» տրվում է փոխադարձ հղումով **Վաղակատր**-ին: Խորենացու երկում վկայված միակ օրինակն է՝ **իսկ մի ոմ ի զինուորացն մտեալ եհար վաղերք զգլխն Երուանդայ** (173):

Ասպազեն – զինատեսակների իմաստային դաշտում կարելի է առանձնացնել և մարտական երիվարների սպառազինությանը վերաբերող **ասպազեն** տերմինը, որ «Պատմության» մեջ հանդիպում է մեկ կիրառությամբ՝ **հանեալ յասպազինէն զներդեայ քեմխտապատ պարանն և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն** (230):

Պարան – ասպազենի մաս է կազմում հատուկ նյութից որոշակի եղա- նակով պատրաստված՝ ջլերից հյուսված կաշեպատ (ներդեայ, քեմտապատ) **պարանը**, որ կիրառվում է մարտական գործողությունների ժամանակ՝ հակառակորդին ցանցելու, կաշկանդելու կամ գերելու համար (տե՛ս վերի օրինակը):

Ներդեայ – այս տերմինը կիրառված է երկու անգամ՝ առաջինը ածականաբար, որպես մակդիր լրացում **պարան** գոյականի (**զներդեայ քեմխտապատ պարանն**), երկրորդը՝ փոխանվանաբար՝ լրացյալի փոխարեն՝ **ահեակ ձեռամբն ի**

ներդեայն աճապարեալ սկային, և սաստկութեամբ ուժով յիրեալ ցանցեալ ի ճահ դիպեցուցանէր զերկասայրին (231):

Կազմած – ասպազէն–ի հումանիշ կարելի է համարել նաև կազմած տերմինը՝ «մարտական ձիերի սարքուկարգ» իմաստով, որ վկայված է հետևյալ օրինակում՝ **առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն ի լուղ լայնատարած և խորայատակն անցանէր ընդ Եփրատ ի բուն զօրսն իւրեանց** (219):

Քննվող իմաստային դաշտում առանձին խումբ են կազմում մարտիկների անհատական հանդերձանքին ու պաշտպանական գրահավորմանը վերաբերող տերմինները: Դրանք են՝

Վահան – անձնական պաշտպանության միջոցներից առավել կարևոր էր **վահանը**, որով ոչ միայն կարողանում էին պաշտպանվել թշնամու հարվածներից, այլև հետ մղել հարձակվողի զենքը և նույնիսկ գորքի ճակատամասում կազմել վահանափակ պարիսպ: Խորենացու երկում վկայված 4 կիրառություններն են՝ և նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ, և յահեկում վահան (36), ի պղնձապատ վահանացն նշոյք զլերամբ փայլատակէին իբրև յամպոյ մեծէ (304), մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք (72), իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ (303):

Ի տարբերություն **վահանի**, որը մարտիկները կրում էին իրենց ձախ ձեռքին (տե՛ս վերի օրինակը), պաշտպանական մյուս միջոցները ամրացվում կամ հագցվում էին մարմնի համապատասխան մասերին:

Գլխանոց – կիրառված է մեկ անգամ: ՆՀԲ-ի բացատրության մեջ փոխադարձ հղումներ կան **գլխապան** բառի հետ՝ բացատրված որպես «սաղավարտ» կամ «պահպանակ գլխոյ»՝ Խորենացու երկից վերցված վկայությամբ՝ և ինքն **գլխանոց ազուցեալ երկաթի նշանաւորօք վերջիւք** «նշանակիր (թերևս՝ զարդարուն) ծայրերով» (35):

Պահպանակ – ունի 4 կիրառություն, որոնցից մեկում նշվում են և մարմնի պաշտպանվող մասերը՝ **պահպանակս**

բարձից և բազկաց («ազդրերի//սրունքների և բազուկների պահպանակներ»): Մյուս օրինակները հետաքրքրական են նրանով, որ հայտնում են պահպանակների որակը՝ **ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք** (72), և **ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք** (230), և թե ինչ նյութից են պատրաստված եղել՝ **հուլովք ի ջղեայ և ի կաշեայ պահպա- նակաց զգեստուն զկարծրութիւն վիմաց բերէին երևոյթս** (303):

Վերտ – կիրառված է մեկ անգամ՝ որպես **պահպանակ**-ի մակդիր (տե՛ս վերի օրինակը)՝ ըստ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի»՝ «շղթայի պէս հիւսուած (զրահ)» իմաստով: Ժամանակակից հայերենում սրան համապատասխանում է **օղազրահ** տերմինը: ՆՀԲ-ում նույնպես տրվել է նման բացատրություն՝ «ոլորեալ, հիւսեալ, շարամանեալ»: ՆՀԲ-ի բառահոդվածում տրված թուրքերեն թարգմանությունը՝ **զին- ճիլլամէ, հալգա հալգա**, այսինքն՝ «շղթայաձև, օղակ-օղակ», իր հերթին թույլ է տալիս բխեցնելու հայերեն «օղազրահ» իմաստը: Հմմտ. նաև ռուս. *кольчуга*²⁷ «օղազրահ» համար- ժեքը:

Տախտակ պղնձի – պաշտպանական զրահավորման մաս են կազմում մարտիկների կուրծքը և թիկունքը պաշպանող պղնձե շերտերը՝ **տախտակս պղնձիս՝ թիկանց և լանջաց** (35): Այս տերմինը վկայված է մեկ կիրառությամբ:

Սպառազինություն իմաստային դաշտին են պատկանում նաև **վառել** բառից ածանցյալ **վառեալ, վառելի(ք)** և **վառուած** տերմինները:

Վառեալ – ՆՀԲ-ում տրված է ինքնուրույն գլխաբառ՝ «Որպէս սպառազէն» բացատրությամբ և հղումով՝ «Տ. ՎԱՌԵԼ ըստ ք՛նչ.»: **Վառել** բառի առաջին իմաստը ՆՀԲ-ում

²⁷ «*Кольчуга*. От кольцо или заимств. из польск. *Kolczuga*»: Տե՛ս **М.Фасмер**, *Этимологический словарь русского языка*, Москва, изд. “Прогресс”, 1986, т. II, с. 299.

բերվում է **Վառեմ** գլխաբառի տակ «լուցանել, բորբոքել գիուր կամ զճրագ» բացատրությամբ և մի շարք օրինակներով, որոնք ռազմագիտական նշանակություն չունեն: **Վառեմ** բառահոդվածից հետո առանձին ենթազլխաբառով տրվում են **վառել/վառիլ** ձևերը՝ «հանդերձել զինու, զարդու, կազմել, պատրաստել. և Քաջալերել կամ արծարծել զոգի ի պատերազմ. և Գոտևորիլ» ռազմագիտական իմաստներով: **Վառեալ** բառի կիրառությունները Խորենացու «Հայոց պատմության» համաբարբառում²⁸ ըստ իմաստների տարբերակված չեն. այսպես՝ տարբեր օրինակներում **վառեալ** նշանակում է՝ 1.«Կրակ տված, հրկիզված»՝ **հուր ի դրունս և յամենայն կողմանս վառեալ ... լինէին** (290), 2. Փոխաբերական իմաստով՝ «տարփալից, կրքով համակված»՝ **ըստ շամբշութեան առն կնամուլոյ ցանկութեամբ վառեալ ի Կղեոպատրայ դշխոյն Եգիպտացոց** (136), **ի բանսն որ զմանէ՝ որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր** (49), 3. Բուն ռազմագիտական նշանակությամբ՝ «Զինված, սպառազեն, զրահավորված, մարտական հանդերձանքով»՝ **Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուռ վառեալ** (36), **ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք** (72), **և ինքն վառեալ վերտ պահպանակօք** (230), **և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ու սկայ վառեալ** (267), **զօրքն Հունաց վառեալ էին ի զէնս ոսկույ և արծաթոյ** (303):

Վառելիք – ՆՀԲ-ում տրվում է առանձին ենթազլխաբառով՝ «զէն, զրահ, սպառազինութիւն» բացատրությամբ, որին համապատասխանում է Խորենացու երկում կիրառված մեկ օրինակ՝ **այր սրտեայ էր և անդամովք երկար... ամրացեալ պղնձով և երկաթով և այլովք ընտիր վառելովք**²⁹ (107),

²⁸ Տես Հայկական համաբարբառ – 7, **Մովսիսի Խորենացու** Պատմութիւն Հայոց, գիրք 3-րդ, Ե., 1976, էջ 422:

²⁹ Աշխարհաբար թարգմանությամբ՝ «այլ ընտիր սպառազեններով» (տես **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, խմբ. ներած. և ծանոթություն, **Ս.Մալխասյան**, Ե., Երևանի համալս. հրատ., 1981, էջ 149:

«Համաբարբառում» այս կիրառությունները պետք է տրվեին առանձին գլխաբառերով, ընդ որում՝ ռազմագիտական արժեք ունեն միայն 3-րդ խմբի մեջ ընդգրկված օրինակները:

Վառուած – ըստ ՆՀԲ-ի բացատրության՝ «վառիլն զինու, սպառազինութիւն»: Խորենացու երկում վկայված մեկ կիրառության մեջ **վառուած**-ը պարզապես նշանակում է «զենքուգրահ»³⁰՝ **Պարսից փորձ առեալ զաստկութիւն սկային և կոտ վառուածոցն՝ քազում վիրօք պատեալ զձին՝ սատակեցին նետաձգութեամբք. որոյ զարկուցեալ յերկիր ընկենայր զարքայն** (225): Նույն օրինակը համառոտված բերվում է և ՆՀԲ-ում:

5. Ռազմական գործողություններ և դրանց հետևանքներ

Ռազմական գործողություններ իմաստային դաշտում, բնականաբար, ամենամեծ հաճախականությունն ունի **պատերազմ** տերմինը, որ վկայված է 123 գործածությամբ: Ընդհանրապես ռազմական տերմինների մեջ սա ըստ օրինակների քանակի երկրորդ տեղում է՝ ամենահաճախական՝ 223 կիրառություն ունեցող **զօր(ք)** տերմինից հետո: Այդ գործածությունների մեջ կարելի է առանձնացնել որոշ իմաստային երանգներ, որոնց բոլորի մեջ առկա է «զինված առճակատում» իմաստույթը:

Պատերազմ – ամենահաճախական իմաստն է «մեծամասշտաբ զինված ընդհարում հակառակորդ պետությունների կամ էթնիկական կազմավորումների միջև, ինչպես նաև

³⁰ Հմմտ. նաև վերը նշված՝ նույն (-ած ձևույթով) կառուցվածքն ունեցող՝ կազմած ձիոյն տերմինը «ձիու սարքուկարգ» գոյականական կիրառությամբ՝ առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն ի լուղ ... անցաներ ընդ Եփրատ (219) օրինակում:

երկրի ներսում՝ կենտրոնական իշխանությանն տարբեր հասարակական խմբավորումների միջև», ընդ որում՝ «Հայոց պատմության» մեջ պատերազմները անվանվում են մարտընչող կողմերի կամ նրանցից մեկի անունով՝ Այլ պատերազմ Հայոց ընդ զօրս Հռոմայեցոց (135), պատերազմ ընդ Մակեդոնացիս (102), լինի պատերազմ ի մեջ երկոցունց ազգացն քաջաց (177), Յաղագս պատերազմին Արշակայ ընդ նախարարս իւր (291, 253) և այլն:

Խորենացու երկում պատերազմները հաճախ անվանվում են նաև պետության գլուխ կանգնած այրերի կամ զորահրամանատարների անունով՝ պատերազմ Շապիոյ ընդ Կոստանդեայ (270), ասէ Եւագարոս. «Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմ առ Արտաշիսի բաղդաստեալ...» (124): Որոշ կիրառություններում չեն հիշատակվում կոնկրետ պատերազմող կողմերը, այլ տրվում է պատերազմական իրադրությունը, խոռվյալ իրավիճակը՝ պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, և Մակարէ ոչ փրկէ (360), ձանձրացեալ լինէին յաշխատութենէ հանապազորդ պատերազմացն (310), վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ միմեանց զկնի ի վերայգային (11), կամ նկատի է առնվում ընդհանրապես պատերազմական գործը՝ և խորհրդական չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ (360), և կամ ընդգծվում է կովի ընթացքը, տևականությունը՝ վասն որոյ երկարեալ քարշէր գործ պատերազմին՝ մինչև ի ժամս ձիգս (82) և այլն:

Մի շարք օրինակներում պատերազմ տերմինը հանդես է գալիս մարտ բառի ոճական հավելադրությամբ՝ մարտ պատերազմի՝ «պատերազմական կռիվ» կամ «պատերազմական հակամարտություն» իմաստով՝ ընդդիմացան նմա ... ի մարտ պատերազմի ընդ նմա գրգռելով (24), իսկ ի գրգռել միսսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ (50): Նույնպիսի ոճական հավելադրություն է պատերազմ-ի գործածությունը ճակատ տերմինի հետ «հակամար-

տություն, առճակատում» իմաստով՝ **Մմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ... արկանէ** (45): Ավելի հաճախական է **տալ պատերազմ** բայական հարադրությունը (6 կիրառությամբ)՝ **զՍկարոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ** (129), լինել **գորավիզն օգնականութեան առ ի տալ ընդ միմեանս պատերազմ** (315), **էտուն պատերազմ ընդ ռուփոսի եպարքոսի** (189) և այլն: Սրանցից բացի «Համաբարբառում» առանձին՝ **Տամ պատերազմ** գլխաբառով նշված են ևս երեք կիրառություն՝ **Պոմպէոս ... զՍկարոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ** (129), **Սանատրուկ թագաւորեալ զօրս ժողովէ ... իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Արգարու** (159), լինել **գորավիզն օգնականութեան առ ի տալ ընդ միմեանս պատերազմ** (315):

Անհամեմատ սակավ են պարզ բայական կիրառությունները (**պատերազմել**) ընդամենը 18, որ «Համաբարբառում» խմբավորված են երեք բառահոդվածի տակ՝

Պատերազմել – սատակի ամենայն զօրօքն հանդերձ ի պատերազմելն ընդ Տիգրանայ (131), բազում կարգս ուղղութեան գործեաց, **պատերազմելով ընդ Պոնտացիս** (118),

Պատերազմիմ – և զօրքն ընդ միմեանս **պատերազմէին և ընդ Պարսս** (325), **պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց** (318):

Պատերազմեալ – իսկ **Պոմպէյի պատերազմեալ ընդ Միհրդատայ՝ տեսանէ սաստիկ ընդդիմակացութիւն և ահագին մարտս** (130), և **պատերազմեալ սաստկապէս վտանգին** (184),

«Պատմութեան» մեջ արտացոլված են նաև պատերազմական ծավալուն գործողությունների հետ կապված այլ տերմիններ, որոնցից առավել հաճախականն են **ճակատ-ը** և **մարտ-ը**:

Ճակատ – բազմիմաստ բառ է, որի իմաստային կիրա-

ռությունները տարբերակված չեն ո՛չ Խորենացու «Պատմության» «Համաբարբառում, ո՛չ «Հաճախականության բառարանում»: Վերջինում առանց իմաստային դասդասման նշված է բառի 27 կիրառություն: Սրանցից «դեմքի մաս» իմաստով արձանագրված է 2 օրինակ, որոնց բնականաբար չենք անդրադառնում:

Բազմիմաստություն է դրսևորվում նաև ռազմական տերմինի արժեքով **ճակատ** բառի կիրառությունների մեջ՝ 1. ճակատամարտ, 2. Ձորքի առաջամաս՝ ուղղված դեպի հակառակորդը, 3. Ավելի լայն իմաստով՝ «պատերազմ»: Սրանցից առավել հաճախական են առաջին իմաստով կիրառությունները **Ջի թեպետ և ծերագոյն էր՝ երիտասարդապետ յարդարեաց և մղեաց զճակատն** (184), այս իմաստով մի շարք օրինակներ են վկայված **տեղի ճակատուն՝ կապակցությամբ՝ «ճակատամարտի վայր»** իմաստով՝ **գտեղի ճակատուն շինէ դաստակերտ** (37) **անուանեաց ... գտեղի ճակատուն Երուանդավան** (172) և այլն: Երկրորդ՝ «գորքի առաջամաս» իմաստով նույնպես վկայված են մի շարք կիրառություններ՝ **խորհեր ի միջոցի ամբոխին ամբանալ, մինչև հասցէ բովանդակ գօրն, զի միւսանգամ ճակատ հօրինեսցէ** («ճակատ կազմի») **Եւ յառաջեալ զճակատն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր** (171), **Եւ իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի** (171). սրանց մի մասը հոգնակի թվով է՝ **Եւ ի խառնակել այսպիսի ճակատուց՝ պատահեն Արտաշիսի արք քաջ Տաւրացիք** (172) և այլն: Երրորդ իմաստով վկայված օրինակներից են՝ **յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն գօրութեամբ զկողմամբք Ասորեստանի** (45), ինչպես նաև **ճակատ պատերազմի** ռճական հավելադրությամբ երկու կիրառություն՝ **ամա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ** (45) և՝ **պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի** (230):

Տալ ճակատ – այս վերլուծական կազմությամբ տերմինը («ճակատամարտտալ, ճակատամարտել» իմաստով) Խորենացու «Պատմության» «Համաբարբառում» ներկայացված է երկու գլխաբառի տակ՝ առաջինը՝ ընդհանուր **ճակատ** բառահոդվածում՝ երեք օրինակով՝ նախադաս բայական բաղադրիչով՝ **ես ճակատ ընդ Պարսից արքային, և յաղթեալ դարձաւ ի Հռոմ (218), դարձեալ ետ ճակատ ընդ զօրս Հռոմայեցոց կրկին, աստի և անտի Եփրատու (ն.տ.), և տուեալ ճակատ՝ երկոքին կողմանքն պարտեցան (270), և երկրորդը՝ ճակատ տուեալ առանձին գլխաբառով բերված են ևս չորս կիրառություն՝ ճակատ տուեալ ընդ Բակուր բղեշխի՝ սատակէ զնա (263), իսկ քաջին Տրդատայ երագապէս և բազում ճակատս տուեալ ... իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն (225) և այլն:**

Մրանցից բացի վկայված են նաև պարզ բայական կիրառություններ, որոնք «Համաբարբառում» տրված են երկու գլխաբառի տակ՝

Ճակատեմ – զայս իբրև լսէր Երուանդ՝ հանէր ընդ առաջ զբազմութիւն զօրացն, և ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն (171),

Ճակատիմ – ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին (191):

Մարտ – վկայված է 28 կիրառությամբ: ՆՀԲ-ի բացատրությունն է՝ «Բազմ (sic). պատերազմ. ճակատամարտ. կազմով. և ազոն»: Օրինակների մեծ մասում ընկալվում է որպես պատերազմական առանձին դրվագ՝ մեկանգամյա բախում՝ մարտն երկոցունց կողմանց մայր անպարտելի (36), եթէ ձերով մարտիս առից զայս քաղաք՝ զամենեսեան զձեզ արարից ազատս (290): Թեև առկա են և մարտ տերմինի հոգնակի թվով կիրառություններ, բայց դարձյալ նկատի են առնվում առանձին մարտական գործողություններ՝ այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ, արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց (360): Վկայված են կիրառություններ մարտ խռովութեան, մարտ պատերազմի կապակցություններով՝ եղև

խոովութիւն ընդ նա և ընդ քաղաքացիսն, և մարտ խոովութեան (382-383), ի մարտ պատերազմի ընդ նմա գրգռելով (24), իսկ ի գրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի (50) և այլն, ինչպես նաև մեկական օրինակ վերլուծական կառուցվածք ունեցող մարտ առնել և մարտ դնել հարադրական բայերով, որոնք համաբարբառում բերվում են որպես առանձին գլխաբառեր.

Մարտ առնել – իսկ ես Աժդահակ խտրոց ընդ մէջ անկեալ յիս զայնպիսի ընկալայ զհարձակում, մարտ ընդ սքանչելոյն առնելով դիւցազինն (76):

Մարտ դնել – թողեալ զՈվսիոս զօրավիգն Հերովդի, մարտ դնել ընդ Երուսաղեմի ի վերայ Անտիգոնի՝ ինքն ի ձմերոց գնայ յԵգիպտոս (136):

Մարտնչել – մարտ արմատով կազմված մարտնչել բայը վկայված է 8 կիրառությամբ, որոնցից 6-ը՝ անորոշ դերբայով՝ և ի մարտնչելն ի բազում պատերազմունս յաղթել (235), և ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին (173) և այլն, իսկ երկուսը՝ բայի դիմավոր ձևերով՝ որպէսզի խառնեալ ընդ զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա (276), դիմէ ի վերայ այնոցիկ որք ընդ այրին մարտնչէին (315):

Կռիւ – լրացնում է «զինված հակամարտություն, բախում» իմաստով տերմինների շարքը: ՆՀԲ-ում տրվում է իմաստային լայն ընդգրկումով՝

«Վէճ. կազ. մաքառումն. մարտ. պատերազմ. հակառակութիւն բանիւ և գործով կամ զինու»: Այս բառով, ի տարբերություն նույն դաշտի մի շարք այլ տերմինների, մարտական գործողությունների որոշակի հատկանիշներ չեն մատնանշվում: «Հաճախականության բառարանում» հիշատակվում է 5 կիրառություն, սակայն «Համաբարբառում» վկայված օրինակները 4-ն են՝ և հօր կռուոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն սպանանեն (287), Յաղագս ընդ Ստորեստանեայս կռուոյն և յաղթութեանն (45), և զՅուշկապարեաց կռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն (195), Քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղուջ կռուել,

և կանանց գործ է արգելուլ փակելզինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կոիւսն (290):

Կռուել – վերջին օրինակում ընդգծված է նաև նույնարմատ կռուել բայը, որ վկայված է ևս մեկ օրինակով՝ **ընդ վիշապացն ասէին յերգին կռուել նմա և յաղթել** (86):

Ասպատակ – ըստ ՆՀԲ-ի բացատրության՝ «ձիարշավ հարձակվող» (Որ ձիով արշաւէ. յարձակօղ երիվարաւ): Այս իմաստը վկայված է 5 օրինակով (թեև «Հաճախականության բառարանում» նշվում է 6), որոնցից չորսում՝ կապակցութուններ են կազմված **հէն բառի հետ՝ ասպատակաւ հինից**³¹:

Ասպատակ առնել – այս հարադրավոր բայը վկայված է մեկ կիրառությամբ՝ **Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին** (185):

Ասպատակել – ՆՀԲ-ի բացատրությունն է՝ «Երիվարօք ի վերայ յարձակիլ, արշաւել, ձիարշաւ լինել»: Խորենացու երկում վկայված է 4 կիրառությամբ³², որոնցից 2-ը՝ անորոշ դերբայով՝ **չտայ թոյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ և ասպատակել յԱսորիս** (132), **յասպատակելն Պերոզի ընդ ասորիս ի կողմանս Պաղեստինացոց** (197), և 2-ը՝ անցյալ դերբայով՝ **ասպատակեալ ձևով: Եւ ընդ գաւառն ասպատակեալ զհիւրկանեանսն առեալ աւերէին** (135), և **մերն Տիգրան ի Միջերկրեայս ասպատակեալ և ի կալանս ըմբոնեալ...** (197):

Արշաւանք – ՆՀԲ-ում գլխաբառը դրված է եզակի ձևով՝ **Արշաւան (որև Արշաւք) մի շարք նշանակություններով՝ «ընթացք. դիմեցում. յարձակում. ասպատակութիւն. վագր՝ որպիսի և իցէ»**, որոնցից ռազմագիտական արժեք ունեն **«յարձակում»** և **«ասպատակութիւն»** իմաստները: Ըստ

³¹ Օրինակները տե՛ս սույն հոդված, էջ 119՝ **Հէն** գլխաբառի տակ:

³² Օ. Խաչատրյանի կազմած՝ «Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանում» ճիշտ նշված է 4 կիրառություն, բայց Համաբարբառում բերված օրինակներից երկուսը կրկնված են, և ստացվել է 6 վկայություն, որ անճշտություն է:

«Հաճախականության բառարանի» ունի 6 կիրառություն («Համաբարբառում» վկայված է 4-ը), այդ թվում՝ Խորենացու երկի գլուխների վերնագրերում (և համապատասխանաբար՝ ցանկերում)՝ **Առաջին արշաւանք Խոսրովու յԱսորեստան, որով համարէր օգնել Արտաւանայ (98, 207), որ ինչ յաւուրս սորա ի հիւսիսականաց ազգաց արշաւանք ի մեզ (266, 251), Յաղագս թագաւորեցուցանելոյ Շապհոյ զԱրշակ և արշաւանաց ի Յոյնս (277), յեղուզակաբար արշաւանօք ... խոռվէին զաշխարհս և անհանգիստ առնէին (313):**

Արշաւանս առնել – վերլուծական կազմության այս բայը նույնպես վկայված է վերնագրում՝ **Յաղագս թագաւորելոյ Տիգրանայ միջնոյ ... և արշաւանս առնելոյ ի Պաղեստինէ (94, 127):**

Արշաւել – «Համաբարբառում» առանձնացված է երեք գլխաբառ՝ **Արշաւել, Արշաւեալ և Արշաւեմ**, որ ավելորդ է, որպես գլխաբառ պետք էր տալ միայն անորոշ դերբայը (կամ միայն առաջին դեմքը, ինչպես ընդունված է գրաբարի բառարանագրության մեջ): Վկայված օրինակներն են՝ **Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմեացոց իշխանութիւնն արշաւեաց (197), Վասն որոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի և զգօրսՅունաց փախստական արարեալ, գերելով զյով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ (214-215), ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պարսից արքայի, արշաւեալ ի միջոց աշխարհիս հասանէին մեծաւ ամբոխիս (266):** Արշաւել բառի չորրորդ կիրառությունը ռազմագիտական արժեք չունի և վերաբերում է որսորդությանը:

Յարձակում – սրընթաց նպատակաուղղված մարտական գործողություն հակառակորդ զորամիավորման կամ որոշակի անձանց խմբավորման դեմ՝ **յանդուզն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով (35):**

Սովորաբար ակտիվ պատերազմական գործողությունների սկզբնական փուլն է, որ կարող է ծավալվել և հասցնել

հաղթանակի կամ հետ մղվել և կամ հակահարձակմամբ կասեցվել հակառակորդ կողմից. այսպես՝ **Յարձակում ի մեզ Ալանաց և պարտում** (177, 97), **յանդուզն յարձակմամբ յառաջեալ բախէին** (171), և **ահս պակուցանողս տարագուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբ արկանէին** (36):

«Հաճախականության բառարանում» **հարձակում**-ի համար նշված է 12, իսկ համապատասխան՝ **յարձակել** բայի համար՝ 11 կիրառություն:

Յարձակիմ – «Համաբարբառում» կիրառման օրինակները խմբավորված են **Յարձակեալ, Յարձակել, Յարձակիմ** բառահոդվածների մեջ՝ **ի մերոյս վերայ շահատակեալ յարձակեր տերութեանս** (76)

Յարձակեալ – **Եւ յարձակեալ Սպանդարատ և հերձեալ զխումբն ... յերկիր կործանէր զքաջն** (304).

Յարձակել – **Յաղագս յարձակելոյն Տիգրանայ ի վերայ զօրացն Հռոմեացոց** (130, 94) և այլն:

Խազմ – ՆՃԲ-ի բացատրությունը տրվում է գրեթե նույն հոմանշային շարքով, ինչ **մարտ** տերմինի դեպքում է՝ «Ռազմ, պատերազմ. մարտ. կռիւ. և կազ. բանակոռութիւն. հակառակութիւն»: Խորենացու երկում հանդիպում է երկու կիրառությամբ՝ «**Թշնամություն, հակամարտություն, պատերազմական իրավիճակ**» իմաստով՝ **Եւ այսպէս համբաւեալ զմմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմ** (50), **ոչ ինչ էր այնուհետև բան և խորամանկութիւն, որ զայսպիսիս առագաստեր զչարութիւն, այլ յայտնի այնուհետև զրգոէր խազմ** (81):

Աղմուկ – վկայված է 9 կիրառությամբ՝ հիմնականում «խռովություն, ապստամբություն, անհնազանդություն, դիմակայություն, ընդդիմություն» իմաստով, որ վերաբերում է երկրի ներքին քաղաքական-հասարակական իրավիճակին և հանգեցնում է զինված ընդհարումների: Վկայված օրինակների մի մասում առկա է ոճական հավելադրություն՝ **աղմուկ**

շփոթի կամ շփոթից, աղմուկ խռովության կապակցությունների տեսքով՝ ոչ գիտեմ ասել յո ըպիսի ազդմանե, ահագին իմ աղմուկ լեալ շփոթից (123), աղմուկ խռովութեան լեալ ի թագաւորութեանն Փիլիպպոսի (208), Աստ ի մեջ անցեալ քոյր նոցա Աստղիկ՝ համոզեալ դադարեցուցանե զաղմուկն (24), աղմկաւ և բազում խռովութեամբ մացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր (333):

Աղմկեմ – վկայված է և **աղմկել** բայը մեկ կիրառությամբ՝ ներգործական իմաստով՝ «խառնել, վրդովել, խռովություն հարուցել» և ընդդիմացեալ թագաւորին՝ **աղմկեր գերկիրն և մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլում պարապել գործոյ** (228):

Շփոթ – վկայված է հիմնականում **աղմուկ շփոթից** կապակցություններով (տե՛ս վերի օրինակները): Սակավ կիրառություններով հանդիպում է և առանձին, ըստ ՆՀԲ-ի՝ «շփոթութիւն, խառնակութիւն, խռովութիւն, աղմուկ, վրդով, պղտորումն» իմաստներով՝ **քանզի շփոթ իմ ամբոխից լեալ այր զարամբ էլանէին տիրել աշխարհիս (87), ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստք ունէր** (46): Ընդհանուր առմամբ՝ վկայված է 7 կիրառությամբ:

Նույն արմատով բայական կիրառությունները նույնպես վերաբերում են երկրում ծագած խռովություններին կամ խառնակ պատերազմական իրավիճակին՝ հետևյալ օրինակներով՝

Շփոթեմ – Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմ թագաւորութիւնն (161), վախճանեալ Փիլիպպոսի և շփոթեալ թագաւորութիւնն Հռոմայեցոց (210), շփոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց. և զօրքն ընդ միմեանս պատերազմէին և ընդ Պարսս (325):

Խռովություն – բազմիմաստ բառ է, որ Խորենացու երկում ևս հանդես է գալիս տարբեր իմաստային կիրառություններով (վկայված է 23 օրինակով), որոնց միայն մի մասն ունի ռազմագիտական նշանակություն (հմմտ. վերի օրինակները՝ **աղմուկ խռովութեան** բառակապակցությամբ), այսինքն՝

վերաբերում են կողմերի միջև այն տարաձայնություններին (ապստամբություն և այլն), որոնք հանգեցնում են մարտական գործողությունների: Այդպիսի օրինակներից են՝ **Աբգարու ոչ յաջողեցաւ խորհուրդն ապստամբութեան. զի խռովութիւն անկեալ ի մէջ ազգականաց իւրոց, թագաւորութեանն Պարսից զօր ժողովեալ անդր չուէր ի համոզել և ի դադարեցուցանել զնոսա (145), Ընդ այնոսիկ ապա ժամանակս հարեալ խռովութիւն արքային Պարսից Շապիոյ ի հիւսիսականաց ազգաց (277), եղև խռովութիւն ընդ նա և ընդ քաղաքացիսն, և մարտ խռովութեան, և յաղթեալ ինքնակալին՝ սատակեաց ի քաղաքացեացն արս հնգետասան հազար (306-307), և խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշես արքայ դարձեալ արձակեաց գորդի իւր զՄաժան մեծաւ զնդաւ, և զբազումս յազգէն Մուրացեան սպանանել հրամայեաց (160) և այլն: **Գոռ** – ՆՃԲ-ի բացատրությամբ «գոռումն, գոչումն, դդորդ», ինչպէս նաև՝ որպէս ռազմական տերմին՝ «յոյզք, գրգիռ մարտի», վկայված է մեկ կիրառությամբ՝ **և յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Մակեդոնացոցն դադարէր գոռն (107):****

Ապստամբութիւն – «Հաճախականության բառարանում» և «Համարաբառում» նշված է այս բառի 7 կիրառություն, որոնցից միայն մեկում են բացահայտորեն ակնարկվում պատերազմական գործողություններ՝ **ընդ որ խստացեալ Աբգարու, խորհի ապստամբութիւն և պատրաստութիւն պատերազմի (144):**

Ապստամբ – Խորենացու երկում առկա են **ապստամբ** հիմքով (ըստ Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ «իշխանության դէմ կանգնած անհնազանդ, ըմբոստ») մի շարք կազմություններ՝ **ապստամբութիւն, ապստամբել, ապստամբեալ, ապստամբող, ապստամբեցուցանել**, որոնց մեջ «ռազմական՝ պատերազմական գործողություններ» կամ «զինված առճակատում» իմաստները կարող են բացահայտ ձևով

արտահայտված չլինել: Դրանք դրսևորվում են այն դեպքերում, երբ ապստամբությունը հանգեցնում է ռազմական գործողությունների՝ ապստամբների կողմից կամ ապստամբների դեմ: Այդ իմաստն առկա է նշված բառի ըստ «Հաճախականության բառարանի» 6 կիրառություններից երկուսում՝ **Եւ եղև ընդ նոյն ժամանակս հասանել Ադրիանոսի ի Պաղեստինէ և սատակել զապստամբսն** (189), ինչպես նաև՝ **կործան յերկիր զարկուցանէ զապստամբն** (229):

Ապստամբել – «Համաբարբառում» այս բառը վկայված է ընդամենը 14 կիրառությամբ (թեև «Հաճախականության բառարանում» նշված է 15-ը), որոնք բաշխված են **ապստամբեալ, ապստամբել, ապստամբեմ, ապստամբող, ապստամբեցուցանեմ** գլխաբառերի միջև: Այդ օրինակներից միայն մեկում է խոսվում ապստամբների դեմ ուղղված պատերազմի մասին՝ **յորժամ առից պարապում ի պատերազմէն Սպանիացոց ապստամբողաց յինէն՝ քննեալ հատուցից նոցա զարժանն** (154):

Խորենացու երկում արտացոլված են նաև բուն պատերազմական ընդհարումներին նախորդող գործողություններ արտահայտող տերմիններ, որոնք վերաբերում են գորահավաքին, ինչպես նաև հակառակորդի դիրքերի կամ բնակավայրի պաշարմանը:

Զօրածողով – ըստ ՆՀԲ-ի՝ «ժողովումն գորաց. կամ վայր ժողովելու գորաց»: Խորենացու երկում կիրառված է առաջին իմաստով: «Համաբարբառում» ներկայացված է երեք առանձին գլխաբառերով՝ **Զօրածողով լեալ, Զօրածողով լինիմ, Զօրածողով եղեալ**: Վկայված կիրառություններն են՝ **Ապա զօրածողով լինի Տիտանեանն Բել ամբոխիս հետևակ զօրաց, գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ** (34), **մեծագորն Նաբուգոդոնոսոր ... ի Վերիացոց աշխարհն զօրածողով լեալ հասանէր և վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաճեր** (114), **Բայց Կարոս ... զօրածողով եղեալ, ետ ճակատ ընդ Պարսից արքային, և յաղթեալ՝ դարձաւ ի Հռոմ** (218):

Ջօր հարուցանել – ՆՀԲ-ում այս կապակցությունը արձանագրված չէ, սակայն նշվում է «Հայոց պատմության» հաճախականության բառարանում: «Պատմության» մեջ վկայված է 2 կիրառությամբ՝ «գորք հանել» իմաստով՝ **Յայնժամ հրաման տայ Արտաշէս՝ զօր հարուցանել յարևելից և ի հիւսիսոյ բազում յոյժ** (122), **Սա ... զայրացեալ հրաման տայր զօր հարուցանել զբիրաւորս Ատրպատական նահանգին** (137):

Պաշարում – վկայված է մեկ օրինակով՝ **Եւ եղև ընդ նոյն ժամանակս հասանել Ադրիանոսի ի Պաղեստինէ և սատակել զապստամբսն պաշարմամբ ի քաղաքի մի փոքր** (189):

Նույն հիմքով բայական կիրառություններից Խորենացու երկում առկա է 5 օրինակ, որոնցից մեկը ռազմագիտական արժեք չունի:

Պաշարել – մարտական գործողությունների հետ կապված օրինակներից են՝ **որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայիւ Հրէից առաջնորդաւ** (70), **և հասեալ ի դրունս Վաղարշապատու պաշարէին** (266), **պատերազմ զմեզ շուրջ պաշարէ** (360) և այլն:

Նվաճողական գործողություններին ի հակակշիռ ձեռնարկվող գործողությունների մեջ առանձնացվում են **ընդդէմ** հիմքով մի խումբ տերմիններ՝ համադրական և վերլուծական բառակազմությամբ, որոնք առանձին գլխաբառերով ներկայացված են «Համաբարբառում»՝

Ընդդէմ երթալ – ներկայացված է մեկ կիրառությամբ՝ **Եւ ժողովեալ զգօրս Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց** (127):

Առանձին գլխաբառերով տրվում են նաև **Ընդդէմ կալ**, **Ընդդէմ կամ**, **Ընդդէմ կացեալ** բառահոդվածները՝ համապատասխան օրինակներով՝

Ընդդէմ կալ – **ոչ ոք էր, որ օգնէր Արշամայ՝ ընդդէմ կալ հռոմայեցոց** (139): **Սա եկեալ և ընդդէմ կացեալ՝ չտայ թոյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ** (132), **Տրդատ միայն ընդդէմ կացեալ՝ չեթող ոք մտանել յապարանսն** (218):

Ընդդիմակաց – վկայված է երկու օրինակով՝ **զՄիդոն թողեալ ընդդիմակաց Հայոց մերձ ի յԵփրատ ... դառնայ յԵրուսաղեմ** (136), **Սա իմեջ սկայից քաջ և երևելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն** (32):

Ընդդիմակաց լինիմ – ևս մեկ օրինակ վկայված է **ընդդիմակաց լինիմ հարադրությամբ՝ թէ որպէս Կասիոս ընդդիմակաց եղև Տիգրանայ** (132, 95):

Ընդդիմակացութիւն – գոյականական կիրառությամբ «Դիմադրություն» իմաստով (ըստ ՆՀԲ-ի՝ «ընդդէմ կալն, դիմամարտութիւն») վկայված է մեկ անգամ հետևյալ օրինակում՝ **Իսկ Պոմպեյի պատերազմեալ ընդ Միհրդատայ՝ տեսանէ սաստիկ ընդդիմակացութիւն** (130):

Ընդդիմամարտ լինել – այս հարադրավոր կազմությունը նույնպես վկայված է մեկ օրինակով՝ **սաստկապէս նահատակեալ քաջութեամբ ընդդիմամարտ լինէր Գնել նահապետ Անձևացեաց** (307):

Ընդդիմանալ – ավելի հաճախական կիրառություն ունի **ընդդիմանալ** բայը՝ ըստ «Հաճախականության բառարանի» 16 վկայություն, որոնք «Համաբարբառում» բաշխված են **ընդդիմանալ, ընդդիմանամ և ընդդիմացեալ** բառահոդվածների միջև: Բնորոշ կիրառություններից են՝ **ընդդիմանալ պատերազմաւ կապակցությամբ կազմված օրինակները՝ ժողովեաց զօրս՝ ընդդիմանալ պատերազմաւ** (237), **ընդդիմանան Արշակայ պատերազմաւ** (291), **ընդդիմացեալ թագաւորին՝ աղմկեր գերկիրն** (228), **Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ նմա** (289) և այլն:

Պատերազմական լայնածավալ գործողությունների մեջ կարելի է առանձնացնել որոշակի դրվագներ, որոնց անվանումները նույնպես Խորենացու երկում գտել են զգալի թվով կիրառություններ. այստեղ առաջին հերթին պետք է հիշատակել **հաղթանակ և պարտություն** հասկացությունների հետ կապված բառամիավորները: Սրանց մեջ ամենամեծ հաճա-

խականությունն ունեն **յաղթել** և **յաղթութիւն** տերմինները՝ առաջինը 24 և երկրորդը 18 կիրառությամբ:

Յաղթել – հետաքրքրական է, որ ՆՀԲ-ում այս բառը բացատրված է առաջին հերթին իր հակահիշով՝ **պարտել** «պարտության մատնել», այնուհետև՝ **նուաճել**, **տիրել** և այլն: Խորենացու երկի «Համաբարբառում» առանձին գլխաբառերով տարբերակված են անորոշ և անցյալ դերբայները, իսկ **յաղթեմ** բառահոդվածի մեջ՝ դիմավոր ձևերը: Բնորոշ կիրառություններից են՝ **եռ ճակատ ընդ Պարսից արքային և յաղթեալ դարձաւ ի Հռոմ** (218), **սակայն յաղթեալ Հայոց գնդին՝ փախստական առնեն զգօրս Պարսից** (268), **ընդ վիշապաց ասէին յերգին կռուել և յաղթել** (86), **որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց** (178) և այլն:

Յաղթութիւն – վկայված է 24 կիրառությամբ: Այս տերմինի կիրառություններում հետաքրքրական է **յաղթութիւն ստացեալ** կապակցությունը՝ մի շարք օրինակներով՝ **և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք** (35), **զյաղթութիւն ստացեալ մեռանի ի վերայ այսպիսեաց** (172), այլ վկայություններից են՝ **ողջ լեր ամենայն յաղթութեամբ** (29), **ի փախուստ յորդորեաց զթշնամիսն, և ի յաղթութիւն զՀայոց գունդն՝ զօրացոյց** (267), **մեծաւ յաղթութեամբ պսակեալ, ի բարեկենդանութեան կատարէր աուրս** (296) և այլն:

Յաղթանակ – ՆՀԲ-ում առանձնացված երկու հիմնական իմաստներից՝ «վարձ և պսակ յաղթութեան» և «յաղթութիւն», Խորենացու օրինակը համապատասխանում է վերջինին՝ **այլ սա մեծամեծ յաղթանակօք պանծացեալ ի յիրոց զօրացն խողխողի** (126):

Պարտություն իմաստային ենթադաշտը նույնպես ներկայացված է զգալի թվով վկայություններով՝

Պարտութիւն – վկայված երկու օրինակներն են՝ **արք դիպեալ արանց ոչ ոք զպարտութիւն յանձն առնոյր** (292), և **ի պարտութիւն մատնեալ գնդին Շապիոյ, դառնայ անդրէն ի Մծբին** (287):

Պարտում – նույն՝ «պարտություն» իմաստով վկայված է նաև **պար տում** տերմինը՝ 8 կիրառությամբ՝ «Պատմության» չորս գլուխների վերնագրերում և համապատասխան ցանկերում (իրականում 4 կիրառություն)՝ **Այլ պատերազմ Հայոց ընդ զորս Հռոմայեցոց և պարտում Միդոնի և Բենդիդեայ** (135, 94), **յարձակում Ալանաց ի մեզ և պարտում** (177, 97), **պարտում Շապհոյ և ակամայ հնագանդութիւն** (234, 99), **Պարտում Շապհոյ ի Տիգրանակերտի** (287, 252):

Պարտիմ – կրավորական սեռի այս բայով՝ «պարտվել, պարտություն կրել» իմաստով վկայված է երկու օրինակ՝ **երկոքին կողմանքն պարտեցան** (270) և **ամբարձ գձեռս իր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս ... մինչև պարտեցաւ երկրորդն Ամաղեկ** (304),

Պարտեալ – նույն բայի **պարտեալ** անցյալ դերբայով՝ «Համաբարբառում» առանձնացված է երեք կիրառություն՝ **պարտեալ ի մարտն և սրտմտութեամբ մեծաւ ննջեալ երևեցաւ նմա ի քուն իսաչ աստեղեայ յերկնից** (226), **պատերազմաւ պարտեալ Արշակ ի Խոսրովայ՝ վախճանի հիւանդութեամբ** (315), **քանզի էր պարտեալ ի հօրէ նորա** (301):

Խորենացու «Պատմության» մեջ կիրառված են նաև **հաղթանակ** և **պարտություն** իրադրությունների հետ կապված մի շարք հետևանքների անվանումներ:

Հաղթանակի հետևանքներից են հետևյալ իրակությունները՝

Նուաճել – գործածվում է մի շարք իմ աստներով, որոնց մեջ ռազմագիտական արժեքին համապատասխանում են ՆՀԲ-ի՝ «ընդ լծով արկանել. տիրել. իշխել» բացատրությունները, թեև երկի բնագրում կան նաև իմաստային այլ նրբերանգներ և փոխաբերական կիրառություններ: Վկայված 22 կիրառությունները «Համաբարբառում» խմբավորված են **նուաճեալ**, **նուաճել**, **նուաճեմ**, **նուաճիմ** գլխաբառերի տակ: Բնորոշ օրինակներից են՝ **ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել** (49), և **նուաճեալ**

զնոսա ընդ իւրով ձեռամբ՝ խաղայ յարևելս (185), Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս քազմութեամբ նաւաց (123), զնախարարսն նուաճելով՝ ի դէն մագդեգանց զաշխարհս դարձուցանէ (301), յետ մեռանելոյ Պերոզի նուաճեաց զՀայս և արձակեաց զՏիգրան (197) և այլն:

Արտահալածել – վկայված է մեկ կիրառությամբ՝ գորքի նոր հանդերձանքի հետ կապված դրվագում՝ քաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել (72):

Կոտորել – բազմիմաստ բառ է, որ Խորենացու երկում բավական մեծ հաճախականություն ունի որպէս ռազմական տերմին (26 կիրառությամբ):

«Համարաբբառում» համապատասխան օրինակների թվարկումով որպէս առանձին գլխաբառեր տրվում են բառի մի շարք հարացուցային ձևեր և բայանուններ՝ կոտորեալ, կոտորել, կոտորեմ, ինչպէս նաև՝ կոտորած, կոտորում: Մյուսպէս՝ կամեցայ առնուլ զգօրս իմ և գալ կոտորել զՀրեայսն, որ խաչեցին զնա (152), հարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմիմեանս (258), միահաղոյն զարս և կանայս հանդերձ մանկամբ հրամայեաց կոտորել (295), ահագին իմ աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ (123), զոմանս կոտորեալ սրով և զոմանս փախստեայս արարեալ (307) և այլն:

«Հաճախականության բառարանում» առանձնացված են կոտորել՝ 26, կոտորած՝ 4, կոտորեալ՝ 4 և կոտորում՝ 3 կիրառությամբ գլխաբառերը: **Կոտորած** – վկայված 4 օրինակներից մեկը ռազմագիտական արժեք չունի, այլ ծիսական՝ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէինըստ օրինի հեթանոսաց (191): Մյուս օրինակները կապված են մարտական գործողությունների հետ՝ և անդ էր տեսանել կոտորած անհնարինգնդին Երուանդայ և զօրա Միջագետաց (171), Եւ Շապիոյ զմացեալսն ի կոտորածէն գերեալ՝ չուէ ի Պարսս (290):

Կոտորում – «Համաբարբառում» վկայված է 3 գործածությամբ³³ **Կոտորում ազգին Մանդակունեաց յԱրտաշրէ** (217), **լսէ Սմբատ ... զգոյժ կոտորման որդոց նորա** (162), **որոյ աղագաւ և ոչ ի կոտորման նորա դիպեցաւ** (295):

Անկած – բազմիմաստ բառ է, որ «Պատմության» մեջ կիրառված է «ավար, ռազմավար» իմաստով հետևյալ 2 օրինակներում՝ **և Կաղմեայ թոռին իւրում բազում ինչս յանկածէ պատերազմին պարզեւ** (37), **հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին** (131):

Աւար – ՆՀԲ-ում բացատրվում է նախորդ բառով՝ «Անկած պատերազմի»: Վկայված է մեկ անգամ պարզ արմատական ձևով՝ **և զաւարն ամենայն նմա թողու** (183), ինչպես նաև **աւարել** բայով, **աւար առեալ** վերլուծական կապակցությամբ և **աւարու մ** բայանուն գոյականով:

Աւարել – այս բայաձևը հանդիպում է երկու կիրառությամբ՝ առաջինը՝ երկրորդ գրքի ցանկում և բուն բնագրում (հրականում կրկնվում է նույն օրինակը)՝ **Խաղալն Արտաշիսի յարևմուտս ... և աւարել ընձեռել Հայոց զպատկերս կոռց** (94, 122), իսկ երկրորդը՝ **և ասպատակաւ հինից աւարել զաշխարհս Պարսից և Ասորեստանեայց** (202),

Աւարում – բայանվանական այս ձևը հանդիպում է երկու անգամ՝ ցանկում և բնագրում՝ **Աւարում Կասբից և գրգռում ընդ Սմբատայ զարմիցն Արտաշիսի և ընդ միմեանս** (97, 182):

Աւար առեալ³⁴ – այս կապակցությամբ նույնպես վկայված է երկու օրինակ՝ **Եւ ապա աւար առեալ զգանձն Երուսազայ ... բերէ Արտաշիսի** (175), **ստեպ ստեպ զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցաներ** (203):

³³ «Հաճախականության բառարանում» նշված է 2 կիրառությամբ:

³⁴ «Համաբարբառում» գլխաբառը վրիպակով տպված է Աւար արեալ, բայց օրինակները ճիշտ են բերված:

Առում – Խորենացու երկում որպես ռազմական տերմին գործածված է **առնուլ** բայի բազմաթիվ իմաստներից մեկով՝ «գրավել, տիրել», որ հանդիպում է հետևյալ օրինակներում՝ **Երուանդայ պատերազմ ընդ Արտաշիսի և փախուստ, և առում քաղաքի նորին և մահ** (170), **Առում քաղաքաց և քանդում ամրոցաց** (365), **Առում Տիգրանակերտի և բնաբարձ քանդում** (289):

Քանդում – հակառակորդի տարածքի գրավումը հանգեցնում է և այս հետևանքին, ինչպես նշվում է վերի օրինակներում՝ **Առում քաղաքաց և քանդում ամրոցաց** (365), **Առում Տիգրանակերտի և բնաբարձ քանդում** (289):

Քանդել (Քանդեալ) – վկայված է և դերբայական կիրառությամբ մեկ օրինակ՝ **եհաս հրաման ի Շապհոյ արքայե, զի քանդեալ աներեսցեն զամրութին ամենայն քաղաքաց** (300):

Աւերում³⁵ – նմանատիպ հետևանքի է վերաբերում և այս տերմինի կիրառությունը՝ **աւերում աւանաց և հրդեհում շինուածոց** (365):

Աւերել (Աւերեալ) – **աւերել** բայի անցյալ դերբայով վկայված է հետևյալ օրինակը՝ **Եւ ինքն շինէր զԵրուսաղէմ, զաւերեալն ի Վեսպասիանոսէ և ի Տիտոսէ և յիւրմէ** (189):

Գերի³⁶ – վկայված է 7 օրինակով, որոնց մեջ կարելի է տարբերակել երկու իմաստ՝ 1. «Գերված անձ», եզակի կամ հոգնակի թվով՝ **հանդերձ պատանեկօք և բազմութեամբ գերեացն որչափ թէ աւելի քան զբիւրմի** (83), **որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ, իբր նեղելոց և գերեաց** (189) և 2. «Գերիների բազմություն» հավաքական իմաստով, եզակի թվով՝ **Տիգրան հրաման տայ ... նստուցանել զգերին Հրէից ... ի**

³⁵ Այս տերմինի կիրառությունը կարելի է կապել ինչպես հաղթանակի, այնպես էլ պարտության հետ նայած թե երևույթը ում տեսակետից է գնահատվում:

³⁶ Այս բառահոդվածում հաշվառված են միայն ինքնուրույն կիրառությունները՝ առանց դարձվածների (գերի առնել և այլն), որոնք բերվում են ստորև առանձին բառահոդվածներում:

քաղաքն Շամիրամայ (135), ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերոյն (183), Առեալ գերի բագում և ի հրէից նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ (129), զամենայն միահամուտ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ (182) և այլն: **Գերել** – ըստ ՆՀԲ-ի՝ «Գերի կամ ի գերութիւն վարել. ըմբռնել կալանաւորել ի պատերազմի...»: «Հաճախականության բառարանի» տվյալներով Խորենացու երկում վկայված է 15 կիրառությամբ, որոնք «Համաբարբառում» քաշխված են **Գերեալ, Գերել, Գերեմ, Գերիմ և Գերող** բառահոդվածների միջև՝ **Եւ Շապիոյ զմացեալսն ի կոտորածէն գերեալ չուէ ի Պարսս (290), դարձաւ առ գերեալ Յոյնսն զինաւորս և ասէ (290), հրամայեցին արձակել զգերեալս (264), գերեցին և այն Հրեայսն որք յԱրտաշատ և ի Վաղարշապատ (300)** և այլն, ընդ որում օրինակների մի մասում առկա է նաև «բռնագրավել, ավար առնել» իմաստը, որ վերաբերում է ոչ թե մարդկանց, այլ ունեցվածքին՝ զանձին և նույնիսկ թագավորների ոսկորներին՝ **առնու զամուրն և գերէ զամենայն զանձս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն (288), ինչպես նաև տարածքներին՝ վասն որոյ աւերեալ գերեաց զաշխարհս մեր (293), գերելով զյուրով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ (215):** Հմմտ. նաև ստորև՝ **գերի առեալ** կապակցությամբ կիրառությունների մեջ՝ **զՄարիասացոց քաղաքն գերի առեալ (135)** օրինակը:

«Համաբարբառում» ինքնուրույն գլխաբառերով առանձնացված են անորոշ դերբայը՝ **գերել**, դիմավոր ձևերը՝ ներգործական և կրավորական սեռերով՝ **գերեմ և գերիմ** գլխաբառերի տակ և **գերեալ** անցյալ դերբայը՝ տարբեր կիրառություններով: Առանձին ներկայացված են նաև **գերի ածեմ, գերի վարեմ և գերի առեալ** վերլուծական կառուցվածքները:

Գերի ածեմ – վկայված օրինակներն են՝ **գերկիրն Կասբից աւերեալ առաւել քան զԱրտազեան՝ գերի ածէ ի Հայս (183),** ինչպես նաև վերը նշված՝ **ածէ գերի սաստիկ յԱրտաշատ (182)** կապակցությունը՝ շրջուն շարադասությամբ:

Գերի առեալ – զՄարիսացոց քաղաքն գերի առեալ, թագաւոր կա- ցուցանէին զԱնտիգոնոս (135), և զբազում գերի առեալ ի կողմանցն Մծբնայ (263). տե՛ս նաև արդեն նշված՝ առեալ գերի բազում և ի Հրէից օրինակը՝ դարձյալ շրջուն շարադասութեամբ (129)):

Գերի վարեմ – այս օրինակը նույնպէս վերաբերում է տարածքների գրավմանը՝ **Գունդք անցեալ ընդ Դանուր գետ զբազում գաւառս գերիվարեցին** (214):

Գերութիւն – վկայված է երկու իմաստով՝ 1.«Գերում, գերեվարում» և 2. «Գերիների բազմություն»: «Հաճախակա- նության բառարանում» և «Համաբարբառում» առանց իմաստային տարբերակման նշված է 16 կիրառություն: Առաջին իմաստով վկայված օրինակներից են՝ **Գերութիւն Հիւրկանու քահանայապետի և այլ բազմութեան Հրէից** (132), **զՀրեայսն խաղացուցեն ի գերութիւն** (300), **ի գերութիւն վարեցաւ Սեդեկիա** (360), **պատերազմեալ ի գերութիւն ըմբռնեցաւ** (103) և այլն: Երկրորդ իմաստով վկայված օրինակներն ավելի առատ են՝ **յորում և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից** (199), **գոր կացուցեալ էր Աղեքսանդրի ի վերայ գերութեանն վերիացոց աշխարհին** (121), **Համոզէ զՄանաճիհր արձակել զգերութիւն ռամկին** (264) յայն սակս եկն ընդ գերութիւնն, զի խրատեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան (300), **թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն հրէից նստուցեալ յԱրմաւիր ... խաղայ գնայ յԱտրիս** (131) և այլն:

Պատանդ – ըստ ՆՀԲ-ի բացատրության՝ «անձն տուեալ ի գրաւ առ ապահովութեան»: Պատանդներ կարող էին առնվել թե՛ որպէս հետևանք հաղթական ռազմական գործողությունների, թե՛ իրավադիվանագիտական հարաբերությունների բերումով: Ի տարբերություն գերիների, որոնք լիովին իրավագուրկ էին, պատանդները կարող էին օգտվել անձի որոշ ապահովությունից, քանի դեռ պատանդատուն

կատարում էր հանձն առած պարտավորությունը: Խորենացու երկի «Համաբարբառում» բերվում է տերմինի կիրառության 11 օրինակ³⁷, ինչպես՝ մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս (200), Տրդատ անտի ըստ հայրենի օրինի պատանդս առեալ դառնայ (231), նուաճեաց և զազգս նախարարացն, պատանդս առնլով յամենեցունց (277), արտասահմանել զնա հրամայէ և սրոյ զամենայն պատանդսն մատնել (293) և այլն:

Ձերբակալ առնել – կիրառված է դարձյալ հաղթական ռազմական գործողությունների նկարագրությունների մեջ՝ ըստ «Հաճախականության բառարանի» 9 գործածությամբ, որոնք «Համաբարբառում» ներկայացված են բայական հարադրավոր կառույցների տեսքով՝ **ձերբակալ առնել/ առնել/ արարեալ** գլխաբառերի տակ, ինչպես՝ **Խաղալն Արտաշիսի յարևմուտս և ձերբակալ առնել զԿրիստս** (94, 122), **կոտորէ անհնարին զգօրս Հայոց և ձերբակալ առնէ զարքայն նոցա** (138), **գորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս** (177) և այլն:

Պարտության հետևանքների հետ կապված հասկացություններից կիրառման ամենամեծ հաճախությունն ունի **փախուստ** տերմինը, որով Խորենացու երկում վկայված է բավականին հարուստ բառափունջ՝ տարբեր խոսքի մասերով, քերականական ձևերով և բառակազմական կառուցվածքով, որոնք առանձին գլխաբառերով արտացոլված են նաև «Հաճախականության բառարանում» և «Համաբարբառում»՝ **փախչել /փախչիմ /փախչող՝ փախստական անկանեմ/արկանեմ, փախստական առնեմ /արարեալ, փախստական վարել/լինել/լինիմ, փախստեալ, փախստեայս արկանեմ/ առնեմ/արարեալ, փախուցանեմ/ փախուցեալ**: Սրանց մեծ մասը կապվում է մարտական գործողությունների նկարագրությունների հետ:

³⁷ «Հաճախականության բառարանում» նշված է 13:

Փախուստ – ՆՀԲ-ի՝ բացատրությունն է՝ «փախչելն, խոյս տալ»: Ըստ վկայված օրինակների՝ հակամարտող կողմերից մեկը դիմում է փախուստի՝ պարտվելով կամ խուսափելով առճակատումից: Վկայված է կիրառման բավական մեծ հաճախությամբ՝ 20 օրինակով՝ **ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեն ի Սկիւթացոցն փախուստն** (126), որ ի ժամանակի **փախստենէն Շապիոյ գնացեալ ի դուռն կայսեր նահատակեցաւ** (308), և **զերծանել Արտաշիսի փախստեամբ** (161) և այլն:

Ի փախուստ դառնալ/դարձուցանել – **փախուստ** տերմինի կիրառությունների մեջ զգալի թիվ են կազմում նշված կապակցություններով օրինակները՝ **Եւ մացեալ զօրքն ի փախուստ դառնային** (172), և **սատակեցաւ նա և զօրն, և մնացեալքն ի փախուստ դարձան** (219) և **ճակատ տուեալ ի փախուստ դարձուցանէ՝ թափելով ի նմանէ զԱսորեստան** (208), ի **փախուստ զՇապուռի դարձուցին, յաւարի զամենայն երկիրն առեալ**(234) և այլն:

Փախստական – թեև «Համաբարբառում» 4 կիրառությամբ առանձնացված է ինքնուրույն բառահոդվածով՝ ի տարբերություն այլ կազմությունների, որոնց բառահոդվածները գլխաբառում տրվում են բայական հարադրի հետ միասին (**փախստական անկանեմ/առնեմ/ արկանեմ** և այլն), բերված 4 օրինակները նույնպես ունեն նույն կառուցվածքը՝ բայական հարադրով՝ **եկին փախստական առ մեզ** (70), **անցին ի սմանէ փախստականք յԱգռաս** (58), **ինքն գնաց փախստական ի Տաւրոս Կիլիկեցոց** (244), և **բոլոր ընտանեօքն գնաց փախստական ի Յոնս** (295): Սրանից հետևում է, որ **փախստական** տերմինը Խորենացու երկում հանդիպում է միայն բայական հարադրությունների մեջ: Ստորև բերում ենք մեկական օրինակ յուրաքանչյուր բայական հարադրով:

Փախստական անկանիմ – **Թողեալ զթագաւորութիւնն՝ փախստական անկանէր ի Կրետէ** (55):

Փախստական առնեմ – **Սակայն յաղթեալ Հայոց գնդին՝ փախստական առնեն զգօրս Պարսից** (268):

Փախստական արկանել – **Որում ի դիմի հարեալ վանէ,**

փախստական արկանելով ի կողմի ինչ ասիական ծովուն (46):

Փախստական լինել – Մակայն բազմութեանն յաղթեալ փախստական լինի Միհրդատ ի կողմանս Պոնտոսի (130):

Փախստական վարել – Փախստական վարելով զնա յԱտրեստան՝ հանեն առ եզերք սահմանացն Ատրպատականի (211):

Փախստեայ – ՆՀԲ-ում բացատրության մեջ հղում է տրվում **Փախստականին**: Մակայն «Պատմության» մեջ դրանց կիրառությունները միայն մասամբ են համընկնում: Ինչպես նշվեց՝ **փախստական**-ը միշտ հանդես է գալիս բայական հարադրություններում, իսկ **փախստեայ** տերմինը կարող է գործածվել և առանձին՝ գոյականի կամ ածականի արժեքով՝ **ոչ փախստեայ՝ համբարաբեր Լիւդացոցն թողեալ** (125), **Յորում և Տրդատայ վիրաւորեալ երիվարն՝ ոչ աճապարեաց ընդ փախստեայսն** (219), **Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն** (305):

Կան նաև կիրառություններ բայական հարադիրներով՝

Փախստեայս առնեմ – յանկարծակի անկեալ ի բանակն, զոմանս կոտորեալ սրով, և զոմանս փախստեայս արարեալ (307):

Փախստեայս արկանեմ – Յուլվաձեռն գնդաւ զհետմտեալ՝ փախստեայս արկանե յամուր այրս ի գաւառին Մանանաղոյ (314):

Հալածել – գրեթե նույնպիսի հաճախական գործածություն ունեն և **հալածել** (18 կիրառությամբ), **հալածանք** (8 կիրառությամբ) տերմինները, ինչպես և **հալածական** ածականով կազմված բայական հարադրությունները՝ **հալածական առնել** (9) / **արկանել** (1) / **լինել** (1): Սրանցից ոչ բոլորն ունեն ռազմագիտական նշանակություն: Այդ գործողությունները կարող են կատարվել նաև անձնական, դասային-դասակարգային, կրոնական և այլ շարժառիթներով, բայց զգալի թվով կիրառություններ կան և բուն ռազմական գործի առումով, ընդ որում, այստեղ ևս կարող են լինել մեկնաբանություններ գործողի և

կրողի (հաղթողի և պարտվողի) տեսակետներից: Ռազմական գործ իմաստային դաշտին կարելի է վերագրել հետևյալ օրինակները՝ **ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թե ի նուաճել կամ զբռամբ ածել** (49), և **հետամուտ եղեալ հալածեաց զգօրսն Հռոմայեցոց մինչև ի սահմանս Կեսարու** (184), **հալածեաց զՏերենտիանոս հանդերձ գօրօքն** (307), **իբրև գիտացին նախարարքն Հայոց**

... եթէ ... գունդ փոքր է որ վասն այնր է եկեալ՝ միաբանեալ **հալածեցին զնոսա** (299) և այլն:

Անկում – ՆՀԲ-ի բացատրությամբ՝ «Անկանիլն ըստ ամենայն նշ. իբր Կործանումն. վայրաբերումն. զրկումն, վրիպումն, մահ, պատահումն» են: Ռազմական գործի տեսակետից վկայված է մեկ կիրառությամբ՝ **ոչ փոքրհարուածս եհաս զօրացն իւրոց և բազմաց անկում մեծամեծաց** (231): **Անկանել** – Խորենացու երկում վկայված է 44 կիրառությամբ՝ բազմազան իմաստներով, որոնցից ռազմագիտական արժեք ունեն երկուսը՝ «կործանվել, զոհվել, կյանքից զրկվել» և 2. «փախչելով՝ ապավինել, ապաստանել»:

Առաջին իմաստով վկայված են հետևյալ օրինակները՝ **զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բել՝ անուանեաց Հայկ Գերեզման** (37), **դիակապուտս առաքէ ... խնդրել ի մեջ դիականցն անկելոց զըղձալին իւրև գտարփածուն** (49), **ի հարկանելոյ գօրուն և ի բազում անկելոց նախարարացն՝ զանգիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապիոյ** (234), **բազումք ի մեծամեծ նախարարացն անկան ի պատերազմին** (268):

Երկրորդ իմաստով նույնպես վկայված են մի շարք օրինակներ՝ **Եւ յայն-մանէ խնդրէր Սահակ փախչել յԱրշակայ և անկանել առ Խոսրով** (312), **փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից** (222), **ինքն առ արքայն Շապուհ փութացեալ անկանի** (263), **Եւ Միհրդատայ արհամարհուրօին կրեալ ի քեռոյն իւրմէ Տիգրանայ՝ ապստամբութեամբ անկանի առ Կեսար** (132) և այլն:

Անձնատուր լինել – պարտություն իմաստային ենթադաշտին է առնչվում նաև Խորենացու երկում մեկ կիրառությամբ վկայված **անձնատուր լինել** կապակցությունը, որի բացատրությունն է ըստ ՆՀԲ-ի՝ «անցանել ի կողմն օտարաց, մտանել ի հնազանդութիւն»: Օրինակը վերաբերում է Արտագերս ամրոցի անկմանը՝ **անձնատուր եղեն ի կամաց և ոչ ի բռնութենէ** (300):

Ձենքնկեց – կիրառված է մեկ անգամ՝ **զենքնկեց լինել** կապակցությամբ: Ըստ ՆՀԲ-ի՝ «ընկենուլ զզէս»՝ «զենքերը վայր դնել» իմաստով՝ **Յորմէ զարհուրեալ աւագակացն՝ զենքնկեց լինելով ի ձեռն եկին** (308), այսինքն՝ «զենքերը վայր դնելով՝ անձնատուր եղան»:

Մարտական առանձին գործողությունների մեջ կարելի է հիշատակել նաև հետևյալ տերմինները՝

Շահատակութիւն – վկայված է մեկ կիրառությամբ՝ «համարձակություն, քաջություն»³⁸ իմաստով՝ **եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ ասեմ, այլ ի մտէ ուղևորութեանս, ընդդէմ կացէք ինձ՝ ի ձէնջ ուսցին և այլք գոյն առնել** (288):

Շահատակել – նույնարմատ բայական կազմություն է, որի 6 կիրառությունները համաբարբառում բաշխված են երեք գլխաբառերի միջև՝ **Շահատակել, Շահատակեալ, Շահատակեմ**: Վկայված օրինակներում նշանակում է «առաջ ընթանալ, հանդգնաբար արշավել, նախահարձակ լինել», ըստ ՆՀԲ-ի՝ «Նահատակիլ նախագրաւ հարձակմամբ. Համարձակ արշաւել. յար-ձակիլ. յառաջ յաղալ. սուրալ»: Բնորոշ օրինակներից են՝ **իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տերութեանս** (76), **յերկուս ճեղքէ**

³⁸ Հմմտ. աշխարհաբար թարգմանությունը՝ «դուք, տիգրանակերտցիներդ, որ առաջինն էք, ոչ թե քաջությամբ, այլ իմ ուղևորության ճանապարհի վրա...», **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, խմբ., ներած. և ծանոթություն. **Ս. Մայիսայան**, Եր., 1981, էջ 263-264:

զամբոյ թշնամեացն, սկայաբար շահատակելով (230), և թաղեալ կաճեայ բոլորով ամեննիմբ պարածածկեալ, շահատակէր ի մէջ զօրացն (267) և այլն:

Նետաձգութիւն – նետ ու աղեղի գործածութեան հետ է կապված **նետաձգութիւն** տերմինը՝ 6 կիրառութեամբ՝ **քանզի էր պատանին նշուակի նետաձգութիւն կորովութեան** «պատանին անվանի էր կորովի նետաձգութեամբ» (121), **այլ սս ծածկեաց նետաձգութեամբն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ զիջեր զմիջօրէի արարեալ** (125), **բազում վիրօք պատեալ զձին՝ սատակեցին նետաձգութեամբք** (225) և այլն:

Դիպաձգութիւն – վկայված է մեկ օրինակ՝ «անվրեպ նետաձգութեան» իմաստով՝ **ոմ Վարաժ անուն պատանի լեալ ... դիպաձգութեամբ նետից կորովի** (42):

Հարկանել³⁹ – ՆՀԲ-ում տրված է մեկ հիմնական գլխաբառով՝ **Հարկանել**, որին հաջորդում են երկու տասնյակ ենթագլխաբառեր՝ բազմազան իմաստներով և վերլուծական կառուցվածքի դարձվածային բառամիավորներով, որոնցից մի շարք օրինակներ կիրառված ենք գտնում Խորենացու երկում նաև ռազմական գործի հետ կապված, հատկապես հետևյալ իմաստներով՝ «կոտորել զմարդիկ, և զանասուն. ջարդել, սպանանել, սատակել»⁴⁰. Ի լինել մարտի՝ **հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմի մանկացն Շամիրամայ** (49). Մի ում ի զինուորացն մտեալ եհար վաղերք զգլուխն Երուանդայ (173), **տան ընդ գնդին Պարսից պատերազմ. հարկանեն զօրսն, և սպանանէ Ապրսամ Սպանդունի**

³⁹ Խորենացու երկի «Համաբարբառում» և «Հաճախականության բառարանում» բերվում է Հարել գլխաբառը՝ փխ. Հարկանել: ՆՀԲ-ում Հարել ձևը հղվում է Հարկանել-ին («իմա կամ ընթերցիր հարկանել»), իսկ միակ օրինակը բերվում է ուշ շրջանի գործերից՝ Գր. Հր. համառոտագրությամբ՝ ենթադրաբար վերագրվելով Գրիգոր Նարեկացուն կամ Սկևռացուն (տես ՆՀԲ, հատոր երկրորդ, էջ 10-11):

⁴⁰ Տե՛ս ՆՀԲ, հատ. երկրորդ, էջ 63, միջին սյունակի ներքևից 2-3 տողերը:

զգորագլուխն (332), հարեալ աշտէի զքաջն՝ սատակէին և զգօրսն առաջի արկեալ ի փախուստ դարձուցանէին (107) և այլն:

Հարկանել ի դիմի – «Պատմության» մեջ կիրառված է երկու օրինակով՝ «ընդդիմանալ, հակառակվել, դիմակայել, դիմադրել, դիմագրավել» իմաստով՝ որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն (46), **Գաբիանոս ոչ իշխեսց ի դիմի հարկանել Տիգրանայ, դառնայ յԵփրատայ յԵզիպտոս** (131):

Հարուած – այս բառի բազմաթիվ իմաստային նրբերանգներից Խորենացու երկում որպէս ռազմական տերմին կիրառված է «կոտորած, վնաս, կորուստ կռվի մեջ» նշանակությամբ. հմմտ. վերը անկում գլխաբառի տակ նշված օրինակը՝ **ոչ փոքր հարուածս էհաս զօրացն իւրոց և բազմաց անկում մեծամեծաց** (231): Խորեացու երկում վկայված է նաև բառի մեկ այլ կիրառություն «աստվածային պատիժ»՝ ոչ ռազմական տերմինի իմաստով՝ **հասին նմա հարուածք ի Տեառնէ** (232): «Հաճախականության բառարանում» **հարուած** բառի դիմաց նշվում է 1 կիրառություն՝ անկախ իմաստից:

5. Ռազմական շինություններ և տեղանք, դիրքավորում

Ըստ իրենց ռազմավարական (ստրատեգիական) և գործառական նշանակության ռազմական շինությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ այսպէս կոչված «մշտական» և ժամանակավոր: Առաջիններից ամենակարևորներն են **ամրոց**-ը՝ **ամուր** և **բերդ** համանիշներով, որոնք ռազմական նպատակներից բացի ծառայել են նաև որպէս բնակատեղի՝ քաղաք-ամրոց, դղակ, միջնաբերդ և այլն:

Ժամանակավոր շինությունները, ի տարբերություն քաղաք-ամրոցների՝ ունեն մարտավարական նշանակություն, հիմնվում են ըստ անհրաժեշտության՝ ռազմական գործողությունների ընթացքում և մնայուն չեն: Խորենացու երկում այս

երկու տիպի շինությունների անվանումներն էլ կիրառված են: Բնականաբար ավելի մեծ հաճախականություն ունեն առաջին տիպի կառույցներ նշանակող տերմինները:

Ամուր – «Պատմության» մեջ **ամուր** տերմինը վկայված է 15 կիրառությամբ, ընդ որում դրանց մեծ մասը կապվում է կոնկրետ բնականությունների հետ՝ **առնու գամուրն Անի** (288) ի **Մասադան յամուրն թողեալ զընտանիսն՝ ինքն ի Հռոմ փութայր հասանել** (135), **հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան** (175), **հանդերձ գանձիք անկաւ յամուրն Արտազերից** (299), **ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ** (113) և այլն:

Ամրոց – այս տերմինը նույնպես Խորենացու երկում հանդիպում է 15 վկայությամբ: Ընդհանրապես այն ավելի լայն իմաստային կիրառություններ ունի, քան **ամուր**-ը: ՆՀԲ-ում բերվում են **ամրոց** հասկացության մի շարք նրբիմաստներ, որոնց մեջ նշվում են նաև բնական թաքստոց-ապաստարանների անվանումներ՝ տարբեր բնագրերից քաղված **օրինակներով**, ինչպես՝ **յանձաւախիտ ամրոցս մայրեաց, յամրոցս քարանձաւին, ամրոց անմատոյց՝ փախուցելոցն պատսպարան** և այլն: «Պատմության» մեջ հիմնականում համընկնում են **ամուր** և **ամրոց** տերմինների իմաստները և կիրառությունները՝ **եմուտ նա յամուրն Անի** (201), **գերեալ գդատերս Սմբատայ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս** (164): Սակայն **ամրոց** տերմինի վկայությունները նվազ կոնկրետ են, ոչ միշտ են կապվում տվյալ բնականվան հետ (ինչպես **ամուր** տերմինի դեպքում է), այլ ունեն ավելի ընդհանրական նշանակություն՝ **առում քաղաքաց և քանդում ամրոցաց** (365), **արս քաջս թողլով ի վերայ ամրոցին** (162), **Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին, և բացին զդուռն քաղաքին** (173) և այլն:

Ամրութիւն – ՆՀԲ-ում տվյալ բառի բազմազան կիրառությունների մեջ առանձնացվում է նաև թանձրացական նշանա-

կուրթունը ռազմագիտական առումով՝ որպես «տեղի ամրանալոյ կամ պահպանութեան, վայր անառիկ, դղեակ, պարիսպ, ապաստան» են: Խորենացու երկում վկայված է երեք կիրառութեամբ, որոնցից նշված իմաստով են հետևալ օրինակները՝ **և ինքն զնաց ապստամբեալ ի կողմանս ամրութեանն Մարաց (195), եհաս հրաման ... զի քանդեալ աւերեսցեն զամրութիւն ամենայն քաղաքացն (300)**: Հատկապես երկրորդ օրինակում **ամրութիւն**-ը կարելի է մեկնաբանել նաև որպես պարիսպ, պատնէշ կամ պաշտպանական այլ կառույցներ: Մյուս կիրառութիւնը պարզապէս բնութագրում է տվյալ շինութիւնը՝ **ոչ ինչ կարէին առնել վասն անմատչելի ամրութեանն (300)**:

Ամրանալ – ամուր հիմքից է կազմված նաև **ամրանալ** բայը, որի ռազմական նշանակութիւնը ՆՀԲ-ում տրվում է առանձին ենթագլխաբառի տակ՝ «Ապաստան լինել յամուր տեղիս. յապահովի նստել. ապավինիլ»:

«Պատմութեան» մեջ վկայված օրինակը վերաբերում է Հայկի և Բելի ճակատամարտի դրվագին՝ մասնավորապես զորքերի դիրքավորմանը՝ **արքայն Տիտանեան զարհուրեցաւ և ի նոյն բլուր ... ելանէր, քանզի խորհէր ի մէջ ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն (36)**:

Բերդ – տերմինը վկայված է 11 կիրառութեամբ: Ըստ ՆՀԲ-ի բացատրութեան՝ «Շինուած բարձրապարիսպ ի վերնակողմն քաղաքի՝ իբրև ամրութիւն ... կամ ուրույն շինեալ աւան անառիկ՝ հանդերձ զօրօք և զինուք»: Ինչպէս տեսնում ենք, բացատրութեան մեջ շեշտվում է շինութեան ռազմական նշանակութիւնը: **Բերդ**-ը համանիշ է **ամրոց** և **ամուր** տերմիններին, մասնավորապէս այդ են վկայում Խորենացու երկում միննոյն Արտագերս շինութեան՝ **ամուր** և **բերդ** անվանումները՝ **որ եկեալ նստան շուրջ զբերդան Արտագերից (300), հանդերձ զանձիք անկաւ յամուրն Արտագերից (299)**, ինչպէս նաև հետևյալ օրինակում՝ **միննոյն շինութիւնը բերդ և ամուր կոչելը՝ և ընթացեալ իրով արամբք ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն, կապելով զամենայն արս, որ ի ներքս (229)**:

Բերդերը ռազմական նշանակությունից բացի ունեցել են նաև կալանավայրի գործառույթ⁴¹, որ հաստատվում է և Խորենացու երկում տեղ գտած մի շարք կիրառություններով՝ և զբազումս ի նախարարաց կանացն կալեալ ի բերդս բերդս տայր պահել (301), ընդ իւր ունելով զԽոսրով դնել յԱնուշն կոչեցեալ բերդին (321), զկնի մահուանն Արտաշրի լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն կոչեցեալ բերդի (329): Բերդ տերմինի «բանտ» իմաստը տարածված է և ժամանակակից հայերեն խոսակցական լեզվում: **Պարիսպ** – «մշտական» պաշտպանական կառույցների մեջ պետք է նշել և այս տերմինը՝ ըստ ՆՀԲ-ի բացատրության՝ «քաղաքորմ, պատուար քաղաքի. և ... բարձր որմ բերդի կամ ապարանի. ևս և պատնէշ պաշարման»: Վկայված է բավական մեծ հաճախականությամբ ըստ «Հաճախականության բառարանի»՝ ունի 19 կիրառություն: Սակայն «Համաբարբառում» **Պարիսպ** գլխաբառի տակ բերվում է ընդամենը 17 օրինակ. ընդ որում դրանցից մեկը ոչ թե **պարիսպ** գոյականի բառաձևն է, այլ **պարսպել** բայի, որը այս բառահոդվածում ընդգծված տրվում է որպես **պարիսպ**-ի բառաձև, թեև առանձին ներկայացված է համաբարբառի բառացանկում **պարսպեալ** և **պարսպեմ** գլխաբառերի օրինակներում (տե՛ս ստորև): Բնորոշ կիրառություններից են՝ և դրունս պղնձիս կանգներ ի միջոցի պարսպին (165), յաղագս ... շինելոյ զաւանն Բասենոյ և պատեալ պարսպաւ զՆոր քա- դաք (199, 98) և այլն:

Պարիսպ տերմինը կիրառված է նաև որպես պաշտպանական նկատառումներով կամ հանգրվանի նպատակով մարտական գործողությունների տարածքում տեղակայված «ժամանակավոր» կառույցի անվանում՝ իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ (303), (հմմտ. նաև ստորև բերվող

⁴¹ Հիշենք թեկուզ հոչակավոր Անհուշ//Անուշ//Անդմըն բերդը:

առագաստ տերմինի օրինակը՝ Իսկ Արտաշիսի հասեալի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն, ի կաշեայ և կտաւեայ պարսպին, էջ և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր (172):

Պարսպեմ – վկայված է 7 կիրառությամբ՝ **Պարսպե գբլուրն ... կտրեալ զքարինս մինչև ի յատակն բլրոյն** (165), և **պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ** (160), **փոքրագունիք պարսպեալ որմովք** (46): **Պարսպեալ** տերմինը կիրառված է նաև փոխաբերաբար՝ բնական ամրությունների կամ պատնէշների վերաբերյալ՝ **պատկերավորման նպատակներով, ինչպես ի բարձրագագաթանց պարսպեալ լեռանց** (36), և **անձեռագործ պարսպեալ Նեղոսի** (344):

Որմ(ն) – պաշտպանական կառույցների մեջ հիշատակվում է և **որմ կամ որմ տերմինը՝ ընդհանուր առմամբ 4 կիրառությամբ՝ և գրաստակերտն, գոր շինեաց ... փոքրագունիք պարսպեալ որմովք** (46), **Տնկէ և մայրի մեծ և որմովք ամրացուցանէ** (166), ի **հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին** (290) և այլն:

Պատուար – «Պատմության» մեջ վկայված է 4 կիրառությամբ՝ ըստ ՆՀԲ-ի՝ **հետևյալ իմաստով՝ «պատնէշ և որպիսի և իցէ ամրութիւն քաղաքին տեղոյ՝ շրջապատեալ ի ձև որմոյ», այսինքն՝ հոմանիշ է պարսպին և որմին: Վկայված օրինակներից են՝ **անդնդալիք հաստատեաց զհիմունս պատուարին** (339), **պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ** (160), ի վերայ **պատուարին եօթնետասն այր նետիւք հարեալ՝ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի** (308):**

Բանակ – այս տերմինը ժամանակակից հայերենում ունի «որևէ պետության զինված ուժերի ամբողջությունը» կամ «ընդհանրապես զորք» հիմնական իմաստները⁴², այսինքն՝ նկատի

⁴² Տե՛ս **Աղայան Էդուարդ**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Մանմար» հրատ., Եր., 2014, էջ 157: 43 Հոմանիշ է և ճամբար տերմինին, որ նույնպես կիրառված է «Պատմության» մեջ մեկ օրինակով (տե՛ս ստորև):

է առնվում անձնակազմը: Մինչդեռ հին հայերենում, մասնավորապես Խորենացու ժամանակաշրջանում **բանակ** իմաստը առավելապես կապվում է զորքերի տեղակայման վայրիև զորաշարժերի հետ, հմմտ. ՆՀԲ-ի բացատրությունը՝ «Միաբան բազմութիւն զօրու՝ ի չու, ի ճակատու, և ի կայանս. որպէս և կարաւան ուղևորաց. և տեղի իջևանելոյ, դադարք»⁴³: Նույն իմաստի հետ է կապվում և **բանակել** բայը (տե՛ս հաջորդիվ):

Խորենացու երկում վկայված է **բանակ** տերմինի 8 կիրառություն՝ **ի ձեռն թարգմանաց ձայնէ ի բանակն Արտաշիսի** (178), **արագ հասուցանելով ի բանակն իւր** (179), **ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր** (172), **ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն** (171), **յանկարծակի անկեալ ի բանակն** (307), **զնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ** (315) և այլն:

Բանակել – ՆՀԲ-ի բացատրությունն է՝ «բանակ հարկանել, իջևանիլ, ազանիլ, նստիլ», որ հաստատում է **բանակ**-ի վերը նշված իմաստները («տեղակայված զորք» կամ «զորքի տեղակայում, դիրքավորում»): Վկայված 7 օրինակներից են՝ **անդ զափամբ մօրին մեծի բանակի ի տեղուջ** (109), **անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերք գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյ** (177), **նսեմաւ ի վերայ դիւ-կանցն բանակէին** (172) և այլն:

Ճամբար – «Պատմության» մեջ կիրառված է մեկ օրինակով, **հոմանիշ է բանակին՝ «զորքերի տեղակայման կամ դադարի վայր» իմաստով՝ Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ, ի վերայ գետոյն Ախուրեան** (171):

Ջօրանիստ – նույնպես նշանակում է «զորքերի կամ կայազորի տեղակայման վայր» (ըստ ՆՀԲ-ի բացատրության՝ ա., գ. «ուր է նիստ և կայան զօրաց»), որ կարող է համընկնել նաև որևէ բնակավայրի հետ: Վկայված է մեկ օրինակով՝ **աճականական կիրառությամբ՝ որպէս զորքերի նստավայր**

ծառայող գավառի որոշիչ՝ **գայ հասանէ յաշխարհն Միջագետաց, պատահէ Աբգարու ի գորանիստ գաւառին Բուզնան,** այսինքն՝ «Բուզնան գորանիստ գավառում» (144): Ի տարբերություն **բանակ**-ի և **ճամբար**-ի, որոնք գորքերի ժամանակավոր տեղակայմանն են ծառայում՝ գորաշարժերի կամ մարտական գործողությունների ընթացքում, **գորանիստ**-ը կարող է լինել տվյալ ժամանակաշրջանում հիմնական գորակայան:

Ճակատ – այս տերմինին մանրամասն անդրադարձանք նախորդ՝ «Ռազմական գործողություններ և դրանց հետևանքներ» հատվածում, որտեղ առանձնացված են երեք իմաստային կիրառություն՝ 1. Ճակատամարտ,

1. Զորքի առաջամաս՝ ուղղված դեպի հակառակորդը, 3. Ավելի լայն իմաստով՝ «պատերազմ»⁴⁴: Որոշ կիրառություններում կարելի է առանձնացնել և ռազմագիտական առումով չորրորդ իմաստը՝ գորքի դիրքավորում կամ տեղակայում, որ կապվում է վերոբերյալ **բանակ**, **ճամբար** հասկացությունների հետ: Այս իմաստով վկայված է 6 կիրառություն **Ուր միսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ** (200), **ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, ... էլին և ի գորացն պարսից համատիք նոցա և խաղացին ի մեջ ճակատուցն** (303), **մտին ի մեջ ճակատուցն առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի** (303), **այնպէս երագ յերկարացն առեալ նիզակօք, դի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մտանել** (ն.տ.), **իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ** (ն.տ.) և այլն: Բերված բոլոր օրինակներում **ճակատ** տերմինը մատնանշում է հակառակորդ գորքերի դիրքավորումը:

Ճակատ առ ճակատ – մարտական գործողությունների ընթացքում գորքերի դիրքավորանն է վերաբերում նաև **ճակատ** տերմինի կրկնությամբ կազմված **ճակատ առ ճակատ**

դարձվածը՝ վկայված մեկ կիրառությամբ՝ **Եւ խմբեցաւ պատե-
րազմ ի դաշտն, որ կոչի Ձիրաւ և մատեան ճակատ առ ճակատ**
(«մոտեցան ճակատ-ճակատի») (303):

Թն – այս տերմինը նույնպէս կապվում է գորքերի դիր-
քավորման հետ՝ ի հակադրություն **ճակատի**՝ որպէս կենտրո-
նական գրոհող գորամասի: ՆՀԲ-ում **թն** բազմիմաստ բառի
իմաստների մեջ առանձնացված է և նրառազմական նշանա-
կությունը՝ **թն բանակի** ենթազլխաբառում՝ «կողմն և կողմն
գնդի զօրաց» բացատրությամբ: Այս իմաստով «Պատմության»
մեջ կիրառված է մեկ անգամ՝ մարտական գործողությունների
նկարագրության մեջ՝ **Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և
յառեակ թնսն էին, ի նա խառնեալ միանային** (171):

Առագաստ – այսպէս կոչված «շարժական՝ ժամանա-
կավոր» կառույցների մեջ պետք է նշել 5 օրինակով վկայ-
ված **առագաստ** բազմիմաստ բառի ռազմական իմաստով
մեկ կիրառությունը՝ որպէս շրջափակող միջոցի՝ **Իսկ Արտա-
շիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն ի
կաշեայ և կտաւեայ պարսպին, էջ և ի խորանի նորա բնակեցաւ
զայն զիշեր** (172):

Վահանափակ – այս տերմինը նույնպէս կիրառված է
«շարժական՝ ժամանակավոր» մարտական պաշտպանական
կառույցի իմաստով՝ ըստ ՆՀԲ-ի՝ «վահանապատ պատնէշ»:
Վկայված է մեկ օրինակով՝ **Իսկ յորժամ պարսիկքն զմերն
շրջէին՝ նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք
մտանէին, առ ոչ ինչ Վասելոյ** (303):

Դիտանոց – ռազմական կառույցի կամ բնական բարձր
դիրքավորման հետ է կապվում և մեկ օրինակով վկայված
դիտանոց տերմինը՝ հետևյալ կիրառությամբ՝ **իսկ Բել հեզ և
հանդարտ ամբոխի մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ
միոյ, իբրն ի դիտանոցի** (35):

Խորան– հին հայերենի այս բազմիմաստ բառը, որ ներ-
կայումս ավելի շատ ճարտարապետական և եկեղեցական
տերմինի արժէք ունի, Խորենացու երկում ներկայացված է իր

նախնական՝ «վրան, ժամանակավոր կտավե կամ մորթե տաղավար» իմաստով, որը և նշվում է ՆՀԲ-ում: **Խորան**-ի ռազմական նշանակությունը պայմանավորված էր գորքի տեղակայման վայրում ժամանակավոր կացարանի գործառույթով: «Պատմության» մեջ **խորան**-ը ունի երեք կիրառություն, որոնցից ռազմագիտական նշանակություն ունեն միայն երկուսը՝ արդեն հիշատակված՝ **էջ և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր** (172), ինչպես նաև՝ **թողլով նոցա զգանձս և խորանս, միայն կենդանի փախուցեալ մագապուր** (126) օրինակներում: Այս երկրորդ օրինակում **խորանները** («վրանները»)՝ գանձի հետ միասին դիտվում են որպես հնարավոր ռազմավարի մաս:

Այսպիսով, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ կիրառված ռազմական բառապաշարի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ քննված ոչ բոլոր բառամիավորներն են կիրառվել զուտ տերմինային արժեքով: Բայց իրենց բազմիմաստությամբ պայմանավորված այլևայլ գործածություններով դրանք կարող են լինել նաև տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր բառամթերքի արտահայտություն, ուստի արժեքավոր տեղեկություններ են պարունակում Խորենացու նկարագրած ժամանակաշրջանում ռազմական գործի և այն արտացոլող տերմինահամակարգի հարստության և կառուցվածքային առանձնահատկությունների մասին:

Լիանա Ս. Հովսեփյան - գիտական հետաքրքրությունների բնագավառներն են ընդհանուր լեզվաբանության, հայոց լեզվի պատմության, հայերենի տիպաբանական բնութագրի, լեզվական կառուցվածքի ձևային նկարագրության, մեքենական թարգմանության, համակարգչային լեզվաբանության ինդիքները:

**ԱՅՈՒՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՂՈՒԿԱՄԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ
ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Ղուկասյան Սևակ

Ղուկասի Ավետարանը Նոր Կտակարանում երրորդն է եւ հաջորդում է Մատթեոսի ու Մարկոսի Ավետարաններին՝ բաղկացած է 24 գլուխներից: Ղուկասի Ավետարանի խորհրդանիշն է ցուլը, գույնը՝ կարմիրը:

Ղուկասի արեւելահայերեն Ավետարանում կա 143 հարցական նախադասություն, իսկ արեւմտահայերենում՝ 176: Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ արեւելահայերեն զգալի պատմողական նախադասություններ արևմտահայերենում արտահայտված են հարցականով:

Ղուկասի Ավետարանում հարցեր են տալիս Հիսուս, Մարիամ աստվածածինը, Հովհաննես Մկրտիչը, Հիսուսի աշակերտները, ժողովուրդը, փարիսեցիները, Պիղատոսը եւ այլք:

Այստեղ էլ, մյուս երկու Ավետարանների պես, սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, եւ նոր չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այս Ավետարանում նույնպես ավետարանչի խոսքը լինում է կարճ՝ բաղկացած երկու, երեք կամ չորս բառերից եւ երկար՝ բաղկացած մեկ եւ ավելի նախադասություններից: Կարճ են հետեւյալ օրինակները՝ «Պետրոսն ասաց-Պետրոս ըսաւ անոր» (12,41), «Այգեգործին ասաց-Ուստի ըսաւ այգեպանին» (13, 7), «Եւ Յիսուս ասաց - Եւ Յիսուս ըսա» (8, 45), «Յիսուս նրան ասաց-Յիսուս ըսաւ անոր» (18, 19) եւ այլն: Իսկ ավելի երկար են հետեւյալները՝ «Եւ Յովհաննէսն իր աշակերտներից մի երկուսին իր մօտ կանչեց ու նրանց ուղարկեց Տիրոջ մօտ՝ ասելու-Յովհաննէսն ալ իր աշակերտներեն երկուքը իրեն կանչեց եւ զանոնք Յիսուսին դրկեց՝

ըսելով» (7,19), «Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը, այդ տեսան, ասացին – Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, իմացան, ըսին անոր» (9, 54) եւ այլն:

Ինչպէս մյուս երկու՝ Մահթէոսի և Մարկոսի Ավետարաններում, այնպէս էլ Ղուկասինում գործածված են տարբեր տեսակի հարցական նախադասություններ: Այստեղ նույնպէս ինչուոր հարցումները բոլորից շատ են՝ ընդհանուր առմամբ՝ 113 հատ, հետո՝ այո-ոչ-երն են՝ ընդհանուր առմամբ՝ 28 հատ, հետո՝ եղանականիշները՝ ընդհանուր առմամբ՝ 17 հատ եւ վերջում՝ ընտրանքայինները՝ ընդհանուր առմամբ՝ 9 հատ:

Այո-ոչ հարցումներից 18-ը մենաբեւեռ են, որոնք ունեն պարզ եւ բարդ կառուցվածքներ՝ համադասական ու ստորադասական հարաբերություններով, իսկ մյուսները՝ 10 հատը հանդես են գալիս բազմաբեւեռների կազմում՝ երկու այո-ոչ և ինչուոր ու այո-ոչ հարցումների տեսքով:

Մենաբեւեռ այո-ոչ հարցումներ

Ինչպէս արդէն ասել ենք, Ղուկասի Ավետարանում մենաբեւեռ այո-ոչ հարցական նախադասությունները 18 հատ են, որոնք ունեն պարզ եւ բարդ կառուցվածքներ՝ համադասական եւ ստորադասական հարաբերությամբ:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1. Եւ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խօսքերի վրայ ու ասում. «Մա Յովսեփի որդին չէ՞» - Ամենքը անոր համար կը վկայէին ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ ու կ'ըսէին. «Ասիկա Յովսեփին որդին չէ՞» (4, 22):

2. Յիսուս նրան ասաց. «Յուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու որդուն» - բայց Յիսուս ըսաւ անոր. «Յո՛ւդա, համբուրելո՞վ կը մատնես Որդին մարդոյ» (22, 48):

3. Երբ նրա շուրջը գտնուողները տեսան եղածը, նրան ասացին. «Տէր, որով նրանց հարուածե՞նք» - Երբ անոր բոլորտիքը տեսան ինչ-որ պիտի ըլլար, ըսին անոր. «Տէր, թուրով զարնե՞նք» (22, 49):

4. Եւ ամենքը միասին ասացին. «Ուրեմն դու Աստծու Որդի՞ն ես» - Ամենքը ըսին. «Ուրեմն դու Աստուծոյ Որդի՞ն ես» (22, 70):

5. Եւ Պիղատոսը հարցրեց նրան եւ ասաց. «Հրեաների թագաւորը դո՞ւ ես» - Պիղատոս հարցուց անոր ու ըսաւ. «Հրեից թագաւորը դո՞ւն ես» (23, 3):

6. Եւ մինչ դեռեւս ուրախութիւնից չէին հաւատում եւ զարմանում էին, ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան ունե՞ք» - Երբ տակաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար եւ զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց. «Ուտելիք մը ունե՞ք հոս» (24, 41):

բ) Համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Եւ դառնալով կնոջ կողմը՝ Սիմոնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջը. մտայ քո տունը, ոտքերիս համար ջուր չտուիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց իմ ոտքերը եւ իր մազերով սրբեց...» - ու դառնալով դէպի այնն ինը՝ ըսաւ Սիմոնին. «Կը տեսնե՞ս այս կինը: Ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա իր արցունքովը ոտքերս թրջեց եւ իր մազերով սրբեց:...» (7, 44):

2. Իսկ կախուած չարագործներից մէկը հայհոյում էր նրան եւ ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ եւ մեզ» - Այն կախուած չարագործներէն մէկը հայհոյութիւն կ'ներ անոր ու կ'ըսէր. «Եթէ դուն Քրիստոսն ես, ազատէ քու անձդ ու մեզ ալ» (23, 39):

3. Եւ իր վրայ եկած քահանայապետներին, տաճարի իշխանավորներին եւ ծերերին ասաց. «Ինչպէս ակազակի՞ վրայ էք

գալիս սրերով ու մահակներով. միշտ ձեզ հետ էի տաճարում, եւ դուք ինձ վրայ ձեռք չերկարեցիք. սակայն այս է ձեր ժամը եւ խաւարի իշխանութեան գորութիւնը» - Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ. «Իբր թէ ակազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով: Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ եւ ինձի ձեռք չզարկիք, բայց այս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը» (22, 52-53):

գ) Մէկ եւ երկու ստորադաբական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ ճանապարհ էր ընկել դէպի Երուսաղէմ, մէկը նրան ասաց. «Տէ՛ր, սակաւաթի՞ւ են նրանք, որ փրկուելու են» - Մէկը ըսաւ անոր. «Տէ՛ր, քիչուո՞ր են անոնք որ պիտի փրկուին (13, 22, 23):

2. Նրա ընկերը նրան սաստելով՝ պատասխան տուեց եւ ասաց. «Աստուծոց չէ՞ս վախենում, դու, որ նոյն պատժին ես կրում...» - Իսկ միւսը զանհկա յանդիմանալով՝ ըսաւ. «Դուն Աստուծմէ չէ՞ս վախնար, որովհետեւ նոյն դատապարտութեան մէջ ես...» (23, 40):

3. Իսկ Պիղատոսը, երբ Գալիլիայի մասին լսեց, հարցրեց, թէ այդ մարդը Գալիլիացի՞ է - Պիղատոս երբ լսեց Գալիլիայի համար, հարցուց թէ այդ մարդը Գալիլիացի՞ է...» (23, 6):

4. Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Կարծո՞ւմ էք, թէ այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկուեցին, աւելի մեղաւոր էին քան բոլոր գալիլիացիները...» - Յիսուս ըսաւ անոնց. «Կը կարծէ՞ք թէ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներ էն աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին...» (13,2):

5. Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «... Կամ նրանք՝ այն տասնութ մարդիկ, որոնց վրայ Սիլովամում աշտարակը փուլ եկաւ եւ սպանեց նրանց, կարծո՞ւմ էք, թէ աւելի մեղապարտ էին,

քան Եղուսադէմում բնակուող բոլոր մարդիկ...» - Յիսուս ըսաւ անոնց. «... Կամ թէ տասնութը հոգին, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ զանոնք մեռոց կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին...» (13, 2, 4):

6. Եւ Տէրն ասաց. «...Կարծում էք, թէ երկրին խաղաղութի՞ն տալու եկայ. ոչ, ասում եմ ձեզ, այլ բաժանում. որովհետեւ մէկ տան մէջ այսուհետեւ հինգ հոգի իրարից բաժանուած պիտի լինեն. երեքը երկուսի դէմ, եւ երկուսը՝ երեքի...» - Տէրը ըսաւ. «...Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՞ն ընելու եկայ. ձեզի կ'ըսեմ. Ոչ, հապա բաժանում: Վասն զի ասկէ ետք մէկ տան մէջ հինգը իրարմէ բանուած պիտի ըլլան, երեքը՝ երկուքէն ու երկուքը՝ երեքէն...» (12, 42, 51-52):

Վերջին օրինակում «Կարծում էք, թէ երկրին խաղաղութի՞ն տալու եկայ» հարցումը նախադասության մյուս մասից անջատված է կետով, այնինչ մենք կարծում ենք, որ այն շատ ինքնուրույն միավոր է եւ պետք էր նրանից հետո վերջակետ դրվեր: Այս է պատճառը, որ այս հարցումը այստեղ դիտարկեցինք:

դ) Ստորադասական եւ համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը եւ Յովհանէսը, այդ տեսան, ասացին. «Տէ՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, եւ երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց» - Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, իմացան, ըսին անոր. «Տէ՛ր, կ'ուզե՞ս որ ըսենք ու երկնէն կրակ իջնէ ու սասկացնէ զանոնք...» (9, 54):

2. Իսկ Մարթան, որ զբաղված էր տնային շատ գործերով, եկաւ կանգնեց նրա մօտ եւ ասաց. « Տէ՛ր, քեզ փոյթ չէ՞, որ քոյրս ինձ մենակ է թողել ծառայութեան մէջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ» - բայց Մարթա սպասաւորութիւնով շատ զբաղված էր: Եկաւ անոր քով ու ըսաւ. «Տէ՛ր, քու հոգո՞ւ չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ

թողուց սպասաւորութեան մէջ. ուստի անոր ըսէ, որ ինձի օգնէ» (10, 40):

ե) Տարակառուցվածք հարցում.

1. Յիսուս նրանց պատասխանեց եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ ինչ արեց Դաւիթը, երբ քաղց զգաց ինքը եւ նրանք, որ նրա հետ էին. թէ ինչպէս նա մտաւ Աստծու տունը, կերաւ առաջաւորութեան հացը եւ տուեց նրանց, որ հետն էին. մինչդեռ, բացի քահանայապետներից ոչ ոք չէր թույլատրուած ուտել այն» - Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ. «Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթին ըրածը, երբ անօթեցան ինք եւ անոնք որ իրեն հետ էին: Ինչպէս անիկա Աստուծոյ տունը մտաւ եւ առաջաւորութեան հացերը առաւ ու կերաւ եւ տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, որոնք ուրիշ մարդո՛ւ օրինաւոր չէր ուտել, բայց միայն քահանաներուն» (6, 3-4):

Բազմաբեւեռ այո-ոչ հարցումներ

Այս բաժնում քննարկվելիք հարցումները երկբեւեռ են, որովհետեւ սրանք բաղկացած են երկու հարցական նախադասություններից, երկուսը՝ երկու այո-ոչ հարցումներից, իսկ վեցը՝ ինչու-որ եւ այո-ոչ հարցումներից: Այս նախադասությունների կազմում կան 10 այո-ոչ հարցումներ:

Ահա դրանք.

ա) Երկու այո-ոչ-ից բաղկացած հարցումներ.

1. Եւ Տէրն ասաց. «...Իսկ Աստուած արդարութիւն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք գիշեր եւ ցերեկ աղաղակում էին. եւ նրանց հանդէպ միայն համբերատա՞ր կը լինի...» - Տէրը ըսաւ. «...Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն, թեւ երկայնամիտ ալ ըլլայ...» (18, 7):

2. Տէրը նրանց պատասխանեց եւ ասաց, «Կեղծաւորն է՛ր, ձեզնից իւրաքանչիւր ոք շարաթօ օրով իր եզը կամ էջը մտուրից չի՞ արձակում եւ չի՞ տանում ջուր տալու...» - Այն ատեն Տէրը պատասխան տուաւ անոր ու ըսաւ. «Կե՛ղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շարաթօ օրը իր եզը կամ էջը մտուրէն չա՛րձակէր, որպէսզի տանի ջուր տայ...» (13, 15):

բ) Ինչու-որ եւ այո-ոչ հարցումներից կազմված երկբևեռ հարցական նախադասություններ.

1. Եւ նա պատասխանեց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտէի՞ք, թէ ես Հօրս տանը պէտք է լինեմ» - Յիսուս ըսաւ անոնց. «Զիս ինչո՞ւ կը փնտրէիք. չէի՞ք գիտեր թէ ինձի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ» (2, 49):

2. Յիսուս պատասխանեց եւ ասաց. «Սրանք տասն էլ չմաքրուեցի՞ն. իսկ այդ, իննը ո՞ւր են, որ չվերադրձան՝ փառք տալու համար Աստծուն, բացի միայն այս օտարազգի մարդոց» - Յիսուս ըսաւ. «Զէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ այն ինը ո՞ւր են: Այս օտարազգիէն զատ ուրիշներ չգնուեցա՞ն» (17, 17-18):

3. Եւ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. նա դարձաւ եւ ասաց նրանց. «Կամ ո՞ր թագաւորը, եթէ գնայ պատերազմելու մի այլ թագաւորի դէմ, նախ չի նստի եւ խօրհի, թէ տասը հազարով կը կարողանա՞յ դիմադրել նրան, որ իր վրայ քսան հազարով է գալիս...» - Իրեն հետ շատ ժողովուրդ կ'երթային եւ դառնալով անոնց ըսաւ. «Կամ թէ ո՞ր թագաւորը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալէ առաջ չի նստիր ու խորհիր, թէ արդէօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ...» (14, 25, 31):

4. Եւ ժողովարանում մի մարդ կար, որին բռնել էր մի պիղծ դէւի չար ոգին. սա բարձր աղաղակեց եւ ասաց. «Թո՛ղ տուր մեզ, Յիսուս նազովրեցի, ի՞նչ ես ուզում մեզնից. մեզ կորստեան մատնելո՞ւ եկար. գիտենք, թէ ով ես, Աստծո Սուրբն ես դու» -

ժողովարանին մեջ մարդ մը կար, որ պիղծ դելի ոգի ուներ, որը մեծ ձայնով մը աղաղակեց, ըսելով. «Թո՛ղ տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազովրեցի, միթե՛ մեզ կորսնցնելո՞ւ եկար, գիտեմ ո՞վ ես, Աստուծոյ Սուրբը» (4, 33-34):

5. Եւ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. նա դարձաւ եւ ասաց նրանց. ...Ձեզնից ո՞վ, եթէ կամենայ աշտարակ շինել, նախ նստելով չի հաշուի իր ծախսերը, թէ աւարտելու համար բաւական դրամ ունի՞, որպէսզի, գուցէ երբը հիմնը դնի եւ չկարողանայ աւարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել եւ ասել, թէ՛ այս մարդը սկսեց կառուցել եւ չկարողացաւ աւարտել...» - իրեն հետ շատ ժողովուրդ կ'երթային եւ դառնալով՝ անոնց ըսաւ. «...Վասն զի ձեզմէ ո՞վ եթէ աշտարակ մը շինել ուզէ, առաջ չի նստիր ու հաշիվ ըներ ծախքը, ճշտելու համար թէ զանիկա լմնցնելու կարողութիւն ունի՞. որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բոլոր տեսնողները սկսին զինք ծաղրել եւ ըսէ թէ այս մարդը սկսաւ շինել ու չկրցաւ լմնցնել...» (14, 25, 28-30):

6. Եւ Տէրն ասաց. «...Իսկ ձեզնից ո՞վ է, որ հողագործ կամ հովիւ ծառայ ունի, երբ սա ագարակից տուն մտնի, նրան կ'ասի, իսկոյն՝ անցիր սեղան նստիր. այլ նրան չի՞ ասի՝ պատրաստի՛ր, ինչ ընթրելու եմ, եւ գօտի կապած՝ ծառայի՛ր ինձ, մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ ապա կ'ուտես եւ կը խմես դու...» - Տէրը ըսաւ. «Բայց ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ ունենայ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա երբ ագարակէն տուն մտնէ, շուտով ըսէ անոր թէ՛ Անցիր սեղան նստէ: Հապա չը՞սեր անոր թէ՛ պատրաստէ իմ ընթրիքս ու գօտիդ կապած ինձի սպասաւորութիւն ըրէ, մինչեւ ոտեմ ու խմեմ ու ետքը դուն ալ կեր ու խմէ...» (17,6, 7)

Ամփում

Ղուկասի արևելահայերեն Ավետարանում կա 143 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում 176: Այս Ավետարանում գործածված են տարբեր տեսակի հարցական նախադասություններ: Բոլորից շատը ինչու-որ հարցումներն են՝ ընդհանուր առմամբ՝ 113 հատ, հետո՝ այո-ոչ-երն են՝ ընդհանուր առմամբ՝ 32 հատ, հետո՝ գալիս են մյուսները: Այո-ոչ հարցումներից 18-ը մենաբեւեռ են, որոնք ունեն պարզ եւ բարդ կառուցվածքներ՝ համադասական և ստորադասական հարաբերություններով, իսկ մյուսները՝ 14-ը՝ հանդես են գալիս բազմաբեւեռների կազմում՝ մի կողմից ինչու-որ եւ մյուս կողմից եղանականիշ հարցումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
Գրիգորյան Գայանե - Խոսակցական լեզվում վաղակատար դերբայի չ-ի անկումը շրջուն շարադասության ժամանակ (փորձառական հետազոտություն.....	7
Խաչատրյան Օֆելյա - Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի իմաստաբանական վերլուծություն (հոմանիշներ).....	14
Խաչատրյան Օֆելյա - Վերլուծական բայերի գործածությունը Հովհան Իմաստասեր Օձնեցու երկերում.....	29
Հակոբյան Ֆրիդա - Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները.....	43
Հակոբյան Ֆրիդա «Արևելահայերենի ազգային կորպուսի» կառուցվածքը և ընդգրկում.....	51
Հակոբյան Ֆրիդա -Կորպուսային լեզվաբանության կիրառական ոլորտները.....	61
Հակոբյան Ֆրիդա - Տեքստի էլեկտրոնային սրբագրման խնդիրներ.....	69
Հակոբյան Ֆրիդա - Ժամանակակից հայերենի բառակազմության ձևային նկարագրության խնդիրներ.....	77
Հովսեփյան Լիանա - Բայասեռի կարգը գրաբարում	88
Հովսեփյան Լիանա - Ռազմական բառապաշարը Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց» երկում.....	99
Ղուկասյան Սևակ - Այո-ոչ հարցումները Ղուկասի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում.....	175

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Գ

Ձևավորումը և էջադրումը՝

Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի